

ՀԱՅՐԵՆԻ  
ԵՐԳ. Ա. ԲԱՐ

1

ՀԱՅՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԽՈՍՔ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСКУССТВ  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

МИГРАН ТУМАДЖАН

АРМЯНСКИЕ  
НАРОДНЫЕ  
ПЕСНИ

1

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1972


Հ Ա Յ Ո Ւ Խ Ո Ւ Յ Ո Ո Հ Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Խ Ո Ւ Յ Ո Ւ Յ  
ԱՐՎԵՍՏԻ ԲԱՆԱՏՈՒՄ  
ՀԵՂԻՆԻՑԻ ԵՎ ԱՐԴԻՇՎԻ ԲԱՆԱՏՈՒՄ, ԻՆԱՏԻՏՈՒՄ

## ՄԻՀՐԱՄ ԹՈՒՄԱՃԱՆ

Տ Տ Լ Ի Շ Կ  
Հ

# ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳ ՈՒ ԲԱՆ

1




Հ Ա Յ Ո Ւ Խ Ո Ւ Յ Ո Ո Հ Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Խ Ո Ւ Յ Ո Ւ Յ  
ԱՐԴԻՇՎԻ 1972

«Հայրենի երգ ու բան» հավաքածուն ընդդրկելու է Արևմտյան Հայաստանի տարբեր շրջանների մոտավորապես 1000 մաղովրդական երգ: Ներկա հատորը պարունակում է Բութանիայի շրջանի երգերը, որոնց կցվում է Խզմիրի շրջանից մի փոքր հավելված Երգերն ունեն գեղարվեստական ու պատմա-ազգագրական նշանակություն, հրատարակում են առաջին անգամ: Գրում զետեղված են հեղինակի առաջարարաններն ու ծանոթագրությունները:

Խեմբարակարգ

Ո. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.



ՄԻՀՐԱՅԻ ԹՈՒՄՈՎԱՆՅ



## Ե Ր Կ Ա Ւ Խ Ո Ռ Ս Գ

Ներկա ժողովածուի հնելինակ, երածշատագետ-քանահավաք Միհրան Թումանանը կոմիտասի «հինգ սաներից» մեկն է, նա իր վրա զգացել է մեծ կոմպազիտորի խնամքն ու զուրգութաճը և նրանից ներշնչված՝ նվիրվել է հայ ժողովրդական երածշատուրյանը:

Մ. Թումանանը ծնվել է 1890 թ. հոկտեմբերին, Կյուրինում, կրությունն ստացել է Կ. Պոլսում: 1910—1915 թվականներին երգել է Կոմիտասի հնչակավոր «Դուսան» երգչախմբում և մասնակցել նրա մասնավոր դասրեքրացին, որի հայտակն էր պատրաստել հայ երածշատուրյան գործիչներ:

Սուաշին համաշխարհային պատերազմի տարիներին գրկվելով իրենց անվանի ուսուցչից, անցնելով պատերազմի դաժան համֆաներով ու ապրելով նրա արհավիրեները, Կոմիտասի սաներն իրար վերագուսան զինադադարից հետո միայն, 1918-ին: Նրանք խանդավառուրյամբ ձեռնարկեցին հայկական երածշատուրյան, հայտապես իրենց ուսուցչի ստեղծագործուրյունների տարածմանը. կազմակերպեցին երգչախմբեր Պոլսում, Աղանայում, Իզմիրում ու ավելին համերգներ, հաստարակեցին երգարաններ, որնց հասույրով Փարիզում լրացրին իրենց երածշատական ուսան քերին:

1923 թվականին կոմիտասյան հինգ սաները ցրվեցին տարբեր երկրներ, նրանցից յուրաքանչյուրն ընթացավ իր ընտան ուղիով: Միհրան Թումանանը մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ և ամերիկահայ գաղուրում զործունեաւրյուն ծավալեց: Խմբավարական աշխատանքին զուգընթաց՝ նա զբաղվել է Արևմտյան Հայաստանի տարբեր զավաններից հրաշեռվ փրկված ու Ամերիկա ապաստանան հայերից ժողովրդական երածշատուրյան նմուշներ հավաքելով ու ձայնագրելով: Շուրջ հառասան

տարվա համբերատար ու չանաղիր աշխատանիլ շնորհիվ Մ. Թումանանք կազմեց «Հայրենի երգ ու բան» հավաքածուն:

Հավաքածով հեղինակը համեստուեն իրեն հեռու է համարում նյութերի մասնագիտական ուսումնասիրուրյուններից և վերլուծումներից: «Քայց և այնպես, քող անհամեստուրյուն շնկատվի, —ավելացնում է նա, —երե ասենք, քե մենք ամենայն գիտակցուրյամբ, նվիրումով ու խանդավառուրյամբ ենք մոտեցել մեր մշակույրի այս ավանդներին, մեր ուժերի ներած շափով նրանց պատմական շղրայի գեր մի բանի օղակները կորսադից փրկելու համար»:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում նա անկարող եղավ իր արժեշտավոր հավաքածուն հրատարակուրյան պատրաստել: Թումանան ասում է, որ «այս աշխատուրյունը կատարված է արտակարգ ու աննպաստ պայմաններում: Անհրաժեշտ տվյալներ, կանոնավոր կյանք, կանոնավոր ժամանակ իսկ զոյտուրյուն չեն ունեցելու: Օգնուրյան ձեռք մեկնեց նրան հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, որտեղ և Գիտուրյունների ակադեմիայի Արվեստի և Հնագիտուրյան ու ազգագրուրյան ինստիտուտների համակողմանի օգնուրյամբ նա հնարավորուրյուն ստացավ «Հայրենի երգ ու բան»-ը մաս-մաս տպագրուրյան պատրաստել և հանձնել ընթերցադների ուղագրուրյանը:

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏ

## ՆԵՐԱՅՈՒԹ ՈՒԿԱՆ

Ժողովրդական երկ կամ ասացվածք ենք համարում այն ամենը, ինչ որժ ժողովուրդը հավաքականորեն իր սրտից ու մտքից քամել կամ խտացրել է իր առօրյա ապրումների ընթացքում, ավանդականության կնիքը դնելով վրան:

Հայ գրավոր դպրության մեջ դիզված հնագարյան երգերը, սկսած Գողթան երգերից մինչև միջնադարյան տաղերն ու գանձերը, և քրիստոնեական կրոնի շուրջ հյուսված ծիսական երգերն ու շարականները, որ ի սկզբանն անհատական ստեղծագործություններ են և որոնց մի մասի հեղինակներն իսկ ծանոթ են, չենք համարձակվում անվերապահորն յողովրդական համարել: Բայց գդլար է կոչել նաև անհատական ստեղծագործություններ, քանի որ գրանց մեջ տեսնվող բազում ոճեր ու ասություններ գեռ մինչև այսօք էլ գոյատեսում են անգիր վիճակում, այսինքն ամրապնդված են բարբային մի շաղախով, որ դիմանում է դարերի փորձությանը:

Մենք միշտ այն համոզումն ենք ունեցել, թե այդ անհատական ստեղծագործությունները հավաքականի հետ կապված են այնպիսի սերտ կապով, որ հաճախ կարելի չէ սկզբնական աղբյուրը ճշտելու փորձն իսկ անել: Ճիշտ է, թե հավաքականությունը, բազմությունը չէ զրանց ստեղծագործովը կամ սկիզբը: Բայց այդ ստեղծագործություններն էլ հավաքականության եռենի կողմէ կաթսացի մեջ տարրալուծվելով, մի հյուսվածք են ստացել, որն այս սեփականություն չի ճանաչում:

Այս անսեփական հյուսվածքը, թող որ մասամբ, ժամանակի և տեղի սատիճանական աղքեցություններից մաշվել է, բայց չի անհետացել, որովհետև հյուսվածքը ինքնին, ժողովրդի ընազդական իմաստությամբ, չափված ու ձևաված է իբրև մի խարիսխ մարդկային համայնական հոգու բյուրադան հողումներին. խարիսխ, որը փոփոխությունների կամ

տարվա համբերատար ու չանաղիր աշխատանիլ շնորհիվ Մ. Թումանանք կազմեց «Հայրենի երգ ու բան» հավաքածուն:

Հավաքածով հեղինակը համեստուեն իրեն հեռու է համարում նյութերի մասնագիտական ուսումնասիրուրյուններից և վերլուծումներից: «Քայց և այնպես, քող անհամեստուրյուն շնկատվի, —ավելացնում է նա, —երե ասենք, քե մենք ամենայն գիտակցուրյամբ, նվիրումով ու խանդավառուրյամբ ենք մոտեցել մեր մշակույրի այս ավանդներին, մեր ուժերի ներած շափով նրանց պատմական շղրայի գեր մի բանի օղակները կորսացից փրկելու համար»:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում նա անկարող եղավ իր արժեշտավոր հավաքածուն հրատարակուրյան պատրաստել: Թումանան ասում է, որ «այս աշխատուրյունը կատարված է արտակարգ ու աննպաստ պայմաններում: Անհրաժեշտ տվյալներ, կանոնավոր կյանք, կանոնավոր ժամանակ իսկ զոյսուրյուն չեն ունեցելու: Օգնուրյան ձեռք մեկնեց նրան հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, որտեղ և Գիտուրյունների ակադեմիայի Արվեստի և Հնագիտուրյան ու ազգագրուրյան ինստիտուտների համակողմանի օգնուրյամբ նա հնարավորուրյուն ստացավ «Հայրենի երգ ու բան»-ը մաս-մաս տպագրուրյան պատրաստել և հանձնել ընթերցագների ուշագրուրյանը:

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏ

Նույնիսկ խեղաթյուրումների հնիքարկվելով հանդերձ, չի ոչնշանա այնքան ժամանակ, որքան ժողովուրդը կողյատելի:

Բանահյուսությունը, իր ընդարձակ առումով, ժողովուրդի ապրած կյանքի խելական հայելին կարելի է նկատել: Անցյալում գրավոր պատմությունը, դժբախտաբար, ժամ է եղել: Լայնորեն մատուցված է թաղավորների «հաղթության» կամ «պարտության» անվերջանակի մի շաբան: Դեռ վերջերս է, որ սկսված է նշանակություն արվել անթագակիր ու արհամարհաված, և բազմիցս հալածված ու շահագործված ժողովրդին, նրա ապրելակերպին, նիստ ու կացին:

Հայ ժողովուրդը, գարերի ընթացքում, զրեթե կա ու չկա մեր զրավոր պատմության մեջ: Արտաքին ու ներքին իշխողների ձիերի սմբակի տակ տրորվել ու տրորվել է նա: Եվ ի հեճուկու այս բոլոր շարշարանքների ու հալածանքների, իր առօրյա համեստ կանքի ընթացքում կառչել է իր պարզ ու անպահույց հոգին ցոլացնող ավանդներին, իր երգերին, դրանցից առնելով և դրանցով ամբապնդելով իր զոյատեման ուժը:

Մեր ժողովրդի զարավոր մշակութիւն այս փշքանքների լեզուն լսելով, մեր ավերակների տակ մնացած չարդուիշշուր հարստությունները միավորելու և սրանցով մեր սրտերի արտք մշակելու, մեր տները շեն պահելու, մեր ժառանգությանը տեր կանգնելու և ցամաքած ազրյունների տեղ գետակներ հոսեցնելու հեթիաթային բանալին չկորցնելու մի ճիգ է միայն այս հավաքածուն: Ե՞րբ, ո՞ւր է ինչպես զոյացալ այս:

ՆԵՐԿԱ ՀԱՎԱՔԱԾՈՒԻԻ ԳՈՅՑԱՅՄԱՆ ԲՆԴՀԱՆՈՒԻՐ ԲՆԹԱՅՑՔԸ

Ե՞րբ:

Բանահյուսական մի շարք նյութեր՝ հանելուկ, առած, մանկական խաղեր, երգերի խոսքեր հավաքելու փափառքը մեր պատանեկան օրերից է սկսվում:

Սկզբնապես երգերի եղանակները հավաքելու միտք չենք ունեցել, քանի որ քիչ թե շատ ելքոպական նոտագրություն կարդալու և սոլֆեզիոնի վարժություններ անելու տարրական պատրաստություն հավել ունեինք, երբ ընկերուն՝ Վարդան Սարգսյանի հետ, իրեն երգ սիրող, մասնակցում էինք Խակուտարի երգչախմբին:

Այդ օրերին էր (1910-ին), որ Կոմիտաս վարդապետը Պոլիս էր եկել: Անմիջապես բոլորվեցինք շուրջը: Պոլիս, եղմիք և եղիպառս տված նրան համերգներով արդեն հոգեկան տեղաշարժ էր կատարվել Սրբամայան Հա-

յաստանի մինչև իսկ չեռավոր զբուղերի անկյուններում: Այլևս անկարելի էր այդ հրաշբով շարպել: Կոմիտասի շրմոնքներից կախված, փեշերին բավկացներ, որ մեզ «կերտառ», «կուտ տա»: «Կերակրեց» մեզ ասատորեն, շրմա տարի մասնավորապես ուսուցանելով երաժշտական հիմնական պիտակիքներ, նաև հերկելով մեր սիրտը և հատիկ-հատիկ սերմեր նետելով: 1914-ին արդեն սկսել էինք «ճովողել»: Փոքրիկ մանկական երգեր էինք գրում և նիկողոսյան վարժարանի մանկապարտեղի փոքրիկ-ների հետ վարժություններ անում:

Այդ օրերին էր (1914-ի գարնանը), որ իր սաները, որոնք տարիներ հետո «Կոմիտաս վարդապետի հինգ սաներ» պիտի կոչվեին, հայտնեցին իրենց փափազը հիմնելի հայ երաժշտանոցին ծառայության նիշրվելու: Կոմիտասի խանգամավառությանը չափ ու սահման չկար այլևս: Խոշոր-խոշոր ծրագրեր, երեակայական մեծամեծ դդյակներ...

Այդ օրերին էր գարձյալ, որ Կոմիտասը պատրաստվում էր Փարիզի միջազգային երաժշտական համաժողովին մասնակցելու: Պիտի զնար և մեզ համար ուսումը շարունակելու տեղ պատրաստեր հարկ եղած բոլոր միջոցներով:

Բայց շաբաթը ուրբաթից առաջ եկավ: Ընդհանուր պատերազմ, ավելի... Այլ մանավանդ անդառնալի կորուստներ, ֆիզիկական ու հոգեկան ջարդեր... Զարդումիշուր վիճակի մեջ, երբ իր սաները Պոլսի հասան վերջապես, աղաւնին արդեն իր բույնը կորցրած, Փարիզի մի անկյունում էր ծվարում: Իր սաները, սակայն, չուղենակով հակատագրական հուսաւեռուների ենթարկվել, զանազան քաղաքների մեջ համերգներ տալով, մի փոքրիկ զումար պատրաստեցին ու իրենց նախնական ծրագրերի իրականացման նպատակով 1920-ին մեկնեցին Փարիզ: Այստեղ էլ շարաթը ուրբաթից առաջ եկավ և սաները ցրվեցին այս ու այն կողմ, այնտեղ, ուր կյանքի ալեկոծյալ նավակը քշում էր նրանց:

Փարիզի մեր ուսանողական շրջանում է (1920—1923), որ առաջին անգամ նոտագրել եմ բանահավաք Տիգրան Զիթունու երգած ավելի քան 60 երգերը: Հորս հանկարծական մահվան պատճառով շանացել եմ փուլով հասնել մեր տուն, Պոլս: Սակայն բաղաբական վայրի կերպումների հետևանքով, Բոլղարիայում կանգ եմ առել ավելի քան երեք ամիս: Այս միջոցին Սոֆիայում և Ֆիլիպիում հանդիպել եմ բինկյանցի, ակնցի և արմատանցի տիկինների, որոնցից կարողացել եմ քաղել հավաքածուիս ամենափայլուն էջերից մի քանիսը:

Ինձ թվում է, թե այդ ժամանակ, 1922—1923 թվականներին է

սկսվում իմ «Հիվանդությունը»: Նույն տարին՝ 1923-ին, արդեն նետվել եմ հեռավոր Ամերիկայի ափերը: Մի պահ ինքնամփոփած մնալուց հետո, Պոլսից, Եղիպատոսից, Աղանացից, Իզմիրից ինձ պես այդ ափերը նետված աշակերտներիս խնդրանքով «Հայերգ» անունով մի երգչախումբ կազմեցի և, զրեթե կանվեցի այդ խմբի աշխատանքով, հաղիկ ժամանակ գտնելով զնալու մի քանի մամիկների մոտ և իրենց զիացածը հավաքելու: Ավելի քան 6—7 տարի այս աշխատանքը կատարեցի սիրով, թե՛ս հոգնությամբ: Վերջապես 1930-ական թվականներին երգեր հավաքելը դարձավ իմ զլխափոր զրագմունքը:

Սյու օրերից հետո, երեսուն և ավելի տարիներ ի վեր և մինչև այս բարերաստիկ օրերս, հավաքել ու դնել հավաքում իմ այդ «փշրանքները», հավաքածուիս պատի ճեղքերը ծածկելու համար:

#### Ա՞ւ:

Վերը մասամբ արդեն տրված է այս հարցի պատասխանը: Ավելի որոշ լինելու համար, եթե փորձեմ զանազան քաղաքան քաղաքներ ու վայրեր հիշել, ինչպես Սոֆիա, Ֆլիպս, Պոլսի, Իզմիր, Աղանա, Տիգրանակերտ, Հալեպ, Դամասկոս, Կաչիրե, Աղեքսանդրիա, Փարիզ, Բենջին, Նյու-Յորք, Բոստոն և դեռ ուրիշ տեղեր, տակավին ոչինչ ասած կլինիմ, քանի որ սրանք ինքնին լոկ անուններ են միայն: Այս բոլոր քաղաքների միջից անցած կամ բնակած տարիներիս ամեն պատեհ առիթ ջանացել եմ շփախցնել և բախել նրանց տան զոնները, որ օտար քաղաքների երթին նույնիսկ շքեղ տների մեջ էին բնակվում, բայց իրենց հայրենի տնակին կարուտարադ էին և իրենց սրտի զոնակները լայնորեն բացում էին իմ ասաց:

#### Ովլե՞ր էին, որ խոսեցին ու երգեցին:

Բոլորն էլ մեզ պես հասարակ մահկանացուներ էին, իրենց առօրյա ապրելու զուգերն ունեին: Տներ կային, ուր արդեն երեք սերունդ հասակ էին նետել: Տներ էլ կային, որ նոր էին փախել սարսափների երկրից: Կային շատերը, որ որբանոցների մեջ մեծացել ու տուն-տեղ էին զարձել: Կային որ օտար հողի վրա էին ծնվել ու մեծացել, բայց հիշում էին իրենց մամիկների երգերն ու խաղիկները: Կային տներ, ամեն կերպով հարստացած տներ, զիտուններով, զյուտարարներով, բարձր կրթություն ստացած համալսարանականներ, բժիշկներ, փաստաբաններ, ճարտարապետներ, արվեստագետներ, ո՞ր մեկն ասեմ, որոնք անհայր էին մնացել և մինու ճար որբեայրի մոր չարքաշությամբ կյանք մտել: Կային տներ էլ, ուր

վրաս ծիծագում էին այսպիսի «պարապ» ու «անշահ» բաներով զբաղվնելու համար: Նույնիսկ կային տներ, ո՞չ շատ, բարեբախտաբար, ուր ծիծագում էին իրենց զառամած մամիկի մեկեն ի մեկ ելնել, պարելու վրա: Սրանք ի՞նչ զիտենային, որ այդ պահին մամիկը մամիկ չէր, չանցել-չիվան մի աղջիկ էր, որ իր հայրնի երկրի վրա իր գեղանի հասակը պատցրել է այն օրերին, երբ գարուն էր, ծառ ու ծաղկի:

Ահա մարդկային կյանքի այս կարուսելն էր, որ պտտավում ու պտտվում էր իմ դիմաց:

Ակնա Արմտանից Ֆիլիպե նետված կար անող տնմնա Օլսաննան էր, որ համեստորեն զլուխը կախած, ամենանրգին ձայնով, ասելի թելերի հետ իր սիրան էր շուշալում, կարծես, շարեշար շարելով.

Ես էս զիշեր դուրս ելա,  
Թուխ ամպեր անուշ կը ցողա...

Անտունիի մի պատառիկ էր, որ հարություն էր առնում դարերի խորքից:

Բութանիո Պարտիզակ զյուղից Նյու-Յորքի մի անկյունը նետված, որ ու արև տեսած զեղահասակ Ազնիվ հանքմեն էր, որ փոքր թարմագեղ ձայնով, հուղական ողբ էր հյուսում իր կորուսաները հիշելով.

Յար, հանի՞ , յար, հանի՞ , յու դաշդոյ հանի՞ .

Քանի ենք եմ տեսեր, չեմ ի զար բանի.

Յար, ո՞ւր կերքաս, անուշ հուրդ իս կուգա,

Սև աշվիդ, սև ընելիդ՝ հոգու դեմ կուգա...

Ակնա ալազյողուների շարքից փրցված այս պատառիկը չէ՞ արդյոք, որ Ազնիվ հանքմի նախահայրերը, ավելի քան 300 տարի առաջ հետները բերեցին, երբ չելալիների սարսափից փախչելով եկել ու բույն էին դրել Պարտիզակի կանաչ սարահարթի վրա:

Հասպա ի՞նչ ասեմ Հաջի Մարիամին, որ ծնողների երուսաղեմ ուխտի զնացած տարին, Զատկի կիրակին երուսաղեմի վանքի մեջ էր ծնվել, հետո որք մնացել և Պրուսայի որբանոցում մեծացել և ուսանել: Նյու-Յորքի գարձյալ մի անկյունում, ձեռքն ու ոտքը դողալով, ամենաքնքույշ ու նրբագեղ ձայնով, ծովի այս կողմից մինչև Պարտիզակ կամուրջ նետած՝ իր յավրուի օրոցկապն էր հյուսում «սրմա թելերով»:

Սալբեջախ եմ ձգեր սալորին ծառը,  
Կուլար ու ծուռ կուգար գառանըս մար,  
Էկ՝, յավրում, էկ՝.

Օրանդ օսկով պիտեր, կամարդ արծարով՝  
Օռուկապրդ պիտեր սրբա քելերով,  
Էկ՛, յավըում, Էկ՛...

Ի՞նչ զիտենար ձեռքն ու ստքը գողզողացող խաթունիկ Հաջի Մարիամը,  
թէ այս օրորոցի ոսկին ու արծաթը Ակնից, Վանից ու Անիկց էր բերլած:

Հապա հ՛նչ ասեմ զարձյալ Բալուի բրդաբնակ լեռների մի անլյու-  
նում ծնված Սրբիանցի Օհանեսին, որ հիմա, ո՞ր բաեղից սրտեղ, եկել է  
Նյու-Ցորքի երեխաներին սոտա-Ենեափ (շաբար և զովացուցիչ) է ծախտմ  
և իր խանութիւն ետեր պատկում է ու վեր կենում: Խանութիւն ետիկ այդ նեղ  
սենյակը կարծես սկսեց խոնիկ ու մոմ բորբել, երբ որ երդեց.

Գարուն ելլալ խիստ զանազան,  
Սարեր, ձորեր կանչացան,  
Վարդեր բացից բլուլներուն,  
Բլուլն եկեր կայներ սեյրան...

Ի՞նչ զիտենար մեր լեռնցի Օհանեսը, որ շատ տարիներ առաջ ապրած  
միշնադարյան մի տաղասացի ձայնն էր, որ լսվում էր, երբ ինքը գեռ  
շարունակում էր երգելով.

Ա՛յ, լից և տուր, շուտ լից ու տուր,  
Զանուշ զինին զանապական,  
Լի՛ց, սիրելի, լի՛ց, ճազելի,  
Թասեր շինի՝ կարմիր զինի:  
Անո՛ւշ, անո՛ւշ, հազար անո՛ւշ,  
Ով որ խմե՛ լինի անո՛ւշ...

Իսկ ի՞նչ ասեմ «աղա» Շահինյանի մասին, որին իրենց տնեցիները՝  
զավակով, հարսով ու թոռնիկներով, բոլորն էլ «աղա» էին կանչում  
այնպիսի հարգանքով ու պատկառանքով, որ ևս էլ տան վեհաշունչ  
շուրը պահելու համար նույնքան հարգանքով ու պատկառանքով միշտ  
«աղա» եմ կանչել ու մինչև այսօր տակավին չգիտեմ, թէ ի՞նչ է մեր  
պատվական «աղացի» ծննդական անունը: Աղան իր աղայությամբ ինձ  
համար միշտ աղա է մնում այլևս: Նա, որ «ի բնե» ատաղձագործ էր, որ  
տարիներով իր երկայն հասակը ցուցադրել էր չափված ու գծագրված  
զերանների վրա տախտակ քաշելով, որ Վանի նահանջին «Ճըժով ու  
բժով» երեխան էր հասել և այնտեղից էլ ոլոր-մոլոր ճամփաներով Նյու-  
Յորք ընկել և գեռ հիմա էլ իր հասակը ծուած, տան տանից հանող սան-  
դուղքների վրա նստած, ընկույզի տախտակներից ստափով ու գույնըզ-

զույն փայտիկներով նարդիներ էր գեղազարդում, այժմ իր վարպետ ձեռքերի մեջ սատափներն ու փայտիկները խաղացնելով, իր բամբ ձայնի կշռվը երգ էր չափում ու ձևում, երեմն իսկ ոստոստալով, կարծես վարագա վանքի բակի մեջ այն երանելի օրերին ովարաստվում էր պարելու.

— ելեյք, տեսեյք վիրեն ա կիրեն մեր էծ,  
Շունն ա կիրեն մեր էծ.  
Շունն էր էծուն,  
Էծն էր ուզուն,  
Ուն էր բըփուն,  
Թյուփն էր իգուն,  
Իյգ վարազա,  
Տայն ակուկյա,  
Ինչ որ ասես՝  
Վիրեն կուզյա.

Մեր «ազան» որտեղից զիտենար, թե հարյուրավոր տարիներ առաջ Ազբամարի վանքի արեգաներն էլ իրեն պես ոստոստացել ու պար էին բռնել, երբ տեսել էին, որ ալեկոծ ծովի վրա ալիքները ճեղքելով հանդարտորեն ամփին էր մոտենում նավակը և իրենց հին լեզվով ուրախությամբ բացականչել էին.

Ահա ցնծայ ծովն ու ծփայ,  
Ալին, զալին տայ,  
Ահա խաղայ նավն ի ծովին,  
Ծովն արեուն  
Մաեր ավազին, խաղայ, ծփայ,  
՚Ն ալին, զալին տայ:

Ահա՛ թե ովքեր էին, որ խոսեցին ու երգեցին...

Մեր հավաքածուի այս հակիրճ պատմությունն ավարտելուց առաջ ամենաքաղցր պարտավորություն ենք զգում երախտական խոսք ասել մեր երգողների մասին: Նրանցից շատերը արդեն հիշատակ են դարձել կամ իրենց մայրամուտին մոտեցել: Քառասուն տարվա անջրպետ կա այս երգերի հավաքման և հրատարակումը ձեռնարկելու միջև, շատ ու շատ բաներ աղոտացել են արդեն... Այսպիսի հավաքածուները «փորբիկ փնջիկներ» են միայն, որ ժողովվել են հայաշխարհից հալածականների թերնից: Ահա այս հայտական ու թափառական բերանների

անսպառ շնչին ապավիճնած՝ մեր գողղողացող շրմունքների ամենաքընթացքուշ քաղցրությամբ, խոնարհարար համրուրում ենք նրանց արգեն մոմ դարձած ձեռքերը, որպեսզի նրանց վառած մոմերից վառենք մեր մոմերն ել, որպեսզի մեր Հայաստան աշխարհի լույսը մշտավառ մնա:

## ՀԱՎԱՔԱԾՈՒԻՒ ՊԱՐՈՒՆԱԿՈՂԻԹՅՈՒՆՆԲ ԵՎ ԵՐԳԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՍԿԶԲՈՒԽՎԸ

Հավաքածուն երկու զլխավոր մասերի է բաժանված:

Առաջին մասը, որ անվանել ենք Հայրենի երգ ու բան, պարունակում է Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի սահմանների մեջ բնակված, այժմ բնավեր եղած հայերի բերնից առնված ու նոտագրված ժողովրդական երգեր և ավանդական հարակից նյութեր: Աշխարհագրական առումով հավաքածուի այդ մասի տարածությունը արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ՝ ծավալվում է պատմական Հայաստանի՝ Բաղեշի և Վանի, Մշո և Կարնո, Խարբերդի և Երզնկացի Երբեմնի հայաբնակ շրջաններից մինչև Փոքր Հայքի, Կեսարիայի, Կիլիկիայի ու Փոքրասիական արևմուտքի շրջանները, ինչպես Պոլիս, Իզմիր, Պրուսա և մանավանդ Բութանիա:

Հասկանալի է, անշուշտ, թե այս բնագրածակ տարածությունը լիովին ընդգրկելու մեր երազային ցանկությունը շենք կարողացել իրականացնել, նախ՝ մեր մարդկային ուժերի անբավարարության պատճառով, և երկրորդ՝ մանավանդ արտաքին պայմանների աննպաստության բերմամբ: Ինչ որ կարողացել ենք կատարել, թեև ինքնին արհամարձելի չէ քանակով ու որակով, բայց խոստովանելու ենք, թե լիակատար լինելուց հեռու է: Օրինակ՝ Խարբերդի շրջանից Զնշակածագի մի բուռ երգերի դիմաց հազիվ մի քանի կառու կան Քղի երգերից: Բայուի մի լեռնային զյուղից Ամերիկա նետված մի համեստ հայի բերնից հավաքած երգերից զմայլելի փնչի դիմաց Զնքուշի, Բերկրիի, նույնիսկ ինոսի ու Կարնո հարուստ գաշտից հազիվ հատուկենատ կտորներ են փրկված այս հավաքածուի մեջ:

Եվ սակայն, հակառակ այս անհավասարակշռություններին, գրի են առնված այնպիսի ավանդական երգեր ու ասացվածքներ, որոնց կորսատից փրկված լինելը ինքնին բավական է՝ զրձվանքով նայելու այս հավաքածուի վրա: Ժամանակն է լծի տակ մտնելու և փնտրելու գեռես շգմնվածներից գեթ նույնքան և ավելի պատկառելի երգափնչեր, քանի

գեռ ուշ չէ: Փնջեր, որ աշխարհի շորս ծագերում ցրված են և գուրգուրութեան կարոտն ունեն:

Մի քանի երգերում ծայնաշարերը խառն են թե՛ արևմտյան, թե՛ արեւելյան ծանոթ երաժշտական ծայնաշարերի հետ: Արեւելյան ազգի ցությունը որոշապես նշմարելի է այն երգերի մեջ, որոնք անցյալ դարի մասնավորապես վերազարթնումի շրջանին կապված են եղել պուտահայության առօրյա կյանքի հետ: Բացի Պոլսի բաղաբային երաժշտության ազգիցության հետքերից, երբեմն որոշապես նշմարվում է նաև արևմտյան երաժշտության ներմուծությունը, օրինակ, պարոցական «ազգային» երգերի ճամփոփ: Զայնաշարերի առումով ամենաուշագրավը վը ավանդական ծեսերին հատուկ երգերն են: Այս երգերի մեջ է, որ գտնում ենք լաղային այնպիսի կազմություններ, որոնք մեր բնաշխարհի դաշտի մեջ բուսած և չկորսված ոճն են ներկայացնում:

Մեզեղիները ևլրուպական նոուագրության կանոններով շափի տակ դնելիս, չանացել ենք ըստ կարելվույն շնախտել բնագրի պատեկերը: Դժվարություն հարուցած պարագաներում հետևել ենք խոսքերի տաղաշափական կառուցվածքին, երբեմն գործածել կիսատրոհակներ և այլ միջոցներ երաժշտական նախագասությունը դյուքահստակ անելու համար:

Երաժշտական շափին ու շեշտը, մասնավորապես հայկական ժողովրդական երգերի մեջ, սերտորեն կապված են բանաստեղծական տեխնիկ շեշտագրության հետ: Պարերգերի պարագային, սակայն, պարի ընդհանուր շարժման համաձայն, երգի շափին ու շեշտը բազմորակ ձևեր են ստանում, երբեմն խոսքերի բնական շեշտը դրհելու գնով իսկ: Բացի դրանից, պարերգերի խոսքերը հաճախ հնից ու նորից բերված այլաղան բառակիների համադրություններ են, հաջող կամ կարկտված ու ձախող, և այս երկրորդ պարագային խոսքի և եղանակի շեշտի մեջ անհամաձայնություն է գոյանում: Այսպիսի երգերում կրկնակների մեջ է, որ ընդհանրապես գտնում ենք շափի ու շեշտի ամենազմայլելի ագուցվածքներ: Հայեցի և ոչ հայեցի երգերի ինքնորոշության համարական վերլուծման համար բավականին ապահով մեթոդը պետք է լիներ լաղային ելեկչների, շափաբերության և մանավանդ շեշտային հատկությունների բաղադասություն անելը:

Մեր հավաքած ժողովրդական և ավանդական երգերի մեջ որոշ բանակով առկա են թուրքերին ախառն կամ միայն թուրքերին երգված երգեր: Ճի երկույթ, որ պետք է ինքնին հասկանալի լինի, եթե նկատի

առնենք արևմտահայության պատմական անօրինակ ճակատագիրը։ Չնայած խառն կամ թուրքերն լեզվին, այս երգերն իրենց պարունակությամբ իսկ սերտորեն կապված են Հայկական կյանքին ու ավանդական սովորություններին և դրանց Հայկական ազգային պատկանի լույսուն կամածի տեղի չի տալիս։ Նույնիսկ միայն թուրքերն երգված այդպիսի շատ երգերում պարունակությունը բացառապես հայ բարբերն են, ինչպես մկրտությունը, թագումը, ուխտազնացությունը, Հայկական զանազան տոնները և մտսնավորապես Հարսանեկան ավանդական ծիստակարությունները։ Հասկանալիք է, որեմն, որ այդպիսի երգերն ընդհանուրից անջատված չեն։

Այսուհետեւ երգերձ, նույն երգողներից մեր Հավաքած նոյնշների մեջ թուրքերն երգերի մի այլ խումբ մենք առանձնացրել ենք։ Մեծ մասով սրանք այն երգերն են, որոնք Թուրքիա բնակվող բոլոր ժողովուրդների համար Հավաքարապես գործածելի են եղել, որ բյուրեմի հն կոչվում։ Սրանք ժողովրդական պարզունակ ոճով ու դյուրքմրոնելի շարադրված են Հայվանարար աշուղների կողմից, որոնց մեջ հայ աշուղների թիվը (ինչպես պատմությունից էլ Հայտնի է) բավական մեծ է եղել։ Այս շարքը, սակայն, պատշաճ ենք Համարել շմիացնել ներկա Հավաքածուին, այլ բաղդատական ուսումնասիրության նյութ դարձնել և ապա առանձին ժրատարակել։

Գալուկ արեմտահայերի մեջ նույնպես գործածվող այսպես կոչված արևելյան գորոցից հատուկ կանոններով շարադրված երգերին, որոնք սիս-սկես անուններով են զանազանվում, ինչպես շարքի, դագիլ, քաղ-վիմ, մոլտամ և այլն, դրանց Հավաքարումն ու ձայնագրությունը մեր անմիջական նպատակից դուրս ենք Համարել։

Հավաքածուի երկրորդ մասը պարունակում է Հայաստանի տարբեր գավառներից Ամերիկա նետված զանազան անձերի երգածից զրի առնը-ված ազգային կոչվող երգերը։ Դրանք պատմական ու քաղաքական իրադարձությունների բերումով, ազգային վերազարթնումի ավելի քան Հարյուր տարվա (1800—1915) շրջանում ջուռաված, հայրենիքում և հաւկան հեռավոր ու մոռավոր զաղութներում լայնորեն տարածված, Հայրենասիրական ու այլ բանաստեղծությունների վրա շարադրված կամ նրանց Հարժմարեցված երգեր են։ Այդ բազմարզես երգերը ծառայել են իրեն մի խթան բռնապեսության բիրտ լծի տակ տրորվող ժողովրդին ինքնագիտակցության զգացումներով ողենորելու և անցյալ փառքերի վերակոչումներով կամ լավագույն օրերի տեսիլքներով նրա զարավոր թմրածություններ ցրելու։

Բախտին ձգված ու հալածական, մերկ ու անոթի հայ զյուղացուն  
ուստի կանգնեցնելու և իր տռւնն ու տեղը պաշտպանելու ահազանգը  
Հնչեցնում էին երկու խոշոր կենտրոնների՝ Պոլսի և Թիֆլիսի մտավորա-  
կան նշանավոր դեմքերը, ինչպես Պեշշկիթաշլանը, Խրիմյանը, Գարեգին  
Սրբանձտյանը, Աբովյանը, Նալբանդյանը, մանավանդ Գամառ-Քաթի-  
պան և շատ ուրիշներ։ Տգիտության խավարի մեջ ծվարած հայ քաղաք-  
ներին ու զյուղերին լույս էր շամբվում դպրոցներ բանալով, հայ մանուկ-  
ներին գրել-կարդալ սովորեցնելով ու այլ միջոցներով։ Իրեն ներշնչումի  
առաստ աղբյուր, քրական-հայրենասիրական ալեծուփ հոսանքին զուգըն-  
թաց, մատուցվում էին և նորաշնուր երգելու Ալյափիսի մի շրջանի կենդանի  
պատկերը տվող այդ երգերը մեծ քաղաքներից սկսած մինչև հետին գու-  
ղերում երգվել են տասնյակ տարիներով, տասնյակ սերունդների կողմից  
և դրանցից ընտրված երգերի մի փունչ մինչև իսկ մեր օրերին շի մոռաց-  
վել ու տակալին երգվում է խանգավառությամբ։

«Ազգային» երգերը հավաքելով, մեր անմիջական մտահոգությունը  
շի եղել նրանցից համազրական երգարան պատրաստել։ Ալյափիսի  
«Երգարաններ»-ի առատություն կար այն օրերին, մինչև որ համիդյան  
և ցարական ճանկերը եկան ի սպառսպուտ անելու զրանք։

Պոլսում, Թիֆլիսում կամ այլուր հրատարակված այդ երգարան-  
ներն արգարե առաստ էին, բայց Ժատա՛ ձայնագրված եղանակների տե-  
սակետից։ Եթե երգերի բանաստեղծությունները լրիվ կամ թերի, սիստ  
կամ շիտակ շարունակաբար հրատարակվել էին, ապա եղանակները կամ  
դուրս էին մնացել երգարաններից, կամ կիսաստ-պուտ էին ու անգոհա-  
ցուցիչ։ Ահա թե ինչու կարենու ենք նկատել այս երգերը հնարավորին  
չափ նոտագրելու, որպեսզի սրանց եղանակներն էլ իրուն ավանդ պահպեն  
մեր պատմության թանգարանի մեջ և չկորչեն կամ չմոռացվեն։

1 Հայտնի շարականագետ ու երաժիշտ Եղիս Տնտեսյանը իր հրատարակած «Երգա-  
րաններ» պատմառով Պոլսում բանատարկվեց և բանտի մութ նկուղների մեջ ավանդեց  
հոգին, ինչպես շատ ուրիշներ։

2 Ազգային երգերի մեր ընդարձակ հավաքածուն պատրաստել ենք 1930—1935-ին,  
երբ ձեռքի տակ ունենք խիստ փոքրաթիվ երգերի եղանակների տպագրված օրինակները,  
որոնք, թեև ճշտությունը տարականություն կետեցել ենք մեր հավաքածուի մեջ։ Միայն  
վերջին է, որ Սեւանիկ, Նգիպոսո, Թիգրոս և այլուր առենքն գործածության նպատակով  
նոտագրված երգարաններ կամ փնչկեր են լույս տեսել ազգային և ժողովրդական  
երգերով, ուր շատ ծանոթ երգեր են գտնվում և այս հավաքածուի պատրաստության ժա-  
մանակ տակալին անծանոթ եղած երգեր, զբախտաբար, հազվագյուտ են։ Այս մի քանի  
անծանոթ երգերն էլ հետազայտում, անշուշտ, ավելացրել ենք մեր հավաքածուի մեջ ուրա-  
խությամբ։

17

Ճիշտ է, թե սրանցից շատերը իրենց այժմեականությունը կորցրել են, ճիշտ է մանավանդ, թե շատերն էլ և՛ խոսքով, և՛ եղանակով խակ ու անարվեստ են: Բայց և այնպես չպետք է մոռանալ, որ վերալարթնումի այն երկար տարիներին է, որ հայ լնզուն (աշխարհաբարը) իր վեհությամբ վերընջուղվել ու մեր հոգիներին սնունդ է տվել ու տափս է, ինչպես նաև հայ երգը նորանոր ու թարմ ծիլեր արձակել ու բողբոշել է մի այնպիսի կենսունակությամբ, որի հունձքը առատորեն քաղում ենք մեր կյանքի այս նոր ու հրաշափառ օրերին:

Ուրեմն, այն մտահոգությունը, թե այս երգերի եղանակները անմիշական կորստի ենթարկվելու վտանգի տակ էին, ինքնին բավական էր, որ այսպիսի համահավաք աշխատանքի ձեռնամուկս լինեինք:

Բայց մեր հնհնուքն ավելին էր:

Զանազան երգեր հավաքելու ընթացքում զորավորապես զգացել էինք, թե յուրաքանչյուր երգող ինքնահատուկ երգելու մի ձեւ, մի ոճ ունի: Դա մեզ մտածել էր տվել, թե կարելի է այս ծանոթ ու ձեւավորված երգերը ևս երգել տալ Հայաստանի տարրեր գալապներից Ամերիկա նետված զանազան անձերի և ձայնագրելով, երգվածքի այդ զանազանությունից ըստ կարելվուն ծանոթանալ Հայաստանի տարրեր գալապների ինքնորոշ ձայնելելչային նրբություններին:

Այս խրախուսիչ նպատակը ի մտի ունենալով, ժամանակ և ուշադրություն շնորհեցինք նույնիսկ ծանոթ երգերի հատկանշական փոփոխակները ձայնագրելու: Այսպես, Հանրածանոթ մի շարք եղանակներ, իրենց համատարածության պատճառով, ավելի քան 15—20, երբեմն մինչև 25—30 փոփոխակներով ձայնագրվել են: Այս ստվարաթիվ փոփոխակների շնորհիվ երգողների գործածած երաժշտական ելեզներին ու դարձվածքներին մոտից ընտելանալու ապահով առիթ ենք ունեցել, ինչ որ եղել էր մեզ մտահոգող ամենաչական հարցը՝ զանազան վայրերի յուրատեսակ երգեցողության ինքնատիպ հնչյունաշարերի բնույթին վարժեցնել մեր լսողությունը և ըստ այնմ առաջնորդվել մեր ժողովրդական և ավանդական երգերի մեջ բյուրավոր ձեռնով ի հայտ եկող բարբառացին ձայների երաժշտական և հնչյունային նրբություններն զգալու:

Մեզ համար էական նկատված այս պարագան համարձակվում ենք Հանձնարել մեր այն բոլոր երաժշտաներին, որոնք ևս երգական ոճն ուսումնասիրելու այս «գերբուկ» ճանապարհին են Հետևում՝ ի խոդի Հեռավոր անցյալի բավիղների մեջ ծրարված ավանդական «ոսկեգեղմին»: Իսկ երաժշտական-ազգագրական ուսմունքներով պարապող մեր

նոր սերնդին հանձնարարում ենք ուշի-ուշով սերտել ու հասկանալ փշրկած ու բեկրեկ բեկորների լեզուն, որ խոսում են դարավոր անցյալի շքեղությամբ:

Զենք վարանում կրկնել, ինչ որ ուրիշ առիթով էլ ասել ենք<sup>1</sup>, և մեր խորին համոզումն է, թե հայ երաժիշտների համար ամենակարևորն է փնտրել հայեցի ոճը և աստիճանաբար ընտելանալ նրա ինքնահատկություններին:

Մեր կարծիքով, դժվար է, արդարն, ազգային-ժողովրդական լեզվական ու հնչյունային ավլաները երաժշտական արդի ընդունված քերականությամբ լիարժեք կերպով բացատրել: Ինչպես ամեն լեզու, հայոց լեզուն էլ ունի իր շոշափելի մասը, որ կարելի է դյուրությամբ ուսանել և ուսուցանել: Բայց ունի նաև իր շատ պարզ, սակայն անշոշափելի կողմը, բոլորովին ինքնահատուկ, որ ուսուցանելի չէ:

Ճիշտ է, թե հայերն լեզուն ու ձայնն էլ հնչյունների շարան է, ինչպես ուրիշ լեզուները: Ճիշտ է նաև, որ մարդկային հագագը կամ ձայնալարը ընդունակ է նույնիսկ զանազան ժողովուրդների հնչյուններին վարժվել կամ տիրանալ Սակայն, եթե փափառ ունենք մեր հայեցի երգերը հայեցիութեն երգելու, ապա առանց նախապաշարումի կամ սննուի ծանծաղամտության պետք է ասենք, թե երաժշտական բոլոր կիրթ ու քննուշ մարդկաներն ու գովելի շնորհները տակավին բավական չեն մեր երգերի այդ անշոշափելի շունչը ի հայտ բերելու: Այս հավաքածուն կազմողն էլ, տարիներ ի վեր ենք հայոց աշխարհի հողի ու ջրի միջից ծորող այդ անշոշափելին որոնելու ճիգը միայն կարողացել է անել և սրտանց կցանկանա, որ մեր հայրենի երկնքի տակ հեռավոր ափերի վրա հասակ նետող նորահասներն ել մեծապես հպարտ զգան իրենց մամիկների ու պապիկների ձգած այս անփոխարինելի ժառանգությամբ և իրենց կուրծքը լայն բանան այդ «անշոշափելի», այլ մշտահոս ու մշտագորակին ու աղբյուրին, որ մեր լեզուն է, մեր երգն է, մեր էությունն իսկ է:

Հավաքածուի պարունակության մասին տրված այս համառոտակի բացատրություններից արդեն նշանակալի եղավ երգերի հավաքման մեր որդեգրած սկզբունքը, որ է՝ ընթանալ ծանոթից դեպի անծանոթը: Ուրիշ խոսքով՝ փոխանակ անցյալի մշուշից դեպի ներկան գալու, ընդհակառակը, նախ ապրված կյանքի պարունակած մթերքները ամբարի և ապա

<sup>1</sup>Տե՛ս «Առվետական արվեստ» № 2, Երևան, 1967:

միայն, այդ մթերքների տեսակի ու որակի համաձայն, անցյալի մթերանցներին մոտենալ, փնտրել ու գտնել հնամենի թղթերի մեջ ծրարված նյութը, բաղդատել ունեցածի հետ, ճոխացնել արդեն ամբարվածը և այսպես քայլել հին-հին դարերի ստվերախիտ անտառի մեջ:

Արդ, այս սկզբունքի համաձայն հավաքումի մեր աշխատանքը սկսել ենք նախ ծանոթ ազգային երգերով, այդ երգերը երգել տալով մեր բնաշխարհի զանազան անկյուններից դուրս եկած անձերի, իրենց երգելու ոճին բնտելանալու համար, և սրանից հետո է, որ միտքելի ենք հայրենի բնաշխարհի ավանդական «Երգ ու բան»-ի հոգեպարար թափուտի մեջ:

### ԵՐԳԵՐԻ ԴԱՍՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

«Հայրենի երգ ու բան»-ի դասավորումն իրականացնելիս ի մտի ենք ունեցել պատմական Հայաստանի կենտրոններից դիպի արևմուտք դարերի ընթացքում կատարված տեղաշարժերը:

Բագրատունյաց Անիից դեպի Կիլիկիա, Արծրունյաց Վանից դեպի Սեբաստիա և Փոքրասիական վայրեր, մինչև Եղեականի ափերը և Թրակիա, Պոլիս և Բութանիա երկարող դարավոր գաղթը այլևս դադարած էր համարվում, երբ երկիրը փլվեց և արևմտյան հայերի աղետից փրկված զանգվածները ցրվեցին ի սիյուռս աշխարհից: Մեզ մնում էր այցելել այդ սիյուռքայակերի նոր բնակավայրերը և աճապարանքով ու համբերությամբ հավաքել հոգեկան այն ավանդները, որ նրանք ժամանակին իրենց վաղեմի հայրենիքից արևմուտք էին բերել և հիմա էլ դեռ պահպանել էին:

Երգերը դասավորելիս առաջնորդվեցինք հետեւյալ սկզբունքով՝ հեռավոր ծայրերից մոտենալ սկզբնական կենտրոններին, պատմական բնաշխարհին: Այսպիսի դեպքում, օրինակ, Բութանիայի քշանից դուրս եկած շյուղ ու փշրանքները մեջ կապում են Ակնա երբեմնի մեծափարթամ գանձարաններին:

Այդ սկզբունքն իրականացնելու նպատակով՝ հարմար տեսանք հաւաքածուն սկսել ծայրագույն արևմուտքից՝ հենց Բութանիայից սերված երգերով, այնուհետև անցնել Կիլիկիայի, Կեսարիայի, Կյուրինի, Այն-

\* Կարծում ենք, թե այս ուղին հարմար է նաև մեր խազերի (երաժշտական ձաշնանիշների) կնճուտությունները հարթելու, որից հետո թերևս կարելի լինի մեր թերեր անտունիների, ողորմինների վրա երկարել և մինչև իսկ Գողթան երգերի բոցավառ մեհյանի ծուխերին մոտենալ:

թապի, եղեսիալի, Տիգրանակերտի երգերին, ապա զետեղել Փոքր Հայքից, Սեբաստիալից, Ակնից և Սրբակիրից, Մալաթիալից, Խարբերդից, Երզնկալից ու Կարինից, և վերջապես՝ Մուշից ու Ախլաթից, Շատախից ու Վանից բերված երգերը: Այսպիսի հերթականությամբ նյութը կներկայացվի մի քանի հատորներով:

Նախատեսված է յուրաքանչյուր հատորի պարունակության համաձայն երգերի եղանակների ու խոսքերի մասին հարկ եղած բացատրությունները տալ տեղն ու տեղը, առանց մտահոգվելու, թե հատորներում բացատրական ակամա կրկնություններ կարող են լինել: Զգտել ենք, որ յուրաքանչյուր հատոր ինքնին ամբողջական լինի: Միևնույն ժամանակ, ամեն մի հատորի նախարանական մասնավոր բացատրությունները և ապա բնագրերի մասին ծանոթագրություններն ու բաղդատությունները կօգնեն, որպեսզի ընթերցողը կամ ուսումնասիրողը դրությամբ զգա նաև հատորների փոխադարձ առնչություններն ու միասնականությունը: Հատորներում զետեղվելու է հավաքածուի ընդգրկած վայրերի ուրվագծային ընդհանուր քարտեզ, որի ստորին աշ անկրոնում ամեն անգամ կզետեղվի տվյալ հատորում հանդես եկող վայրերի մանրամասնացված քարտեղը:

Երաժշտական բնագիրը կազմելու համար նկատի է առնված նույն խոսքերի վրա երգված եղանակները համատեղել և, լինեն նման թե տարբեր, առանձին թվերով համարակալել:

Անծանոթ կամ ոգլարհասկանալի բառերի բացատրությունը տրվում է տեղում, թվագրյալ բնագրի համաձայն: Վերցին հատորում պետք է զետեղվի ընդհանուր համահավաք բառարան:

Դարձյալ վերցին հատորի մեջ դրվելու է երկու ցանկ՝ բոլոր երգերն ըստ այբբենական կարգի և բոլոր հատորներն ըստ բովանդակության: Հավաքածուի մեջ պիտի լինեն նաև մի որոշ քանակությամբ ոչ երաժշտական ազգագրական նյութեր, որոնք նույնպես ցուցակագրված կլինեն ըստ տեսակի՝ առած, հեքիաթ, ասացվածք, հանելուկ և ալլն: Երաժշտական և ոչ երաժշտական ազգագրական նյութերը տրվելու են մեկ միասնական համարակալումով:

Գալով «Ազգային երգերի» հրատարակության, որ երեք կամ չորս գրքերի մեջ պիտի ամփոփվի, հարմար և գործնական է նկատվել այբբենական դասավորությանը հետեւել, առանց հաշվի առնելու թե՛ խոսքերի պարունակությունը և թե՛ եղանակների ըստ ոճի զանազանությունը:

Հայ ժողովրդական երգերի ձայնագրված հավաքածուներ, դժբախտաբար, խիստ սակավ են եղել, թեև պարունակությամբ մեծահարուստ: Սրանց մեջ կատարյալ գանձեր են Կոմիտաս վարդապետի հավաքած երգերի մինչև այժմ հրատարակված ժողովածուները, որոնց մեծարդեք պարունակությունից օգտվել և դրանով առաջնորդվել են մեր օրերի տաղանդավոր երաժշտները, իրեն աղբյուր հայեցի ոճի և ներշնչման: Պետք է հիշել նաև Սպիրիդոն Մելիքյանի ձայնագրած և հրատարակած «Ծիրակի երգեր» և «Վանա երգեր» ժողովածուները: Վերջերս ծանոթացնությամբ նաև Արշակ Բրուտյանի, Հակոբ Հարությունյանի և այլոց այս ուղղությամբ կատարած զնահատելի գործերին:

Այս նախընթաց ժողովածուների երգերը մեր հավաքածովի մեջ չեն առնվել: Պարագայական է միայն, որ նույն կամ նույնանման մի շարք երգեր կամ խոսքեր գտնվում են թե՛ մեր, թե՛ մյուս հավաքածուների մեջ, ինչպես Վանա երգերի մի մասը և այլն:

Հարկավ, սրանք մեծ մասամբ այս կամ այն չափով զանազանվող փոփոխակներ են, և դրանց արժեքը, որպես ապրող տարրեր անձերի բերանից տարրեր ժամանակ հավաքած հավաստի նյութերի, զանազան ուղղությամբ ուսումնասիրողների համար, անշուշտ, օգտակար կարող է լինել:

Ընդհանրապես, նման ժողովածուների բովանդակությունը գնահատելիս, նրանց արժեքին պետք է մոտենալ երաժշտական, ազգագրական-բանասիրական, լեզվաբանական-հայագիտական և նույնիսկ պատմագիտական տեսակետներից:

Անշուշտ, ամենակարենորը երաժշտականն է այն պարզ պատճենով, որ հայ ժողովրդական եղանակները անհամեմատ քիչ են հավաքված, մինչեռ դրանց շնորհաշատ կատարողները զնալով ավելի ու ավելի պակասում են (մեր հավաքածուի դեպքում նրանցից շատերն արդեն, ավա՞ղ, հողը գրկել են):

Այսպիսի դեպքում, եթե մի պահ համաձայնենք գործածել անփոխարինելի, կարեոր և հետաքրքրական որակումները, ապա երախտշգիտակամբ պետք է հիշենք Կոմիտասին: Նրա շնորհիվ էր, որ մենք անփոխարինելին փոխարինելիից զատելու ճաշակն ունեցանք: Նա էր, որ իր հանճարափայլ բանալով բացեց մեր հոգիների ճամփան և մեր ժողովրդական եղանակները զնահատելու շափանիշներ տվեց: Խոնարհաբար պետք է հայտնենք, թե Կոմիտասի և այլոց անփոխարինելի դան-

Ճերի մոտ շարվելու արժանիք բեկորներ կան նաև մեր այս հավաքածուի մեջ: Անշուշտ, դրանց կողմին կդառնվեն նաև նյութեր՝ համեմատարար համեստ արժեքի, բայց ընդհանուր առմամբ կարեոր և հետաքրքրական և հայ ժողովրդական երաժշտության ուսումնասիրությանը նպաստող:

Բանահյուսական մասը զուգընթաց լինելով երաժշտականին, գնահատելիս կարելի է կրկնել նույն մեկնաբանությունը, ինչ որ շանացինք տալ երաժշտականի վերաբերյալ, թեև ոչ նույն համեմատությամբ, որովհետև այդ ասպարեզի մշակների հունձը լիառատ մատուցվել և մատուցվում է սկսած Գարեգին Սրբանաձյանից մինչև այսօր իսկ: Ազգագրական գրականության համար մեր բերածը («Հայրենի երգ ու բանա-ու-մ զետեղվելիքը»), քանակով մանավանդ, մի բուռ ցորեն է միայն, որ եթե փորբեկ մի առավելություն ունի, այն էլ սա է, թե ինչպես բուն երաժշտական, այնպես էլ այս նյութերը հավաքելու ժամանակ ամեն կերպ զգուշացել ենք որևէ հավելում կամ սրբազնություն կատարելուց, ամեն ինչ պահել ենք այնպես, ինչպես որ են:

Լեզվագիտները, ավելի շուտ բարբառագիտները, լուծելի կամ բացատրելի զանազան նյութեր պիտի գտնեն այստեղ: Բարբառային հնչունների ինքնահատուկ արտասանությանը ըստ կարելվույն մոտենալու համար հետեւյալ պայմանական նշաններն ենք գործածել.

σ (ա) = գերմաներեն՝ Kölن,  
ֆրանսերեն՝ ասսոն,  
մ. = անգլերեն՝ tune,  
ֆրանսերեն՝ une,  
և (բ) = անգլերեն՝ and, hand,  
արաբերեն՝ էլամման:

Այս առթիվ պետք է հիշեցնենք, թե սրանից 30—40 տարի առաջ ձայնագրական արդի գործիքները տակավին իրենց խանձարուրի մեջ էին: Հիշած միայն զգում ենք, թե ի՞նչ մեծ օժանդակություն պիտի լինեին այս գործիքները (մազնիտաֆոն և այլն), եթե մեր ձեռքի տակ ունենալինք գրանք:

Հայագիտական տեսակետից մոտենալով, կարծում ենք, թե գավառային բառերի և ասացվածքների, նաև շարադրական ձևերի և շարահյուսական ոճերի եթե ոչ նորահայտ, գեթ հետաքրքրական նրբություններ կարելի է փնտրել զանազան զավառների այս տարատեսակ հատորների մեջ: Առ այս, հույս ունենք, յուրաքանչյուր հատորի մեջ նշանակ-

ված բառային կամ այլ բացատրությունները, ինչպես նաև այբբենական կարգով պատրաստված ընդհանուր բառարանը պիտի նպաստեն հայագետների աշխատանքին:

Պատմագիտական տեսակետով մեր հավաքածուից նորություններ սպասող ընթերցողները թերևս հուսախար պիտի լինեն: Սակայն և այնպես, պատմական փոքրիկ տեղեկությունները, որ կնկատվեն հավաքածուի որոշ ժամանակություններում, ինչպես գաղթականական շարժման վերաբերյալ գրավոր փաստեր կամ նույնիսկ բանավոր ավանդություններ, կօժանդակեն պատմական, ազգագրական կամ հայագիտական մի շարք հատկանիշական երեսություններ լուսաբանելուն:

### ԵՐԱՖՇՏԱԿԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՆԴԱԿԱՆՈՒԹԻ ԹԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեզ թվում է, թե նախքան հավաքածուի այս ներածությունն ավարտելը, ավելորդ չեւ լինի մեր ունեցած դժվարություններն ու փորձառությունը նկատի առնելով, երաժշտական ազգագրական նյութեր հավաքելու վերաբերյալ մի քանի թելագրություններ անել, խորհելով, թե դրանով այսպիսի աշխատանքի համար պատրաստվող երիտասարդների սկզբանական քայլերը զյուրացրած կլինենք:

Ազգագրական աշխատանքի լծվողը, հասկանալի է, իր մեջ այս ուղղությամբ պետք է ինքնածին նախասիրություն ունենա: Այլակես այն կողմնակի զբաղում կամ ապրուատի միջոց համարողները հեռուները շեն կարող հասնել, շուտով կհուսալքվեն և տաղտուկը կսկսի իրենց տանջել ու անհանգստացնել: Ուսումնական հաստատությունների մեջ արված նախագիտելիքները կարենոր և օգտակար կլինեն, անշուշտ, և շատ անգամ ուսանողի նախասիրական հակումն ի հայտ կրեն: Սակայն այս նախագիտելիքներին ծանոթանալը տակավին բավական չէ հարթելու ուղին, որ ազգագրագետի առջև պիտի բացվի գործնական կյանքի մեջ: Գործնական փորձարկությունների միջոցին է, որ ազգագրության մշակները ի վիճակի կլինեն զգալու սերը, նվիրումը իրենց մշակելիք դաշտին: Ահա այս նվիրյալներին ի բաջակայություն է, որ ներկա բացատրությունները կարվեն:

Ուսումնական գիտելիքների պաշարը դեռ «սկիզբն է երկանց»: Գրավոր ազբյուրներին մոտիկից ծանոթանալու և դրանք ուսումնասիրելու ժամը, հոգնեցուցիչ և ժամանակ սպառող աշխատանքը պետք է կատարվի իրեն շարունակությունը ամբարված նախնական գիտելիքների

Հիմնավորման ու գասավորման: Սփյուռքի մեջ գրավոր աղբյուրներին ծանոթանալու հնարավորությունները սույն են, եթե մեկը առիթ չի ունեցել Վինետիկի կամ Վիեննայի գրադարաններից օգտվելու: Եվրոպական գրադարանները մասսամբ միայն կարող են գոհացում տալ հայ ազգագրագիտության ուղղով ընթացողներին: Այս տեսակի հայոց Հայաստանի աճող սերունդը իրեն պետք է բախտավոր զգա, որ ազգագրական հին թե նոր նյութերի ամենաթարմ փունջը կարող է իր տրամադրության տակ ունենալ Մատենագրանի, Հանրապետական գրադարանի, Գրականության և արվեստի թանգարանի մատուցած ամենաձեռնտու աշակցությամբ: Պետք է հիշենք այս առիթով, թե մենք անձնապես բոլորովին ապարախտ չենք եղել մեր աշխատանքի նախապատրաստական նյութերը գեթ մասսամբ ձեռքի տակ ունենալու մեջ: Բանասերներին ծանոթ է արդեն, թե Արևմտյան Հայաստանի ազգագրական նյութերը, որ առավելապես ցըրված են Պոլսի օրաթերթերի և այլ պարբերականների մեջ, Ամերիկայի մեծագույն գրադարաններում իսկ բացակայում են: Բացառիկ բարեկախտություն էր Բոստոն քաղաքում ծանոթանալ մի անձի, որ տարիների տրնաշան աշխատանքով հավաքել ու դեռ հավաքում է, ի գոհացում իր հոգեկան ապրումին ու վայելիքին, այդ հազվագյուտ գանձերը: Այդ անձը վահան Թոփալլանն է, որի բացառիկ աշակցությունը վայելել ենք ազգագրական փնտուտըների մեր նախապատրաստական տվյալները օրինակելու, ամփոփելու և գասավորելու մեջ:

Նախապատրաստական նյութերի կարևորությունը պետք է շեշտեինք, որովհետև սրանցով է, որ ազգագրագետ-բանահավաքը կծանոթանա Հայաստանի գավառներին, նրանց բնությանը, աշխարհագրությանը, այնուեղ ընակվող ժողովրդի նիստովացին, բարեկրին ու ավանդություններին: Եվ երբ նա կայցելի, ասենք թե, մի վանեցու կամ խարբերդցու տուն, կարող է նախ՝ առօրյա հասարակ խոսակցություն ունենալ, ապա խոսակցությունը ծավալել այդ վայրերի վանքերի և ուխտատեղիների մասին, ակնարկելով և աստիճանաբար մոտենալով ժողովրդական տոնական օրերին և այլն: Այսպես, անզգալաքար, ենթական, որից սպասում են նյութեր քաղել, որևէ ձեռվ փոխադրած կլինես իր հարագատ ու երազացին աշխարհը, որ կար ու հիմա չկա: Եթե հաջողացրիր առօրյա հոգսերի ծանրաբեռնությունը մոռացնել տալ և արդի բարբերին հարմա-

<sup>1</sup> Վահան Թոփալլանի այս գանձարանը այժմ հանրային մի հաստատություն է Բոստոնի մեջ «Հայ մշակութային հիմնարկություն» անվան տակ, ուր կարելի է գտնել միայն հայկական, այլև համաշխարհային գրականության ու մշակությի վերաբերյալ հազվագյուտ գանձեր:

բեցրած իր սենյակը դարձնել իր ծնված ու մեծացած գյուղի մի անկյունը, ապահով եղիր, որ այլևս «քարինք աղաղակեն»: Մամիկը սկսում է իր սիրութ բանալ, անցած օրերի մեջ ապրել ու քեզ տալ ինչ որ սնի իր հոգու խորքում պահած:

Նախապատրաստական այս տվյալների կարևորությունը շեշտելով՝ հանդերձ, տակավին կմնա ամենակարենորը և էականը, որն է՝ երգողի հոգեկան ապրումների հետ համընթաց զնալ, խրախուսել և մշտական խանդավառություն ցուց տալ: Հայտնի է, թե նոր սերունդը, մանավանդ օտար երկրի մթնոլորտի մեջ, ինչպես Ամերիկա և այլուր հասակ առնողը, գրեթե հեզնանքով է նայում իր մամիկի վրա, նրա նիստուկացի, գիտցածի ու շգիտցածի վրա: Նույնիսկ կզարմանա, ինչպես հաճախ պատահել է ինձ, որ մամիկի այս անցած-գնացած, պարապ «Հերիաթներին» ականջ անող էլ է գտնվում այս «լուսավոր» դարուս մեջ: Առաջին իսկ առիթով շանալու է այս թյուր կարծիքը փարատել ու մամիկին վստահություն ներշնչել, թե իր գիտցած բաներին արժեք ես տալիս: Եվ ոչ միայն արժեք ես տալիս, այլև ուրախանում ես գրանցով: Ուրիշ խոսքով, այնպիսի սրտացավությամբ պետք է մոտենալ մամիկի անցած երկար ճամբի խութերին ու շարլարանքներին, որ մամիկը այլևս բանա իր հոգու գուրքը շենց այս պահին է, որ մամիկը մոռանում է իր տարիքին հատուկ ամոթիածությունն ու ամաշկությունը և երիտասարդանում է, իր մանկությունն ու շահելությունը ապրում, և այս ժամանակ է, որ քաղում ես հունձքը երբեմն 30—40-ով, իսկ երբեմն էլ, ի՞նչ բերկրանք, լիաբուն 70-ով և ավելիով:

Երբեմն, սակայն, պիտի հանդիպես ոմանց, որ իրենց մանկությունից թափառական են դարձած զավարից-զավառ կամ երկրից-երկրից Սրանց գիտցածները խառնիխուռն կինեն: Հանձնարարելի է զգուշավոր լինել և մի վայրի ծաղկելը մյուսի հետ լշփոթել: Այսպիսի պարագաներում լսածը գրանցելիս պետք է խնամքով և առանձին-առանձին նշանակել:

Երբեմն էլ պետի հանդիպես նրանց, որոնք «շինելու», հարմարեցնելու, հարկավոր կամ անհարկի բացատրություններ տալու ճարտարություն ունեն: Այսպիսի պարագաների մեջ, առանց վրդովմունքի, զգուշությամբ, հարցումի ձեռում է զգացնել տալ, թե հարկ չկա ավելորդ խանդավառության, և լավ է, որ գիտցածը միայն նշանակվի, առանց մեկնության: Նման գեղքեր են պատահում, մանավանդ, երբ՝ մի անձանոթ բացագանցություն կամ մի խոսք է լինում, ինչպես, օրինակ՝ այս

Հատորի մեջ տեղ գտած էյ սիդոն և սիլլատոն բացագաճչությունները։ Առանձնապես զգուշանալու է ուսումնական այն երգողներից, որոնք երբեմն պարտը են համարում ժողովրդական հորինվածքն իրենց քիմքի համեմատ շտկել, «սրբագրել»։ Այստեղ փակագծերի մեջ պետք է ասենք, թե ավանդական ու ժողովրդական երգերը և ասացվածքները հավաքելիս, անձամբ մենք չանացել ենք նախապատվություն տալ անուսումնականներին և զգուշությամբ մոտենալ ուսումնականների հավելյալ ու ճոխացած ուսումնին:

Երգի եղանակը նոտագրելիս բնավլ պետք չէ միջամտել։ Պետք է ձգուել, որ երգողը ազատ զգա և ոգևորվի։ Խոսքերը գրի առնելիս զգարթությամբ պետք է ավելացնել «Ուրիշ մի տուն էլ երգիր, մա՞յրիկ», և այսպես մայրիկի մտքի մեջ ծալծալ եղած կծիկի թելերը կսկսեն կամցակամացաց քանդվել։

Երգ ձայնագոռողը, բնականաբար, պետք է վարժ լինի երաժշտական անհրաժեշտ կանոններին, բայց ուշագրի լինի, որ իր գիտցած կանոններին գերի շգանակ։ Ընդհակառակը, պետք է չանալ, որքան կարելի է, հետեւ երգին ու երգովի երգվածքի ոճին ծանոթանալ, և եթե «անկանոն» համարվող տեղեր կան, այդ անկանոնությունները չշտկել, այլ նույն այդ անկանոն, սխալ կամ խորթ համարվածները ամենայն կանոնավորությամբ նշանակել։

Երգեր հավաքողը մի պահ պետք է մոռանա, թե ինքը երաժիշտ է։ Գուցե տարօրինակ թվա, երբ ասենք, թե երաժիշտը ինքն իրեն պետք է համարի իրեն մի անգետ, որը սակայն, իր ունեցած երաժշտական բոլոր գիտելիքների ու քերականությունների վրա կոթնած, կարող է մերենական ամենանուրբ ճարտարությամբ երգվածը գրի առնել այնպես, ինչպես որ է։ Երգն այսպիսի «տղիտությամբ» գրի առնելուց հետո է միայն, որ երաժիշտը իր գիտությամբ ու հմտությամբ, իր գատողության ու տրամարանության բովից անց է կացնելու այն և նշանակելու է՝ ընտիր, երբեմն՝ գերբնտիր, լավ, միշտակ կամ խառն, պակասավոր և այլն։

Գալով խոսքին, բանաստեղծությանը, թույլ պետք է տալ, որ յուրաքանչյուր երգող, իր նախասիրած բառերով երգի երգը, որովհետև այս է ինքնարությը, որ եղանակի հետ դուրասա՞ն է Յոսում։ Երբեմն տարբեր երգողներ միկնույն երգի սկզբնական տողերը կամ առաջին քայլակները տարբեր խոսքերով են երգում։ Պետք չէ նրանց ուղղել, նրանց «սիմալը բռնել»։ Այսպիսի պարագայում պետք է առանձին-առանձին նշանակել յուրաքանչյուր տարբերակ, նկատի ունենալով սկզբնական խոսքերի

այլաղանությունը: Բայց կրկնություններից և անհարկի իրարանցումից խուսափելու համար, խոսքի տարրերակները կարելի է նաև հավաքել և մի ամբողջություն կազմել, պահելով միևնույն ժամանակ նկատված հատկանշական փոփոխությունները: Այդպիսի օրինակների նույնագես կարելի է հանդիպել այս հավաքածովի մի քանի շարքերում:

Բնական է, որ երաժիշտ-բանահավաքի զլուավոր նպատակը երգերի եղանակները կորստից ազատելու ձգտումն է լինում և ըստ այնմ առավելագույն ժամանակը հատկացվում է դրան: Դիտելի է, սակայն, թե բանահավատական և հարակից ազգագրական այլ նյութերն էլ այս շրջանակի մեջ պետք է մտնեն: Թեսք է ջանալ պահպանել երգի խոսքերի բարբառային հատկանիշները այնքան, որքան կարելի է մոտենալ բարբառային հնչյուններին մեր գրական լեզվի ունեցած հնչյունագրական տվյալներով, մեծ զգուշություն դորձ ոնել հնչյունային այս կամ այն հատկանիշները նշանակելու ժամանակի: Բարբառային հնչյունների մոտավորապես միջատ արժեքը պահած լինելու համար կարելի է նաև դիմել միջազգային ազգագրության մեջ ընդունած հնչյունային նշումներին և կազմել բազատական համապատասխան ցանկ:

Եվ վերջապես, երգողների անվանացանկը պատրաստվելու է հետեւալ սկզբունքով. նշանակել անունը, ծննդավայրը, զանազան բնակավայրերը (Կթե կան), վերցին բնակալվայրը, ուր երգերը երգինել են: Նշանակել նաև երգողի սեոր, ճիշտ կամ մոտավոր տարիքը, ուսումնական վիճակը և յորպաքանչյուրի երգած երգերի քանակը: Այս ցանկի առաջնորդությամբ հետաքրքիր և ուշադիր հետևողը որոշապես կարող է տեսնել, թե որոնք են, որ առանձին բնատուր շնորհը են ունեցել: Սրանց կարելի է կոչել երաժիշտ բառին լայն առումով: Մեր գեղերումների ընթացքում մենք հանդիպել ենք մեկից ավելի նման երաժշտաների և լիուվի վայելել ենք նրանց շնորհքի արգասիքը: Հայաստանի գաշտերից նրանց քաղած արգասարեր հունակը հեռավոր ափերի վրա ծլել ու վերընդուուել էին և հիմա կարծես անանոն ժաղիկներ լինեին, որ իրենց շյուղերի և տերենների տակ ծվարած՝ բոժոժիկ ծաղկի պես, իրենց սրտից կաթկթած բոժոժներն օրորում ու օրորվում էին՝

Օրիմ, օրիմ  
Օրորոց դեմիմ.  
Օրանըդ օր վերնա,  
Տարիդ մեծանա...

\* \* \*

Ի վերջո, ուրախ ենք ասելու, թե ամեն կարգի աջակցություն ենք վայելել դժվարություններով լեցուն մեր այս աշխատանքի բեռզ թեթևացնելու համար։ Այդ կապակցությամբ մասնավորապես շնորհակալություն պիտի հայտնենք Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահությանը, Արվեստի և Հնագիտության ու ազգագրության ինստիտուտներին և մեր մշտական աջակիցներին, երաժշտագետ Ռոբերտ Աթայանին և բանագետ Արտաշես Նազինյանին։

Մեծապես զնահատելի է բնագրերի դասավորման ու ընդօրինակման աշխատանքում երիտասարդ երաժշտագետներ Զավեն Թագակչյանի, ինչպես նաև Ալինա Փահլեանյանի ու Արաքսի Հարությունյանի օժանդակությունը։

Երջանիկ ենք, որ այս դույզն երախայրիքը մեր հայրենիքում լույս ընծայելու հնարավորությունն ունեցանք։

Բ Ո Ւ Թ Ա Ն Ի Ա Ց Ի  
Ե Ր Զ Ա Ն





## Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

«Հայրենի երգ ու բան» հավաքածուի առաջին հատորը պարունակում է Բուրանիայի շրջանից մեր հավատած երգերն ու ասացվածքները: Հայկական այս գաղութի զանգվածային հաստատումը ըստ գրալոր հիշատակարանների և ավանդուրյունների, մոտավորապես XVI դարից է սկսվում:

Դրանից վաղ էլ, Կիլիկիայի հայկական քաղաքուրուրյան անկման նետանելով (1374 թ.) այս շրջանը գաղորդ հայեր եղել են անշուշտ, որոնք բռնուրյան տակ կուրցել են իրենց մայրենի բարբառը և թրքալոս դարձել, կառչած մնալով, սակայն, իրենց ազգային բարեփին ու ավանդուրյուններին:

Բուրանիայի շրջանը Փոքր Ասիայի առևմտյան կողմում համեմատաբար փոքրիկ տարածուրյուն է գրավում միայն: Սակայն այս փոքրիկ գաղութից հավաքված բեկորները 300—400 տարվա կամուրջ են նետում դեպի իրենց ճախկին բնակավայրերը:

Այս շրջանի ժողովուրյոր, նեշող մեծամասնուրյամբ, շարքաշ ու պարզ զյուղացիներ են եղել: Բայ մեզ, դրա շնորհիլ է, որ կարողացել են այսան երկար տարիների բնրացնում պահել իրենց գաղրած վայրերի բարեփերի և ավանդուրյունների գեր մի մասը: Սակայն մեծ հաղաքների մոտիկուրյունը առիր է եղել, որ հաղաքի բարեփերը, իրենց դրական և բացասական հատկանիշներով, ավելի շուտ մուտք գործեն այս զյուղացի ժողովրդի կենցաղի մեջ: Զարմանալի է, որ այսպիսի պայմաններում պահել ու չեն խարարել իրենց ավանդական երգերի եղանակները, երբ միենույն ժամանակ իրենց տուրքն են տվել հաղաքի կյանքին հատուկ բնրացիկ կամ հասարակաց դարձած երածշառուրյանն ու խոսքին: Խոյնսկի, ինչպես պիտի նշանաւի, հաղաքներից եկած եղանակների վրա բութերն բառերի փոխարեն հայերն բաներ են հարմարեցել: Խոյ

սրա հակառակն էլ տեղի է ունեցել, երբ, օրինակ, տեղական մի ցնցող դեպք է պատահել, ինչպես սպանություն կամ առևանգում: Այս անգամ՝ հակառակ որ ենքալաները հայեր են, խոսքերը բուրժենեն են շարադրվել, թերևս տեղական մի հայ աշուղի կողմից, երա համար, որ այսպիսի դեպքեր հասարակությանը հուզող դեպքեր են, նույնին անմիջական: ինչպես տեղացի հայի, այնպես էլ դրացի բուրժի, բարարի կամ շերմեզի համար:

Այս հայեցակետերից առաջնորդվելով, ահա թե ինչու հարմար ենք տիսի այս շրջանի երգերը երկու մասի բաժանել՝ ավանդական և տեղական-կենցաղային:

Ավանդական երգերը, ժամանակի անխնա մաշեցումին դիմանալով, գասական կաղապարումներ են սոտցել և եկող ու գնացող սերունդների նոգեկան ապրումների համար որպես շահմարան են ծառայել: Այս մըշտանորդ շահմարանի ձևակորդված ու հագեցված կաղապարներն են, որ դարեր շարունակ, փոքր փոփոխություններով գործածվել են մարդկային ֆիզիկական թե հոգեկան կյանքի զանազան եռևույրների ու փորձությունների ընթացքում իրեւ օրոր կամ սիրո և բաժանման՝ պանդուխտի երգ, հարսի լաց կամ մահվան ողը ու գովիդ և այլն: Պարերգերը, որ դրված են ավանդական մասի վերջում, պարունակում են տեղական կենցաղի ոռոշ տարրեր:

Թուն տեղական կենցաղային երգերը համեմ մատարար ուշ ժամանակի են պատկանում: Դրանց մեջ առավել կամ նվազ շափով և զանազան ձևերով երեսում են ապրած միջավայրին հատուկ օտար կամ արտահին ազդեցությունների հիստեր:

Ուրաք մի առանձին՝ երրորդ մաս, հատորում զետեղված է մանկական խաղերգերի և խաղասելուկների փոփոխածավալ բաժինն:

Այս երեք բաժինները, միմյանցից զանազանվելով, անշուշտ, մի ընդհանուր կապ ունեն: Այդ կապը գաղութի գրեք միակերպ կենցաղային վարքն ու բարեք է: Բնագավառի զանազան կողմերից տարիների ընթացքում այսակ բերված բարբառային և այլ հատկանիշները, կարծես մի կարսայի մեջ լցված և կյանքի եռուզենի միջից անցնելով, շատ բան կորցնելով և շատ բան էլ յուրացնելով, ստացել են հավաքական ու միանական մի դեմք, որ ինքնահատուկ է:

Թուրանիայից սերած երգերից բացի, հատորում զետեղված է Խոմիրի շրջանին վերաբերող մի փոփրիկ պատառիկ:

Հայկաբածուին կցված Թուրանիայի շրջանի հարտեզի վրա այն վայրերը՝ խաղաքներ կամ գյուղեր, որտեղից նյութեր կան այս հավաքածուի մեջ, նշանակել ենք աստղանիշերով: Խակ շրջակա մյուս գյուղերի մասին դժբախտաբար Քիչ տեղեկություն ունենք: Այնուամենայնիվ, նպատակահարմար ենք գտել շրջանի բոլոր գյուղերի մասին մի ամփոփ գաղափար տալ:

Դեռևս 1913 թ. Մինաս Գասապյանը (Ֆարհատ) Պոլսում հրատարակել է «Հայերը Նիկոմիդիո գավառին մեջ» վերենագրով լուրջ ուսումնասիրությունը: Հեղինակը անձամբ շրջել է այս վայրերը, լսել ծերունիների պարումած ավանդուրյունները, արձանագրել, ինչ-որ կարողացել է գտնել եկեղեցական հիշատակություններում: Օգսվելով այդ ուսումնասիրությունից, հատորի վերջում բերել ենք մեզ հետաքրքրող շրջանի ամփոփ պատմականը, հուսալով, թե հավաքածուի մեջ զետեղված նյութի լուսաբանության համար օգտակար կլինի:



Մ Ա Ս Ա Բ Ա Զ Ի Ն

Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ա Ն  
Ե Ր Գ Ե Ր



# Օ Ր Ա Ր Կ Ե Ը

ՕՐԵՄ. ՕՐԵՄ\*

♩ = 32 Recitativo



ՕՇԱԽԵԿ ԿՈՏՈՒՅԱՆ

\* Օրան—օրորոց, կախօրան:

6 Յավրու—ձագուկ, զալակ, թուրքերնից հայացած: Հատկապես ընդհանրացած  
է «Յավրու» ձեզ, որ համազոր է չանիկս, աղվարս, անուշիկս փաղաքշական արտա-  
հայտություններին:

Վարդին հոտն անուշ է, ապլիկը փուշ է.  
10 Ամմեն մորկան յավրուն իրեն անուշ է:

Սա բարսը լեռնեն վո՞լ կելա մըշակ.  
Որք վարդ է բաղեր, որք մանուշակ:  
Վարդ իմ քաղեր մաղերով,  
Վար իմ զըրեր շաղերով.  
15 Յավրուս պասկի, էլլա,  
Թըշվին շարիմ սաղելով, չանիկը:

Վարդերուն հոտերնւն, յավրում, քընանաս,  
Բուլբուներուն ձանեն, յավրում, արթըննաս:

Լեռնե ի լեռ ձըդիմ սալընջախ,  
20 Ան լեռան հովերը քեզ օրին,  
Հովերը քեզ օրին,  
Ասղերը քեզ զովին.  
Երեն ու լուսինն ալ՝  
Քեզի քուն բերին:

(Պարտիկակ, Ազնիվ Պոտոսյան)

9 Տալիկ թրբ. տալ—ճյուղ, ճղիկ

11 Բարսը—բարձր:

16 Թըշվին—թշերին, հոգնակի հոլովում՝ թշվի, ինչոքեա՝ աշվի:  
Սաղելով—զարդարելով, շարելով, չարմարեցնելով:

18 Զան—ձայն:

19 Սալընջախ (կամ սալընախ) —կախօրրան, օրորոց:

22 Ասղ—սասղ:

ՕՐԻՄ. ՕՐԻՄ

σ = 12 Recitative σ

ԱՐԵՎԱԿԱՆ ԱՐԵՎԱԿԱՆ

2 Օ թիմ. օ - թիմ. օ - թիմ  
օ - թո թոց դը - նիմ.

առըք նրէ շամե ներն ա պատաման դը - նիմ. չո - նի - կըս-

*Օրիմ, օրիմ, օրիմ, օրորոց զընիմ,  
Սուրբ Հրեշտակներն ա պահապան զընիմ, չանիկըս:  
Տար ու բեր, հովեր, տար ու բեր,  
Յավորուիս քունը առ ու բեր:*

5 Քուն ունիս, յավրում, քուն ունիս,  
Սարայ քյոշկերով տուն ունիս:  
Քընակըգ էլերդ՝ աշերդ է առեր,  
Անուշիկ մարդդ էլեր, դպանն է առեր:  
Սալբջամ եմ ձըգեր սալորին ծառը,  
10 Զին ի գար հարցընիր յավրուիս հալը:

Օրոր, օրոր, օրոր, օրանըդ վերնա,  
Քընանաս ու հաղար բարի տիրանաս:

Օրոր, օրոր, օրոր, օրանըդ վերնա,  
Օրանըդ օր վերնա՝ օրերդ շատանա,  
15 Օրերդ օր շատանա՝ տարիդ մեծանա:

2 Ա—աւ, էլ:

6 Սարայ քյոշկերով տուն—այստեղ պալատի, ապարանի նշանակություն ունի: Մի ալ երգի մեջ հիշված է «Սարայ պարզան տուն ունիս» ձևով, որը պատմական է նոր իմաստ է տալիս: Սարայ պարզան Պալսի Սարայ Պատճուիկ և Այա Սոփիա; Ի ամ շրջանակի է, որ երկար ժամանակ Բյուզանդական կայսրերի և թուրք սովորական ների բնակարանն է եղել: Այս տողը այսպիս կարելի է մեկնել՝ «Դու թագավոր ես, թագավորի տոն ունեաս»:

10 Զին ի գար հարցընիր—շեն գալիս հարցնում:

Հաւ (թթր.)—վիճակ, որպիսով լուն:

կեռ կա՞ արկ ցալիկը, լեռ կա՞ զուման է,  
կեռ կա՞ սե ու զեղին, ծաղիկ մ՞է բասվեր

Գեղինն առնիմ՞ յավրուիս ճար ընկմ,  
Սկն առնիմ, ևս ուտիմ օր՝ էս ա մեռնիմ:

- 20 կեռները բըսներ է մենեմշին հոտը,  
թաժա է ծուռ էկեր յավրուիս հետը  
Քանի չի լամ ըսի՞ սըրտիկըս կու լա,  
Սըրտիկըս օր չի լա՞ աշքերըս կու լա:  
(Պարտիկակ, Մարիամ Մինասյան)

Փոխխակ (տե՛ս № 28)

- Քանի չի լամ կըսիմ՞  
25 Աշքերըս կու լա.  
Աշքերըս օր չի լա՞  
Սըրտիկըս կու լա:

- 16 Յաթեր—ցալիկը, ծաթել, ծաղել:  
Դուման—մշոշ, մառախուզ:  
17 Բազեր—բազեր:  
20 Մենեմշին (մենեմշին) —մանուշակ ծաղիկ:  
21 Թաժա—թաժա, գեռ նոր:  
Ժետը—տե՛ս № 3-ի բացատրությունը:  
23 Աշքեր—աշքեր:

ՄԱՐԻԱՄ ՄԻՐՆԱՍՅԱՆ

*J. = 32*

3

Սա - լըն - ցախ էմ ծը - գեր սա - լո - րին ծա - ռը.

կու - լար ու ժուռ կու - գար գա - ռա - նըս մա - թը.

Է՛յ, յաւլ-բում Է՛յ, օր - անդ օս - կով պի - տեր

կա - մարդ ար - ծա - բով. օ - բոս-կա - պըդ պի - տեր

սըր - մ ժա - լի - բով. Է՛յ, յավ - բում. Է՛յ...

Սալբնչախի ևմ ձգեր սալորին ծառը,

Կու լար ու ժուռ կու գար գառանըս մարը,

Է՛յ, յավլում, Է՛յ...

Օրանդ օսկով պիտեր, կամարդ՝ արծաթով,

5 Օրոսկապըդ պիտեր սըրմա թեկբով,

Է՛յ, յավլում, Է՛յ...

Օրոր, օրոր, օրոր, օրոր՝ փարայով,

Սըրտիկըս լեցեր է խոցով, յարայով.

2 Գառանըս—գառնուկիս

5 Պիտեր—պետք էր, նման է՝ խմաստով

7 Փարայով—գրամ, փող: Օրորոցից կախված հուկունիերի ու մանր զրամների  
ճընկըլ-ճընկըլ անելը, իբրև ուրախություն բերող:

լենները բըսներ է մենեմշին հոտը,  
10 թաժա է ժուռ էկեր յավրուիս հոտը:

Քընացնիմ յավրուս վարդերուն հոտուն,  
Արթընցնիմ յավրուս բաւզբաւին ձանուն:

Օրոր, օրոր, օրան դընիմ՝ քընանա,  
Քընանա ու ճաղար բարին տիրանա:

15 Տար ու բեր, տար ու բեր, հովե՛ր, տար ու բեր,  
Տար ու բեր, անուշե՛կ հովեր, տար ու բեր,  
Իմ աղվոր յավրուիս անուշ քընակ բեր:

Օրոր, օրոր, օրոր, օրանըդ վերնա,  
Օրանըդ օր վերնա, տարիդ մեծանա:

(Պարտիզակ, Մարիամ Մինասյան)  
Փոխոլավկ

20 Սալլնչախ ևմ ձլգեր,  
Սալորին (կամ՝ շընարին) ծառը,  
Էս չեմ պառկից, մարից,  
Սև հողին տակը:

(Սլոլնդ, Մամա Յանտարյան)

9—10 Այս, ինչպես և № 2-ի 20—21 տողերի իմաստը պարզ չէ, թերեւ այդտեղ կան և  
վրիպակներ: Հնարավոր են համեյալ մեկնությունները: № 2-ում՝  
կեսները բըսներ է մենեմշին հոտը,  
թաժա եմ ժուռ էկեր յավրուիս հետը:  
Այսպիսի մեկնության օգտին խոսում է այն հանգամանքը, որ Պարտիզակի բար-  
րառում, ինչպես նաև Սեբաստիայի բարբառում, որտեղից Պարտիզակ են զաղթէ  
առաջին 7 տնվորները, զոյսություն ունեն հոտ-բույց բառի ֆունտ կամ ֆէստ  
հնչումները, որպիսի զեսպում ֆունտ և հետ-ը հանգավորիում են:

№ 3-ում՝  
կեսները բըսներ է մենեմշին հոտը,  
թաժա է ժուռ էկեր յավրուիս ոտը:  
Այս մեկնությունները ընդունելով, երկու զեսպում էլ ստացվում են բնբուշ և  
զեզեցիկ պատկերներ:

Կ Կ

# ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

ՄԵՇՎԵ. ԱՅ ԱԴ Վ ՈՒ ՈՒ ԶԻԿ

♩ = 64

ՄԱՐՄԱՐ ՄԻԱՅՈՒՅԻՆ.

Մենք, ա՞յս աղվոր աղջիկ, էկեր ենք ձերը,  
 Քեզ հազար նազերով պի տանինք մերը:  
 Շարեն շապիկով, սըրմա թելերով,  
 Քեզ տանիլ ենք էկեր, մարիկըդ լացցուր:  
 5 Յար, քանի՛, յար, քանի՛, քու գերպըդ քանի՛,  
 Քեզ տանիլ ենք էկեր, մարիկըդ լացցուր:  
 (Պարտիզակ, Մարիամ Մինասյան)

2 Պի—պիտի:

3 Շարեն—հյուսվածաշաբա:

4 Սըրմա—միտարս:

5 Քերդ—դարդ, վիշտ:



ՄԻ ԼԱՐ. ՄԱՐԻԿ

Ճ = 50

ՄԻ ԼԱՐ. ՄԱՐԻԿ

Սա լար մարիկ, մի՛ լար,  
Ես կենե պի գամ.  
Ասկե տասընհինդ օրէն, մարիկ,  
Փեսայով պի գամ:

5 Քեզի կըսիմ, աղջի՛ Մարիամ,  
Խելոք պի կենաս,  
Մորմեկ ու պապայեղ, աղջի՛,  
Կարոտ պի մնաս:

10 Գրդալս կոլբեցեք, մարիկ',  
Բախճան նետեցեք,

լարիկ, լարիկ, մարիկ, մարիկ,  
ասամ. աս կե տաս օնդ բինդ օ բան մա բիկ.

փե սա յով պի գամ: թէ զի կե նաս. մոր մեն.

ու պա պա յեղ. աղ շի. կը բռն պի մը նաս:

Մի՛ լար, մարիկ, մի՛ լար,  
Ես կենե պի գամ.  
Ասկե տասընհինդ օրէն, մարիկ,  
Փեսայով պի գամ:

5 Քեզի կըսիմ, աղջի՛ Մարիամ,  
Խելոք պի կենաս,  
Մորմեկ ու պապայեղ, աղջի՛,  
Կարոտ պի մնաս:

10 Գրդալս կոլբեցեք, մարիկ',  
Բախճան նետեցեք,

2 Կենե—նորից, զարձալ, թրթ. Եինե բառը պետք է լինի, բայց այս և որիշ մի շաբաթանից մեջ միայն կենե կամ կենե է զործածվում:

9 Կոլբեցեք—կոտրեցեք. բարբառային փոփոխություն, երբին կոլբել, երբին էլ՝ կոլբել ձեռքով:

10 Բախճան—բաղչա, պարտեղ:

Իմ ունեցած լավերս, մարիկ,  
Աղքատին տըլեք:

(Չենդիլեր, Մարիամ Մինայան)

---

11 Լաթ—այսոնդ հագուստ իմաստով՝ Ընդհանրապես ներքնազգիստներն է ակնարկ-  
վում, ինչպես լար լվա, լար բնել, լվացը անել իմաստով։ Լաթ նշանակում է նաև  
որեւէ կտոր, ինչպես փոշու լար, գլխի լար և այլն։

ՄԻ ԼԱՐ. ՄԱԹԻԿ



Մի լար, մարփի, մի լար,  
Ես կենե կուղամ,  
Ասկե տասնընդինդեն  
Փհսայով կուղամ:

(Պարտիզակ, Մամա Փանոսյան)

ԵՐԵՎԱՆԻ ՏՐՈՒՅՆ ՄՈՋԻՆ

$\text{♩} = 44$

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՐԿԱՆ

Ես չեմ էրթար, մարիկ, մա - բիկ, մա - րիկ, զո - ռով կը -  
տա - հից, լո - կեր-ներս և է - կեր, մա - բիկ,  
ին - ծի կը - օա - յից, Աղ - բու - բից օր աս -  
- հիմ մա - բիկ Բու - սի - կըդ կըյ - յի:

Տարբերակ

Օք - օա - ռու կոյ - - բե - գեր, մա - ռիկ...

Ես չեմ էրթար, մարիկ, մարիկ, զուով կը տանին,  
Ընկերներս են էկեր, մարիկ, ինձի կը նային:

Մինչև աղբուրն էրթամ, էտելիս նեյն,  
Աղբուրն օր ասնիմ, հուսիկը (կամ՝ ումուտը) կըյիք

5 Քարին տոտոլողը գուգուկ մ'է նըստեր,  
Աղբարն անցեր՝ դարձեր, քուրը չէ տեսեր:

Դգալըս կոյրեցեր, բախճան նետեցեր,  
Պըտըտած տեղերս լաց զըրեր, լացեր:

5 Տոտոլող—գագաթ, սուր ծայր:  
Գուգուկ—կուկու, կկու թոշունը:

- Ասմալին տալերը գետինը կավել,  
 10 Զեր խոյեմ աղջիկը, խնամի, մեզի կը վայլե:  
 կլեմ Հավան նեյիմ, խընամի, այազ կըլմանի,  
 իրկունն օր ի գաս նը, բախըռ մի բերեր,  
 էղեղսիզ թայֆայեդ թայֆա մի բերեր:  
 15 Խընամի, սընտուկը չախչախը կուզինք,  
 Քու մեկ հատ աղջիկը խոնարհն կուզինք:  
 Աղջիկ, քեզի կըսիմ, խելոք պի կենաս,  
 Մարեդ ու պապայեղ, աղջի, կարոտ պի մընաս:  
**Թուրքերեն**  
 Ալթուն թաս իշխնդե, զընան էղիլդի,  
 20 Գումանուզ դարադ իշխն սաշըն չեղիլդի:  
 (Մեծ նոր գլուղ, Հովհաննես Թորիկան)

Ազատ քարգմանուրյունը

Ռալի թասի մեջ հինադ շաղղեցին,  
 Արծաթ սանրուկ էլ մազերդ սանրեցին:

- 9 Ասմա, թրք, ասմաք՝ կախել բառից—խաղողի կախմած վազը:  
 Տաւ (թրք.)—ճյուղ:  
 10 Խոյեմ—խոնեմ:  
 11 Այազ—լոր ու սաստիկ ցուրտ:  
 12 Պայհած—պահված: Տողի իմաստը, սակայն, պարդ չէ: Տե՛ս № 8 երգի 6-րդ տողը:  
 13 Բախըռ, պախըռ—պղինձ. փախըբերաբար՝ նվազ արժեքավոր. հակադրություն  
 ունետ և արծաթի:  
 14 Էղեղսիզ—անառակ, անպատկառ:  
 Թայֆա—կողմնակցական խումբ:  
 15 Չախչախը—հարսանեկան զարդարուն սնդուկ՝ կողպեքով:  
 16 Խոնարհն—խոնարհ:

ՄԵՇԻՐԻ ԲԼԱԿ ՉՈՒՏ

$\sigma = 50$

ՄԵՇԻՐԻ ԲԼԱԿ ՔՈՍԻ, անկաջդ օդերով,  
Քեդ ա տեսնիմ Հարսներուն մեջ քողեռով:

Գուլըս կուրեցեք, բախճան նետեցեք,  
Հարսին կոխած տեղվանքը լաց զըրեք, լացեք:

5 էլլեմ Հավան նեյիմ, այսպ կըլմանի,  
Մեռդերով, շեքերով պայչված կըլմանի:

Խընամի, սընտուկը չախչախլը կուզինք,  
Քու մեկ Հատիկ աղջիկը խոնայ՞ը կուզինք:

ԹՈՒՐՖԵՐԵՆ

Գորգմա, գարդաշ, բեն էվինե զուրամամ,  
10 Գուրուպ գուրուպ էրմեյինի ելեմեմ:

Գարգաշին էրմեյիի զընդան էրմեյի,  
Գոչանըն էրմեյիի մեյզան էրմեյի:

Սանդրզըն բեյիք դիր, չի՞եզին ազ զըր,  
Էլին էվե դիմսեն՝ է՞զիրար չոք զըր:

1 ՄԵՇԻՐԻ ԲԼԱԿ ՉՈՒՏ:

Իլիկ—իլիկի նմանությամբ փաթաթված:

4 Հարսին կոխած տեղվանքը—Հարսի շրջած, ման եկած վայրերը: Այս պատկերը  
ավելի հաճախ զործածվում է ողբերի մեջ:

15 Զեքմենի սորարսան՝ բիր աղ թելլի դիր,  
իսթինն բազարսամ՝ ազըիր էրթլի դիր;  
Ուզագ երե զըզ վերմե, ուզար դիղեր,  
Անասըն բարասըն ունուղուր գիղեր:

(Մեծ Նոր պյուղ, Մամա Քհմիրյան)

### Թարգմանությունը

Մի վախենաւ, եղբալր, տանդ չեմ մնաւ,  
Մնալով, մնալով հացդ չեմ ուտի:

Եղբոր հացը զնդանի հաց է,  
Ամուսնու հացը մեյզանի հաց է:

Սնդուկը խոշոր է, օժիտդ քիշ է,  
Օտար տուն գնաս՝ հարդանքդ շատ է,

Քողիդ նայեմ, ազքիկ, հյուսվածքը բիշ է,  
Վրագ եմ նայում՝ հաղիկ ծածկում է:

Հեռու տեղ աղջիկ մի տա, կհեռանա կմնա,  
Հալրիկին ու մալրիկին կմոռանա կմնա:

---

15 Զեքմեն—հարսանեկան բող, եղերքները ասեղնազործված ոսկեզուն կամ արծա-  
թագուն փուլերով

ԱԽՈՐԱՑԻՆ ՏԱԼԵՐԻ

*J = 50'*

ԶԱՏԻԿ ՀԱՆՏԱՏԱՄԱՆ

Ասմա - յին տա - լե - րո - յո - օս - մի.

զե - տի - նը կավ - լե ան աղ - մոր աղ - ցի - կը.

մա - րի. մն - զի կը - վայ - լե.

Զա - լա. չա - լա զա - փու - մու - զա գել - դի - լեր.

գել - դի - լեր դե՝ ավ - լու - նու - զա զիր - դի - լեր.

Ասմային տալերը, խընամի, գետինը կ'ավե,  
Ան աղվոր աղջիկը, մարիլ, մեղի կը վայլի:

Թռութերեն

Զալաւ - չալա զափումուզա գելզիլեր,  
Գելզիլեր զե ավունուզա զիրզիլեր:  
(Սլոլնդ, Զատիկ Յանտաղյան)

Թարգմանուրյունը

Նվազելով ահա հասանք ձեր դուռը,  
Նվազով էլ եկանք մտանք ձեր տունը:

1 Տալ (թրը.) — ճյուղ, այս պարագային տերևապատ ու պտղաշատ ճյուղ:  
2 Կը վայլե - կվայելե, վայելու է:

ՈՒՄ Է ԱՍՈՐ ՀԱՐԿՆ ՈՒ ՄԱՐՔ

ՄԱՐԻԱՄ ՄԻՆԱՍՅԱՆ

*s = 50*

Ո՞ւր է ա - սոր հարն ու մա - ը՛ւ ո՞ւր է ա - սոր հարն ու մա-ը՛ւ

Ա. տարբերակ

Ո՞ւր է ասոր հարն ու մարզ,

Ո՞ւր է ասոր հարն ու մարբ:

Թող գան տևսնեն բոյն ու բոսք,

Թող գան տևսնեն բոյն ու բոսք:

5 Հանեցեք հինը, հագուցեք նորը,

Աս մեր թագվորին, աս մեր մանուկին:

Հանեցեք հինը, հագուցեք նորը,

Ասեք շընավհուր, տևսեք շընորհով:

(Պարտիզակ, Մարիամ Մինասյան)

Բ. տարբերակ

Տարին զըրին վարի դուռը,

10 Վըրաս լըցին վարդին չուրը.

Ես շիմ ուզեք վարդին չուրը,

Ես կուզիմ իմ մորըս տունը:

Բըռասալին բյորը շորնա,

Հարս առնողուն աշքը քորնա:

15 Բըռասալին բյորը անուշ,

Մեր փեսան ալ մեղի անուշ:

8 Ծնավհուր—շնորհավոր բան է, որ այլուր հնչում է՝ շրջափուր:

Ծնորհով—դրական այս ձեր պահպանում է թվում, պետք է լինի նոյնական՝ շնավինուր:

13 Բըռասա—սոխազգի բահջարեղին:

Բյոր (թրք.)—արժատը

իմ կըոռնակ'ըս լան է,  
Զաքեթ կը վայլե.  
Ան ըսլալոց աղջիկը  
20 Ակոբին կը վայլե:

Կամ՝

Ան ըսլալոց Գիրզորը  
Սաթենիկին կը վայլե:  
Աս կըտը կըտը,  
Սըտը կըտը...:  
(Աղաբաղար, Տիգրանուշի Գամչյան)

- 
- 18 Զաքեթ—երրորդական տարադով վերարկու, ժակետ  
19 Զըլալոց—զրաբար հոլովման հին ձեւ, որ մնացել է և հեղնական բնույթ ունի  
23 Կըտը-կըտը—բացազանչություն կամ ձայնաշրջություն՝ ինչպես չանացել ենք  
բացատքել ծանոթագրության մեջ:

ԱՌՈՎՈՏՏՈՒՅՑ ԿՈՆԴԻ-ՉՈՐԴՈՒՅՑ



Առավոտանց կա-նուիս-կա - նուէ մըտ-նիմ բախ - նան. քա - ղեմ ան-նուիս:

Առավոտանց կանուիս-կանուիս,  
Մըտնիմ բախման, քաղեմ աննուիս.

Առավոտանց աս ինչ շաղ է,  
Հարսը բախման վարդ կը բաղեր:

5 Հարսը դըրին գուրսի դուռը,  
Վըրան լըցին վարդի ջուրը:

(Մեծ նոր գլուղ, Հովհ. Թորիկյան)

ԱՌԱՎՈՏԱԿԵՑ ԱՅ ԻՆՉ ՇԱՐ ԵՐ

*Ժ = 44*

Մարմ թեսութան,

12 Առաջ-վո-տանց աս ի՞նչ շաղ եր. հար-ոց բայ- ճամ վարդ կը ո-ր-եր:

Առավոտանց աս ի՞նչ շաղ էր,  
Հարսը բախման վարդ կը քաղեր:

Առավոտանց աս ի՞նչ կանուխ,  
Հարսը պախման քաղեր անուխ:

5 Հարսը զբրին զբբսի գուլը,  
Վրադ մաղիմ վարդեղուրը:

Հավելում է եղանակի փոքր փոփոխմամբ  
Էկուր աղվոր աղջիկ, Հարս էղիր մեղի,  
Հաղութ, զբմբութ, անդին քար էղիր մնդի:

(Մեծ նոր գլուղ, Մամա Քեմիրյան)

1 Առավոտանց—բարբառային հին ձե, որ ստեղ չի գործածվում: Սովորաբար ընդհանրացած ձևն է առավոտուն:

ԱՅՈՐ ՄԵՐԻ ՅԱՎԱՐԱԿԻ ՀԱՐՍ ԿԸՆԼՈ.

Մ. ԿԱՐԱԳՅԱՆԻՆԻ

13

Աս =օր մեր յափ = բուօ նարս կըլ = լա.  
աս =օր մեր յափ = բուօ նարս կըլ = լա.  
օ = տար սուօ կեր = բա Տա թին ոզ = թին վա = բի դու.  
պը = բաս լը = ցին մաս = դին ըու = դու.

ԱՅՈՐ մեր յավրուն հարս կըլլա,  
Հարս կըլլա, օտար տուն կերթա:

Նե մարիկ ունի, նե տատիկ,  
Աղբարիկ մ' ունի մեկ հատիկ:

5 Զըխտըկուկ աղավնի էլանք,  
Օր ծարուկ-ծարուկ բայլեցանք:

Տարին դըրին վարի (բակին) դուռը,  
Վրաս լըցին վարդի չուրը:

Էս շիմ ուզեր վարդի ջուրը,

10 Էս կուզիմ իմ տատին տունը:

1 Յավրու. թրբ. բառ հայացած—փոքրիկս. ձագուկս. անուշաւ:

5 Զըխտըկուկ—չուրիս, զույզ, փոքրացնող մասնիկով:

6 Մարուկ-ծարուկ—ծարի բառը հիշեցնող, որ այստեղ-այնտեղ կամ թել-թել իմաստով է գործածված այստեղ:

Քայլեցանք—բակվեցանք, բանդվեցինք:

Արդար մազերըս քակեցին,  
Մեղավոր մազերս հուսեցին:

Մի՛ քընար, մարիկ, մի՛ քընար,  
Օր էլլաս՝ յավուուշ չես զըտնար:

15 Ասօր արեզ մորմեն կելլե,  
Մեր յավուն մեր ձեռքեն կելլե:

Հարիկ շուներ, մարիկ շուներ,  
Զըխտըկուկ քըրվըտանք ուներ:

16 Մորկանըս մեկ հատիկն էի,  
Աղբորսս սըրդաշիկն էի:

Օր շարած մարգըրիտ էյանք,  
Օր շարուկ-շարուկ քաղվեցանք:

Օր ծալլած դումաշիկ էյանք,  
Օր ծալլուկ-ծալլուկ քաղվեցանք:

### Նաև

25 Օր շարած մարգըրիտ էյանք,  
Փըթեցանք ցըրցըրնեցանք:

(Օվազըք, դոկտ. Մ. Կարադյովյան)

17 Մի՛ քընար-մի՛ քնանար, բարբառային:

18 Քըրվատանք-բույրեր, չին հոլովումի մնացորդ:

19 Սըրգաշիկ-լլրի, սըրդաշ բառն է հայացած՝ սրտակից, ժտերիմ իմաստով:

20 Շարուկ-շարուկ-շար-շար, շարեն-շարան:

21 Շումաշիկ. Բրբ, դումաշ-հագուստեղենի չկարգած ապրանք:

22 Մալուկ-մալուկ-մալուկ-մալուկ նմանության հետ:

23 Թաղուկ-թաղուկ-թաղուկ թաղուտեղենի ծարուկ-ծարուկ նմանության հետ:  
Թաղվեցանք-բակվեցանք, բանդիկեցինք: Թաղգատել վերի քայլեցանք ձևի  
հետ: Հայրենի բնադրավառի զանազան կողմերից եկած և տարիներով հաս-

տատված այս գաղութի մեջ բարբառային հնորերի պահպանման մի օրինակ:

24 Ցըրցըրնել-ցիրուցան լինել, ցրվել, տարածվել

ԱՐԴԻՆ ՄՇԱՋԵՐՐՈՒԹ ՔԱՂԵՑԻՒ

*ԱՐԴԻՆ ՓՈՎՈՎԵԼՅԱ*

♩ = 46

14

Արդար ժակերը քակեցին,  
Մեղավոր ժակերդ հուսեցին:

(Պարտիզակ, Մամա Փանոսյան)

---

Յ ա ն ո թ ո ւ թ լ ո ւ ն .— հոսքերից զրի ենք առեւ այս երկտողը միայն:

ԵԼԼՈՅ ԿՈՅՆԻՄ ԿՈՎՈՒ ՀԱՐԳՈՒՄ

ՄԱՐԻ ՓԻԾՈՎՑԱՆ

*d = 160 - 106*

Ել - լամ կայ - օհմ կա - պաց հազ - օհմ դըր - կից-օն - բուն  
ծեռ - ըզ պազ - օհմ չը - տը - վո - դից կը - բաց ըզը - օհմ

կլլամ կայնիմ, կապան հագնիմ,

Դըրկիցներուն ձեռքը պագնիմ.

Չը աըվողին վըրան թըքնիմ:

(Արմաշ, Մամա Փափազյան)

ՄԵՐ ՏԱԿ ԵՏՏԻ, ԽԱՌ ՈՒԼՈՒԹ

Ժ. ԵՐԵՎԱՆԻ ՅՈՒՆԻՑԻ

♩ = 60

16 Սեր տան է - սին ծառ ու լու - թի

յա - լոր իյ - նա ը պը լո - լո թի

Մեր տան էտին ծառ սալորի,  
Սալորն իշնա ը զըլորի.  
Քեզ զըրկողը չի հալվորի:  
—քա նենե, հարսնուկը վո՞ւր է.

\* \* \*

5 —Հարսնուկս էլավ ջուրը գնաց,  
Ինկավ ու փարչը կոյրեցավ:  
Մի' լար, հարսնուկ, մի' հեկեկար,  
Օսկի, արծաթ փարչըդ շինիմ,  
Վարդ ու ուաճան չուրբդ ժողվիմ:

(Օվաչըք, Դոկտ. Մ. Կարազյան)

2 Իշնա—ընկնի:

3 Հարվորի—հալվորի, ալեռորի, ծերանալ:

4 Նենե—նանի, տատիկ:

Վո՞ւր է—ո՞ւր է, որ բարբառն էլ ոնի: Զայնական մի նրբություն, որ ըստ պատշաճի գործածում է: Օրինակ, ասում է «Հարսնուկը վո՞ւր է» փոխանակ «Հարսնուկը» ո՞ւր էս ասելու, որպեսզի չսկի այսպիս՝ հարսնուկը-դո՞ւր է:

6 Ինկավ—ընկավ: Ունի նաև, ինչպես վերը՝ իշնա: Այլ տեղ կա նաև ըլնիլ, ընկավ ձևըցը թիրևս ինկավ-ը զրական աղղոցությամբ է:

Կոյրեցավ—կոտրվեց:

7 Հեկեկար—հեկեկալ: Բարբառի մէջ ամենօրևա գործածված բառ չէ: Զենք կարծում, սակայն, որ այսուղ երդողի կողմից բերված է աշխարհաբարի ճամփով: Մեզ թվում է, թե, ինչպես ամբողջ պատկերը, նաև այս հեկեկալ-ը հին օրերի մնաց յորդներ են:

ԱՅԱՍՏԵՄՆԵՐ,  
ԲԱՐԵԿԵՐՆԻԱՆԻ ԵՎ, ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

ԱՅԱԾՈՐ ՏՐԵ Է ԱՌԵԲ ԽԵՂԱԳՅԱՆ

*d = 80*

Այս - օր տոն է սուրբ ծը - նընդ - յան. ա - վե - տիս.

Տյա - ռըն մե - րո իլ նայտ - նու - րյան ա - վե - տիս.

ԹՈՐԻՇԻ ՄԻՋԱՎԱՐԱՆ

ԱՅԱԾՈՐ ՏՐԵ Է ԱՌԵԲ ԽԵՂԱԳՅԱՆ

*d = 80*

Այս - օր տոն է սուրբ ծը - նընդ - յան ա - վե - տիս.

Տյա - ռըն մե - րո պաս - տին քե - րիք. ա - վե - տիս.

Տյա - ռըն մե - րո իլ նայտ - նու - րյան ա - վե - տիս

Սեր նարս - նե - րոն փայն ա քե - րիք. ա - վե - տիս զե - տիս.

ԹՈՐԻՇԻ ՓԱԼԵՎԱՐԱՆ

Այսօր տոն է սուրբ ծընընդյան,  
ավետիս.

Տյառըն մերո և Հայտնության,  
ավետիս.

5 Շարոց բերեր, պաստեղ բերեր,  
ավետիս.

Մեր հարսներուն փայն առերեք,  
ավետիս.  
10 Գինի բերեք, կայլա բերեք,  
ավետիս.  
Երկու շելքել հետը բերեք,  
ավետիս:  
(Պարտիզակ, Մարիամ Մինասյան)  
(Աղաբաղար, Սովոմ Փաթինյան)

---

7 Փայն առերեք—վայ լրբ. բառը բարբառի մէջ ավելի հաճախ է գործածվում, բան  
բաժին բառը: Ծառ անդամ երկուսն իբրև մեկ բառ են գործածվում՝ վայ-բաժին  
անել: Նաև՝ իբրև ոճաբանություն. Փայն տալ—սասան մեկին, հարկավոր կշտամ-  
բանը տալ և ալին:  
11 Հելքեկ—լրբ. մէջիտին զրամի մեկ բառորդը:

ԵՐԱԿԱՆ ՄԻՒ ԿԱՆԿԱՆ

ՅԱՇԽԵ ՊՈՏՈՎԱՆ

♩ = 50

Ծառ մի կանչէրը ծառ մի կանչէրը ու + մի ու  
շարոց բե - բեք պաս - տեղ բե - բեք ու - վե - տի ու.  
մեր նարս - ներ զարդ ու ու բեք ու - վե - տի ու.

Ծառ մի կանչէրը, ծառ մի կանչէրը, ավետիս,  
Շարոց բերեք, պաստեղ բերեք, ավետիս,  
5 Մեր հարսներուն փայն ա բերեք, ավետիս:

(Պարտիզակ, Աղնիլ Պոտովան)

I Ծառ մի կանչէրը—մե՛ս ծանոթագրությունը:

## ՈՒ ՏՈՓ. ՏՈՓ

ԱՐՄԵՆԻԱՆ ԽԱՅԱՏԱՐԱՐԱԿԱՆ

20

*d. = 50*

Աս տա - րի տա - րի  
գալ տա - րի տա - րի.

աս տա - րի տա - րի  
գալ տա - րի տա - րի

*d. = 50*

եր-բանը նէ - յինը դու-20 հ'ն-2ը կէ - բեր է.  
եր-բանը նէ - յինը կա-տուն հ'ն-2ը կէ - բեր է.

դու-20 հ'ն-2ը կէ - բեր է.  
կա-տուն հ'ն-2ը կէ - բեր է.

դու - 20 ցո - բե - նը կէ - բեր է.  
կա - տուն մու-կը կէ - բեր է.

դու - շը ցո - բե - նը կէ - բեր է.  
կա - տուն մու-կը կէ - բեր է.

կա - տուն մու - կը. մու - կը դու - 20. դու - 20 ցո - բե - նը կէ - բեր է.

դու - 20 ցո - թե - նը կի - թե - նը է.

*d = 52*

եր - ուանց նե - յինք դու - 20 ի՞ն - լը կի - թե - նը է.

դու - 20 — ի՞ն - լը.

դու - 20' ցո - թե - նը կի - թե - նը է.

դու - 20' ցո - թե - նը կի - թե - նը է.

ԱՅ ՏՈՒԲ. ՏՈՒԲ

*d = 40*

ՄԱՐՄԱՐԻ ՓԱՐԱՊԵՏԱՆ


21

Աս տա - թի տա - թի զալ տա - թի.

տա տա - թի.

## ԱՐ ՏԱՐՄ ՏԻՄԻ

ՄԱԿԱԿԱ ՄԵԽԱՎԱՐԱ



Ա. խումբ. Աս տարի, տարի,

Գալ տարի, տարի;

Բ. խումբ. Աս տարի, տարի,

Գալ տարի, տարի;

5 Ա. խումբ. Էրթանը նեյինը զուշը ի՞նչը կերեր է:

Բ. խումբ. Ղուշը ի՞նչը կերեր է:

Ա. խումբ. Ղուշը ցորենը կերեր է:

Բ. խումբ. Ղուշը ցորենը կերեր է:

\* \* \* \* \* Ա. խումբ. Էրթանը նեյինը կատուն ի՞նչը կերեր է:

10 Բ. խումբ. Կատուն ի՞նչը կերեր է:

Ա. խումբ. Կատուն մուկը կերեր է.

Բ. խումբ. Կատուն մուկը կերեր է.

Միասին. Կատուն՝ մուկը,

Մուկը՝ զուշը,

15 15 զուշը ցորենը կերեր է,

զուշը ցորենը կերեր է:

\* \* \* \* \* — էշը ի՞նչը կերեր է:

— էշը խոսք կերեր է:

\* \* \* \* \* — Գալը ի՞նչը էրեր է:

20 — Գալը էշը կերեր է:

2 Գալ տարի տարի—Համախա ասվում է՝ Գալ տարի բարի:

19 Գալ—գալլ:

— Արջը ի՞նչը կերեր է:  
— Արջը զալը կերեր է:  
— Գալը ի՞նչը կերեր է:  
— Գալը զալը կերեր է:  
— Գալը ի՞նչը կերեր է:  
— Գալը խոտը կերեր է:  
— Շունը ի՞նչը կերեր է:  
— Շունը զալը կերեր է:

25

Շունը՝ զալը,  
Գալը՝ արջը,  
Արջը՝ էշը,  
Էշը՝ խոտը,  
Խոտը՝ . . .  
. . . . կատուն,  
Կատուն՝ մուկը,  
Մուկը՝ դուշը,  
Դուշը ցորենը կերեր է,  
Դուշը ցորենը կերեր է:  
(Պարտիզակ, Արուսյակ Խաչմանյան,  
Մամա Փանոսյան, Մարիամ Մինասյան)

30

35

33 Խոտը... և այլն: Ինչպես տեսնում ենք, շփոթություններ և ետ ու առաջություններ են եղել, ինչ որ կարելի էր կարգավորել, բայց մենք հարկ չենք տեսնու:

Մշտ տարբերակ

22 տ տարբերակ

Գաղթը տեսեր ով է կերիք զէծ. Գաղթը տեսանը զէմ է կերիք զէծ.  
Գաղթ ի գլուխ. զէծ ըստ-կուստ. Միկ գարեն-կուստ. Բաւար բաւար  
բաւար է. Բաւար է Բաւար. Բաւար է. Ես իմ դը դար  
հըր մուտացամբ. Բաւար է. Ես իմ ըստ-կուստ դա - րու Բաւար. Բաւար է.

Վաճի տարբերակ

22 բ տարբերակ

Ելեյք տեսեյք վիրն է կիրի մեր ըյիւփ. Ելեյք տեսեյք վիրն է կիրի մեր ըյիւփ.  
Աւմ էր ըստ-կուստ. Ծուփն էր ի-գուն, Եգ Վա-ռա-զա, Մակն ա կյան կյա. Ինչ որ ա-սես.  
Ծի-ռնս կյան-կյա. Յաւ-ւար էր Տաւ-ւար էր. Ի՞նչ բա - րի տա -  
րի մեր է - կազ վեր - մե զի վեր - մե. Կի վեր - մե.

## ՊԱՆԴԱՏԻ ԵՐԳԵՐԻ ԵՎ ԱՂՋԵՐ

### ՈՎԵՐՈՒԹ Ի ՌՈՎԱԽԸ


ՄԱՐԴԱՅԻ ԽՈԼԵՄԱՅԱՅՆ

♩ = 60      Աղ - բարս ի բախ - նան օրս - տեր. շաղի ի -  
 23 Բայ...  
 - շիր յուր - դաց է լոք ա շեր:  


### ՑԱԼԵՍ, ՑԱԼԵՍ

չ.

ՄԱՐԻԱՄ ՄԻԽԱՅԼՅԱՆ


♩ = 50      Ցա-լեմ. յա-լեմ. յա - լեմ. ախ յա - լեմ... Աղ -  
 24 Բայ...  
 բարս Ըս-տամ-բար բա-դար շու-ըը - լեմ շի - թիր կը ծա - րի:  


### ՈՎԵՐՈՒԹ ԸՍՈՒՄԲՈՒ ՔԱՂԱՔ

ՄԱՐԱ ՓԱԼՈՒՅԱՆ

♩ = 60  
 25 Աղ-բարս Ըս-տամ - բալ բա - դար. շու-ըը-լեմ շի - թիր կը ծա - րի...  
 Աղ-բարս Ըս-տամ - բալ բա - դար. շու-ըը-լեմ շի - թիր կը ծա - րի...

ՅԱԼԵՐ. ՅՈՒՆԻ



Աղբարս ի բախճան նըստեր,

Շաղն իշեր, յորդանն է թրչեր:

Յալեմ,

Յալեմ,

Յալեմ:

5

Աղբարս ը Ստամբուլ բաղաք

Շուրըլին շեքեր կը ծախե:

իմ աղբարս բնծի սուզ կուտա,

իմ աղբարս օտարին աժան կուտա:

10 Խորոգն անտիրուկ մընաց,

Աս գիշեր կանուխ խոսեցավ:

Աղբարս ը Ստամբուլ է գացեր,

կանութ է բացեր...

(Պարտիզակ, Արուսյակ Խաչմանյան, № 23:

Մարիամ Մինասյան, № 24:

Մամա Փանոսյան, № 25:

Աղնիկ Պոտոսյան, № 26):

- 3 Յալեմ—սառուզման կարոտ բառ: Թերես երկանքի վրա ազալու հետ կապված հին և ավանդաբույր բացազանձություն կամ այս երգը բնորոշող հասուն բացատրություն: Կամ՝ հեռավոր կապակցություն Ակնա յալալի կոչող բարեկենդանի երգին: Տակապին կարելի է հիշել արաբական Յալել յալել, Յա լիյլ ձայնական բացազանձությունը, նաև արևելյան տարածված մի պարասեսակը, որ յայի է կոչվում:
- 7 Շուրըլին—ստուգելի բառ Ուրիշ վարերի տարբերակների մեջ կա նուշ ըրե, չուց ըրե, չուց ըրե և այլ նման խոսքեր: Ժամանակի բնիացքում այս բառերը ձևափոխվել և անհասկանալի են զարձել: Շուրըլին բառը բացատրված է մեզ իրեն ուժով, շաբար, ինչ որ մեզ ընդունելի չի թվում:

ՕՊՈՒՅՈՒՅԻՆ ԵԼՄ ՇԵՐԵԱՅԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒԹՅԱՅԻ

27

♩ = 84

Օ - յա - ներ եմ շիներ  
Զորս դին ճամերոր,  
Դերդըս ընծիկ կ'օգտե,  
Աս ա էվելոր:

(Մհեր Նոր գլուխ, Հովհաննես Թության)

1 Օյա—սենյակ:

2 Ճամ—ապակի, ալստեղ՝ պառուհան իմաստով:

4 Աս ա—ալո էլ:

էվելոր—քարբառալին հոլովում՝ առավել:

ՎԻԼԱՆԻ ՉՈՒ ԼՈՒՄ

σ = 46

20

Բա-ճի չի լամ կըս-սիմ  
աչ-ցե - ուս կու - լա.  
աչ - քե-րըս օր չի լա՝ սըր-սիմ-կըս  
կու - - լա.

Քանի չի լամ կըսիմ  
Եշերըս կու լա,  
Եշերըս օր չի լա,  
Երտիկըս կու լա:

(Մեծ նոր գլուղ, Մամա քեմիրյան)

ՓՇԵ, ՀՈՎԵԿԻ, ՓՇԵ

ԳԱՂԲԱՄ ՏԵՅՄՈՒՆԵՑԱՆ

29 ժ=50

ՓՇԵ հին - պիկ, ՓՇԵ օ զին - պապ պա - դին,  
աղբարը դուր - պը է, սիր - պա - դին.

ՓՇԵ', ՀՈՎԵԿԻ, ՓՇԵ', օ զավան պազի,  
Աղբարը զուրբեթ է, սըրտիկը պազի:

Փոփոխակ

ՓՇԵ', ՀՈՎԵԿԻ, ՓՇԵ', օ զերը պազին,  
Աղբարը զուրբեթ է, սիրտը կը պազի:

5 Ըստանբոլ քակեին, նորհն շինեին,  
Բնծի ալ ը Ստանբոլին վարսետ շինեին:

Մեկ հատիկ աղբարըս հատճըցնեին,  
Կենձ յար ունեցողները տուն խըրկեին:

Ըստանբոլին վըրա գուման է, գուման.

10 Աղաներուն վըրա չի կա տին իման:

(Մատիյ մը թուղթ ըլլար, գիր մը գըրեի,  
Ըստանբոլի յարիս նամակ խըրկեի:

7 Հատճըցնեին - վրիակ չենք կածում: Այսիս էլ տրված է մեզ: Հանեցնեին  
բառն է անշուշտ բարբառը ոնին հանեցնել բառը, համոզել, համոյեցնել իմաստով:  
«էս անոր կը համեցնեմ»: Հետաքրքիր է զիտինալ, թի տեղացի կնոջ բերնում ինչու  
և ինչպիս է եղել հանեցըցնել:

10 Տին իման - թրբ, բառացիորեն՝ կրոնք և հավատք, բարբառը գործածում է ան-  
խիղն, անսիրտ, կեղեքող և այլ իմաստով, իրրե մեկ բառ:

Բա՛յց, նելի՞, կարգա՛ մեջն ի՞նչ զըրված է.  
Հոտի փարան չի՛ հատնիր, ելիր տուն էկուր:

Փովոխալ

15 Հոտի փարան վա՛ր ձըղե, ելիր տուն եկոր:  
(Գընջըլար, Վա՛րամ Տեղիրմէնջւան)

---

14 Հոտի փարան չի՛ հատնիր—ալդսեղի զբամբ չի հատնիր, աղա՛ մի՛ լինի՝ իմաստով:  
18 Հոտի փարան վար ձղե—մռացիր, անկարեսր է՝ իմաստով:

## ԿՈՒՐՎԵՐ

 $\text{♩} = 40$ 

30

Կը ունեմկ ուստի՝ կուզաս.  
ծառա եմ ծայ՝ շիք, լը-ռունկ.

մեր աշ՝ սար հեց խաբ բիւ մը  
իւն նիս

## ԿԱՌԱԽՆԿ

 $\text{♩} = 44$ 

31

Կը ունեմկ ուստի՝ կուզաս.  
ծա սա

եմ ծայ՝ շիք կը ունեմկ մեր աշ խար հեց  
խար բիւ մը չու շիք սի վազեր

է սա միտ շու տով կը նաս նիս  
քա-նի որ ախ կա-թեմ կու քադ վի նո գիս

Կը ունեմկ ուստի՝ կուզաս,  
Սառա եմ ծայնիդ.  
Կը ունեմկ մեր աշխարհեն  
խաբիկ մը չունիստ

(Մեծ նոր գյուղ, Մամա Քեմիրյան)

5 Մի՛ վազեր, էրամիդ  
Շուտով կը հասնիս,  
Քանի որ ախ կանեմ  
Կութաղվի հոգիս;  
(Պարտիդակ, Մարիամ Մինասյան)

Ծանոթագրություն.—Այստեղ զնում ենք միայն այն խոսքերը, որով եղանակը երգված է; Երգի ընդարձակ տեքստը տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 254—256:

ՎԱՐԵՐԻ ՃԱԼՄԱՆԱԿԱ ՄԻՏՏԻ ԿԻՑՈՒՐ

ՄԱՐԴԱՄ ՄԻՋԱԼԱՑԱՐ

*J = 54*

32

Վուեր ժա - մա - նակ միտ - բըս կիյ - օքը կը դո -  
դար ձը - զի - օք - ընս կը - րայ կիյ - օքը աը -  
- տիկս ի վեր կը լեյ - նար աշ - վը - օք - օք - ընս  
Ա - րե գա - կը փայ - լուն ցա - բաց աշ - խարհ բը իհ - ծի  
մուր էր աշ - ընս ար - ցունց կը րա - փի.  
տայ - մա սըր - տի - կըս սուգ էր աշ - ընս ար -  
- ցունց կը - րա - փի. տայ - մա սըր - տի - կըս սուգ էր:

Վուեր ժամանակ միտքըս կ'իներ,

Կը դողար ձըլիներըս

Կըրայ կ'իներ սըրտիկս ի լեր,

Կը լեյնար աշվըներըս:

5 Արեգակը փայլուն ցաթեց,

Աշխարհը ինձի մութ էր,

1 Վուեր կամ վեր - զբական որ - ն է, որ բարբառի մեջ երբեք վոր չի արտասանվում:  
Ռուզ հնչուն է վուեր կամ օր ձեկրով:

2 Սըլիներըս կամ ծնկիներըս - ծունկերս:

3 Կըրայ - կրակի:

4 Կը լեյնար - լցվում էր, լիանում էր, հորդում էր:

Աշքերես արցունք կը թափի,  
Տայմա սըրտիկըս սուզ էր:

10 Ասօր շատ աղվուերներ տեսա,  
Գլոխնին բաց, մազերով,  
Կը պարտիմ բռնոր աշխարհ,  
Չըկար բեղ պես նազերով:

15 Երկրնքի թըռչուն ըլլայի,  
Թըռնի բովոդ գայի.  
Զեմ զիմանար ես բու սիրուդ,  
Ատոր չարեն զըտանայի:

Պարտեզիս մեջ մեկ վարդ մը կար,  
Տեսնողը զարմանք կ'ըլլար.  
Իմ զըլոխուս էկած զերոցը  
20 Բարսը լեռները չը կար:

(Պարտիզակ, Մարիամ Մինասյան)

8 Տայմա. թրբ. տախմա—մշտապես, շաբունակ:

9 Աղվուեր—աղվոր, զեղեցիկ:

16 Չարե. թրբ. առնված բառ՝ ճար, զարման:

## Փոխովիակ Ա.

Արեգակը մորմեն ելավ,  
Մաթեց աշխարհիս վըրա  
Քուկին անուշիկ խոսքերըդ  
Յարա է սըրտիս վըրա:

) 8+7 -(ա/վ

5 Արեգակը փայլուն ծաթեց,  
Աշխարհը ընծի մութ էր.  
Աշքերհս արցունք կը վաղե,  
Իմ սիրտըս տայմա սուզ էր:

10 Երկրնքի թըռչուն ըլլայի,  
Թըռնի քսկըդ գայի.  
Ես քու սիրուդ չիմ դիմանար,  
Ասոր չարեն զըտնայի:

15 Գերեզմանիս բարին վըրա,  
Կենճութան խալ են քաշեր.  
Ով օր ընծի ախ ընե նը,  
Սխուզարըս կը քաշեւ:

20 Գերեզմանիս հողբին վըրա  
Թափե արցունք, ա՛նս, մայրիկ,  
Թափե արցունք, ցանե ծաղիկ,  
Կենճընուկ եմ, իմ մայրիկ:

(Պարտիզակ, Աղնիկ Պոտոսյան)

1 Մորմեն ելավ—ոճախություն, արիք ելավ, բարձրացավ:

14 Կենճութան, կենճություն, թրք, կենճ—երիտասարդ, ծաղիկ հասակ:

15 Ով օր—ով որ: Տե՛ս Հ 32 երգի 1-ին սողի ծանթագրությունը:

16 Ախազար-ահազար (պարսկ):—ցավ, վիշտ, մորմոքու

20 Կենճընուկ. թրք, կենճ—շահել բառը, փորբացուցիչ ճուկ մասնիկավ, որ ըստ տեղի նույն կամ նույն էլ է արտասանվում՝ լոխմանուխ. նաև նիկ կամ նիյ ձեռվ. Քըշինիյ մը՝ քշիկ մը, մի փորք:

## Փոփոխակ Բ

Վեյ ժամանակ միտքս իշնայ,  
Կը դողայ ծուկվընելըս.  
Կըրայ կուզայ սըրտիս վըրա,  
Կըլեյնայ աշվընելըս:

5 էրկնային թոշուն ըլլայի,  
Թոշեի քովըդ գայի.  
Սիրականիս ձանն առնեի,  
Անշափ ուրախ կ'ըլլայի:

Արեց փայլուն կը ծագեր,  
10 Աշքս արյուն կը կաթեր.  
Տարմա իմ սըրտիկըս մութ էր,  
Աս աշխարհքըս ընծի մութ էր:

Պարտեկիս մեջ էրկու ծառ կա,  
Ծեսնողը զարդանք կուտա.

15 Իմ զլոխիս էկած ձունը  
Բարսը զագաթը ըրկա:

Արեց մորմեն էլավ,  
Ծաթեց աշխարհին վըրա,  
Քու ամմեն խոսքերը

20 Յարա է սըրտիս վըրա:

Գերեզմանիս քարին վըրա,  
Յանե՛ ծաղիկ, վա՛խ, մայրի՛կ,  
Յանե՛ ծաղիկ, թափի՛ արցունք,  
Երիտասարդ եմ, մայրիկ:

25 Տիրամար սուրբ Աստվածածին,  
Բարեխոսէ ինձ համար.

1 Վեյ—ծանոթ վկուրեն է, որ այսուեղ որոշակիս վեյ է հնչում: Մյուլնդ գյուղում, ավելի հաճախակի քան ուրիշ տեղեր, ընդհանրապես ը հնչումնը յ է արտասանվում: Զգայի թոթովություն է կարծես, որ իբնեց զրացիներն իսկ նշանառում են, նույնիսկ մյուլնդցիներն վեյիներ էին կոչում:

25 Տիրամար—այսպիս ենք նշանակել և կոզքին ավելացրել՝ Տիրամար: Այս քառակը միշնազարի տաղերի հետեր ունի, ինչ որ այլ տեղեր էլ կա:

Միաժինըս արյուն թափեմ  
Մեղավորներուն համար:

30 Օսկի մաններս բարակցավ,  
Մարմինըս եղավ ձունի պես.  
Պաքտեցա բոլոր աշխարհք,  
Չըկա մեյ մ'ալ ինծի պես:

Ելայի խուզպես էթայի  
Էրկու օրեն՝ կուգայի.

35 Երկու օրը տարի եղավ,  
Կո քեզ կը կարոննայի:

(Սլովո, Մամա Ֆանտազիան)

- 
- 29 Օսկի մաններս—ոսկի մատներս:  
33 էթայի—երթայի:  
36 Կը կարոննայի—կարոտնալ, կարոտել: Այս երդի մեջ քարբառային հնչական  
այսպիսի հատկանիշեր լինելով հանդերձ, մյուս կողմից, զրական լեզվի ազդեցու-  
թյունն էլ էշմարելի է՝ երիտասարդ, մարմին և ալին

ԵԼԼԵՐ ԲԱՐՈՒ ԼԵՇԱՆ ԹԵՓԵՆ

ՎԱՀՐԱՄ ՏԵՅԻՐՄԵՆՔՑԱՆ

33

Ել-լեմ բար-սը  
լե-ռան բէ-փէն.  
գար-նեմ զը - լո -  
- խըս բա - րին.  
դա-նայն առ - ցեմ.  
խո բեմ սիր - տըս'  
չի կա - բեր պույ մը ա - րուն.

ԵԼԼԵՐ ԲԱՐՈՒ ԼԵՇԱՆ ԹԵՓԵՆ

ՎԱՀՐԱՄ ՏԵՅԻՐՄԵՆՔՑԱՆ

34 ♩ = 60

Ել-ցեմ բար - սը  
լե - ռան բէ - փէն.  
գար-նեմ զը - լո -  
- խըս բա - րին. դա-նայն  
դա-նայն առ - ցեմ.  
խո բեմ սիր -  
- տըս' չի կա - բեր պույ մը ա - րուն:  
  
կլլեմ բարաք լեռան թեփեն,  
ջարնեմ գըլոնիսս քարին.

*t kllēm—kllēm, կա նաև կլլամ ձեր:  
բարաք—բարձր:  
թեփեն (թրք.)—զագաթ:*

Դանայն առնեմ խոթեմ սիրտըս,  
Զի կաթեր պույ մը արուն:

(Գլոհըլլար, Վահրամ Տեղիրմէնչյան)

- 
- 3 Դանայ—դանակ:  
Խոթեմ—խոթել, մխրճել, խրել  
4 Պույ—պուս, կաթլու
- Արուն—արյուն, Մենք արուն ենք նշանակել, բայց հավանական է թվում, որ առա զեպքամ բարբառային արլուն կամ արիքն կամ արդին հնչունը լինի: Մյա կողմից, բարբառը ունի նաև արուն հնչումը, ինչպես՝ «Ես քու արունըդ կը խմեմ» և այլն:

ԱՐԱՎՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒՅՈՒՆ

ԽԵՂԱԿԱ ԳՈՏՏՈՎՈՅՆ

♩ = 50

Աղա - սա - բու նամ - բան թէս - լի  
եց բու - նի Ա - դա - նի Կարա - սին - մին  
պա - պան Ա - դա - նա նա - սար նա - նին

Աղասարու Ճամբան ֆեսլիեն բուսնի,  
Կարապետին պատան Աղասար հասնիւ

Աղջի, մարիկս ըլլար՝ ասանկ չէր ըլլար,  
Ամսլվան մը փեսան դուրբեթ չէր էրթար:

5 էս օք մեռնիմ՝ Հայկանուշը վո՞վ առնե.  
Բարեկամիս մէջեն ուժութենն առնե:

Վարեն ճազ մը կուզա՝ նեյեցեք վո՞վ է,  
Էրեսը մի բանար, նոր փեսա մըն է:

Թիւ մը գերձան առեք, բոյըս շափեցեք,  
10 Տարիք, գերեզմանիս կեռվեն փաթաթեցեք:

(Պարախղակ, Աղնիվ Պոտոսյան)

1 Աղասար—պաշտոնական կոշումով Աղջէ՛իր բակաբն է:  
Ֆեսլիեն (թրթ.)—ուհանի մի տեսակը: Բատ հավատալիքի՝ բուրումնավետ ուհանը  
բախտավորություն բերող ծաղիկ է:  
10 Կեռվեն—ստուգելի բառ: Թիւ կավառ, չըի անցք: Մամիկների բացարու-  
թյամբ նշանակել անք նաև՝ ցանկապատ, որ թուրքիրեն աղլավու է կոչվում աղըլ  
ալլու բառերից ձևափոխված: Այխարենիրի բացօթյա հանգստավայրերը աղըլ են  
կոշվում բարբառի մէջ էլլ:

## Տարբերակ

Ես մեռնիմ նե՞ ժամուն ավլուն թաղեցեք,  
Չորս բոլորս քարե զալե բաշեցեք:

Օհաննեսը կախելնիքեն կայնեցավ,  
Լուսը վըրան արեի ողես փայլեցավ:

15 Օհաննեսին թել փերչեմը կըլրեցին,  
Նըշանածին խասուտիկ աշմին լացցուցին:

Օհաննեսին աջուկ թել կըլրեցին,  
Մեներշեյի ժամուն մասունք շինեցին:

(Աղաբաղար, Փերուզ Գամձյան)

11 Ավլու. թրբ. հալլու բառն է—բակ, ինչպես տան բակը: Նաև՝ մեծ կամ փոքր որեէ  
տարածություն, որ ձողերով կամ քարերով ցանկապատված է:

12 Դամ կամ զալա—բերդ, նաև՝ քարի զեղ, քարակույտ:

15 Փերչեմ—թորթերենից բերլած բառ, որ բարբառի մեջ զործածվում է անվեճով:  
Քրական խոսով բառը վերջաճուռ է և բշերին է ծանօթ:

Ժամունակ

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

Հայոց ազգական ժամունակ անունն է Հայոց ազգի ազգական ժամունակ:

ՄԵՇՅԱՌԵՑԵՑԻՆ ՃԱԼՐԲԱՆ

$\sigma = 72$

ՓԵՐՊԻԶ ԳԱԽՁՅՈՒՆ

Մենեմշելին ճամբան քարոտ է, քարոտ,  
Մեր հայսուրբք մեզմէն կարոտ է, կարոտ:

Մենեմշելին ճամբան մուխ մը կը մխա,  
Մեր հայսուրբքին սըրտեն արուն կը բըխա:

5 Մենեմշելին ճամբան ֆեսլիլին բուսնի,  
Մեր խելորիկ հայսուրբքն ա մուրազին հասնի:

(Աղաբաղար, Փերուզ Գամշյան)

Տարբերակ

Սյոլողի ճամբան քարոտ է, քարոտ,  
Էս ա իմ զավակիներուս կարոտ եմ, կարոտ:

(Սյոլող, Մամա Ֆանտազյան)

1 Մենեմշե - մանիշակ, այստեղ գործածված է իրբե հատուկ անուն: Պարտիզակի և ջենկիլերի մեջտեղ, բլուրի վրա թաղված է ճգնաժոր մի վարդապետ, որի գերեզմանը ուխտատեղի է գարձել: Այս բլարն է, որ կոչվել է Մենեմշը կամ Մենելիշը, իսկ վերջերս էլ Մանիշակ: Ժողովուրզը իրեն կոչել է Մենեմշին սուրբը:

2 Հայուրբ - Հայր սուրբ մակիրին է, որ վարդապետական աստիճանավորներն է հատկացվել: Խնչան ընդհանրապես ամենուր, այստեղ էլ իրբե մեկ բառ հայուրբ է արտասանվում:

4 Արուն կը բըխա - Արյուն է բխում: Բղիմի հին բառն է, որ բարբառը գարձել է բխալ:

5 Ֆեսլիլին - տե՛ս նախորդ երգի Յ-րդ ծանոթությունը:

8 Էս ա իմ զավակիներուս կարոտ եմ, կարոտ - անավակի փոքրիկ մի օրինակ, թե ժողովորդի ապրած կենցաղի անմիջական արձագանքները ինչպես են մուտք գործում ժողովրդական երգի մեջ:

Recitativo

էլի', հաջի հայրիկ,  
Գերեզմանիդ զուռը բաց,  
Մեղիսի զավակներդ  
Վեր քեշեն մնաց:

5 Մեկդին նելիմ՝ ըսի,  
Մեկալ զին կորավ.  
Մեկհատիկիս զիմ վապեցի՝  
Ամբողջ զերդաստանըս կորավ:

10 Պուտերնիս մելճըցին,  
Պուրսը ձգեցին,  
Թաղաքն դուրս ըլին,  
Կարստ մենցուցին:

15 Էլա ձեզի էկա,  
Մընացի՝ ուշ էր.  
Ճըրազըս մարեցին,  
Թողուցին մութը:

3 Մեղիսիլի—թուրք. քնիչանբացած բառ, սիրելի իմաստով՝ զործածված:

4 Վեր կամ վաւեր—ձանոթ որ հարցականը, բարբառալին հնչումով:  
Քեշեն. թրք. բյոշե—անկլուն, կողմէ:  
5 Գերզաստանը—նորամուտ աշխարհաբար ձև բարբառում: Այդ իմաստով՝ հաճախ  
զործածվում է թուրքերին սիլսիլ բառը:  
6 Մելճըցին. թրք. մեջյուր բառից—կնքել, կնիք դնել:

Բատամբոլեն փըշեց  
Զեհիրլի Հովլը.  
Իմ գառներս են կորեր  
Տեր-Զորի քովլը:

(Մհծ Նոր գյուղ, Մամա Քհմիրյան)

---

18 Զեհիրլի—թրթ. զեհիր բառն է, որ բառացիորեն նշանակում է թունավոր. մահացութեան խմել իմաստ սնի այստեղ:

20 Տեր-Զոր—1915-ի արյունալի նախահիրի վայրը Եփրատի Աղերքին:

ՕԽՏԸ ԶՈՒՄՆ ԱԼԻՔ

*J = 60 - 56*

ԱՐԴՅՈՎ ՀԱՅՈՍՏԱՆԻ

38  
Օխ - տը զո - թին ա - սիր է - լար ո'կը գա - ցիր.  
օխ - տը է - ռանց է - տին զոր փա - տը գա - ցիր. օ - դուլ.  
Օխտը չորին առիր, էլար ս'ւր գացիր,  
Օխտը լեռանն էտին չոր փատը զացիր, օղուլ:  
Չոր փատը կըլյրելնիքենն միտքեկ ի՞նչ անցավ,  
Մարզցար, ջուր խմել զացիր, օղուլ:  
5 Ջուր խմենիքենն միտքեկ ի՞նչ անցավ,  
Առնավուս զովերը զուլիսեկ անցավ, օղուլ:  
Գլոխըս կըլյրեցեք, տորպակս զրեք,  
Կճուլըս կըլյրեցեք, շաղիկովս փաթթեցեք,  
Ղըռ չորին բեռցուցեք.  
10 Շիտտակ մորկանս տվեք:  
Մարիկս օր չը ճաշնա՝ մհնծ ճարսին տարեք,  
Մհնծ ճարսն օր չը ճաշնա՝ իմ յարուս տարեք,  
Օղուլ, օղուլ, օղուլ,  
Անի ճոտեն կը ճաշնա:  
15 Չափումս բեռցեք իփրիանոսին բեռները, օղուլ:  
(Պարտիզակ, Աղնիկ Պոտոսյան)

- 1 Օխտը—յոթը:
- 2 Փատը—փայտ:
- 3 Կըլյրելնիքեն—կարելիս:
- 6 Առնավուս—ալրանացի զաղթականներ:
- 8 Կճուլ—կուճուկ, փոքր, ճկուլի մատ:
- 9 Ղըռ—բաց-կարմիր, աշխատ ձի:
- 10 Շիտտակ—շիտտակ, ուղիբ:
- 11 Ճաշնալ—ճանշնալ, ճանշալել, բարբառային ճնշում:
- 14 Անի—անիկա, ան, նա:
- 15 Չափուլ—արագ  
իփրիանոս կամ՝ իբրանոս—արական անոն է:

# ՔՆԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

## ՅԱՐ. ՔՈՎԻ

*d = 66*

ԱՇԽԱՎ ՊՈՏՈՍՅԱՆ

Յար, բա-նի, յար, բա - նի, բու դեր - դըդ, բա - նի  
նի, անդ աշ - նիդ սին ընց-վին, նո - գուս դեմ կու - գա.

## ՅԱՐ. ՔՈՎԻ

*d = 60—80*

ԱՇԽԱՎ ՊՈՏՈՍՅԱՆ

Յար, բա-նի, յար, բա-նի, բու դեր-դըդ բա-նի, յար, բա-նի, բու դեր-դըդ բա-նի  
բեզ տա-նել ենք ե-կեր, մա-րի - կըդ լաց-ցուր-ը.

## ՅԱՐ. ՔՈՎԻ

*d = 80*

ՄԱՐԻԱՄ ՄԻԽԱՍՅԱՆ

Յար, բա-նի, յար, բա-նի, բու դեր-դըդ բա-նի, յար, բա-նի, յար, բա-նի, բու դեր-դըդ բա-նի  
բա - նի բեմ եմ ա-ռեր, չեմ ի գար բա - նի, բա-նի բեզ եմ ա-ռեր, չեմ ի - գար բա - նի.

ՅԱՐ. ՔԱՆԻ

*d = 80*

ԱՐՈՒՏՅԱԿ ԽԱՅՄԱՆՅԱՆ

Յար քա - նի, յար քա-նի, բու դեղ-դըղ քա - նի.  
յար քա-նի, յար քա - նի.

բու դեղ-դըղ քա - նի. Քա-նի թեզ եմ ա - ռեր, չեմ ի - զար քա - նի.

ՅԱՐ. ՔՈՇԻ

*d = 66*

ՏԻԳՐԱՆՈՒՀԻՆ ՓԱԹԻՆՅԱՆ

Յար քա - նի յար քա-նի յար դեղ - դըղ քա - նի.

քա - նի թեզ եմ առեր, չեմ ի զար քա - նի.

յար քա - նի յար քա-նի բա - նի յար դեղ - դըղ քա - նի.

Յար, քանի, յար, քանի, բու գերզըդ քանի,  
Քանի թեզ եմ առեր, չեմ ի զար քանի:

Յար, ուր կիրթաս՝ անուշ հոտըդ հիս կուզա,  
Սև աշվիդ, ուն ընթվիդ հողուս գեմ կուզա:

5 Մեռն աշվիդ, թող-թող ընթվիդ ունենամ,  
Պառկիմ ծոցըդ, անուշ-անուշ քընանամ:

Յար, յար, եկոր, յար, գերզերոս ճար ըրե,  
Քու դըրած խոցերուդ գուն մեջ զեմ ըրե,

2 Զիմ ի զար օանի, ըրբո, ոճ-բանի չը զալ, անօպուտ, փուշ իմաստով: Փոփոխակ կա այսպիս՝ Զիմ եղեր բարի:

3 Հիս-գրաբարից մնացած յիս-ինձ, գեպի ինձ իմաստով:

5 Թող-թող ընթվի, թող՝ թրո-փոշի, աստ՝ մաւթ ու թանձը հոնքեր իմաստով:

8 Մեյճիմ (արար.)—օձանիլի գեղ, սպեզանի:

- Յար, ի՞նչ իս կորուսեր, ինկեր ժուռ կուգաս,  
 10 Յար, քե՛զ իմ կորուսեր, շիմ կըրնա զըտնար:
- Ես շիմ պասկիր, անուշ քունըս տարեր է,  
 Սիրական յարն էկեր դըրանն առեր է:
- Իմ յարն ընծի կարմիր իմծոր մ' է խըրկեր,  
 Բոլորը խարաֆիլ, մեցը՝ դերդերով,  
 15 Իմ դերդն ընծի շատ էր, աս ալ էվելով:
- Սա դիմացի բախճան մերը կըլմանի,  
 Մէջի պըտըտողն ա յարըս կըլմանի,  
 Ակընչի օգերը իմըս կըլմանի,  
 Վարդը փըրցընողն ա յարըս կըլմանի:
- 20 Էրթանը նեյինք Մարյամ տուտուն ի՞շ կընե,  
 Ասմաւլիսը նըստեր քերլինֆ կը սազե (կամ՝ կը շարի),  
 Էրկանը ըլ հավնիր, չիեպի կուզե,  
 Զելպին ըլ հավնիր, հոռմի մանշ կուզե:
- Մեր գուռն ի վար ջնիր կը վազե նազերով,  
 25 Ճանկիկ ու կես ջուրիկ առի նազերով,  
 Զեռը ու երեսըս վըլացի նազերով:  
 Էկան անցան կուսավորչա կողերը,  
 Անկըժվենին դըրեր օսկի օգերը:
- Եկան տարին, հարսին մարը լացցուցին,  
 30 Ի՞շ խունկերով, ի՞շ մոմերով ժամ տարին:

(Պարտիզակ, Աղինիլ Պոտոսյան)

- 
- 10 Զիմ կըրնա զատնար—բարբառային ոճ, շիմ կարող զտնել  
 21 Քիրկիֆ—ասկիազագործության տեսակ, նաեւ՝ զործիքը, Սազել, գործիքը  
 լարել, նաև՝ թել հլուսել իմաստով:  
 23 Զելեպի—մեծահարսութ տիտղոս, ինչպես՝ ամիրա, խոշա և ազնն  
 չոռմի մանշ—բութանիայի շրջանում Ակնա կողմից զազթած հալ-հոռմներ էլ  
 կային, հունազավան, հայախոն հայեր  
 27 Լուսավորաց կողերը, լուսավորչա կովերը, լուսավորաց փողերը՝ երեք ձեռք  
 հազրոված է մեզ ճշոտմի կարստ մի բացարարման. ան'ս № 10, 45, 46 և 47  
 երգերի ծանոթագրության մեջ:  
 28 Անկըժվենին—զբարաձե հոգնակի՝ ականջներ

ՅԱՐ. ՈՒՐ ԿԵՐՊԱՌՈ

ՄԱՐՄԻՆ ՓԱԼԱՎՅԱՆ,

44 

Յար, ուր կերթաս՝ անուշ հոտըդ իս կուգա,  
Սեվ աշվիդ, սեվ ընթվիդ հողուս դեմ կուգա:

(Արմաշ, Մամա Փափաղյան)

1 իս—զբարար յիս, ինձ, դեպի ինձ:

2 Աշվիդ—աշվիդ, ալքեր:

Ծնիդիդ—սնիդիդ, հոնքեր:

## ՅԱՐ. ՅԱՐ. ԵԿՈԲ

*f. ԿԱՐԱԳՅԱՆԻ ՁԵՐԸ*

45 

## ՅԱՐ. ՅԱՐ. ԵԿՈԲ

*f. ԿԱՐԱԳՅԱՆԻ ՁԵՐԸ*

46 

## ՅԱՐ. ՅԱՐ. ԵԿՈԲ

*f. ԿԱՐԱԳՅԱՆԻ ՁԵՐԸ*

47 

Յար, յար, էկոր, յար, զերդերուս ճար ըրե,  
Քու զըրած խոցերուդ գուն մեջիմ ըրե:

Յար ուր կերթաս՝ անուշ հոտըդ հիս կուզա.  
Սև աշվիդ, սև ընթվիդ հոգուս դեմ կուզա:

5 Սևս աւ աշվիդ, կամար ընթվիդ ունենամ,  
Պատկիմ ժոցըդ, անուշ-անուշ քուն ըլլամ:

Եկան տարին, հարսին մարը լացցուցին,  
Ի՞նչ խունկերով, ի՞նչ մոմերով լացցուցին:

Երկու աղվոր կուզան, մեկն ալ իմ յարն է,  
10 էռչինը չեմ ըսեր, էնկ էտեհնն է:

Եկան անցան կուսավորչա թոռները,  
Ընկըչվին դրեր են օսկի օղերը:

Եկու, աղվոր, եկու, էս ժամուն բակն իմ,  
Ժամուն օր չը հասնիս, աղբուրին տակն իմ:

15 Աղեկուկներն եկեր, մեղնն պար կուզին,  
Կուսե լուս պարելով մեղնն յար կուզին:

Աղեկուկ, աղեկուկ, դուն ո՞ր գեղեն իս,  
Ըլլա թե քեզ սիրիմ, ընծի խըս ըմ իս:

Աղվոր ես, կը սիրիմ, կը սիրիմ քեզի,  
20 Հավատքս կը փոխիմ ու կառնիմ քեզի:

(Օվաջըք, դոկտ. Մ. Կարագյողյան)

2 Մեջիմ կամ մանամ—օձանուս դեղ, մաճուն, մածուկ:

10 Էնկ էտեկինն. բարբառային հնչյուն—ամենից ետեինչ է:

12 Ընկըչվին—ականչները, եղակին՝ անկազ կամ ընկաչ:

15, 17, 19 Աղեկուկ և աղվոր—տե՛ս ծանոթագրություն:

18 Խորը (թրե.)—աղքական:

20 Հանգածացին հավատափությունը պիտական ճնշումի տակ եղել է զարերից ի վեր, ինչ որ արտասովոր չէ նկատել: Խոկ անհատական հավատափոխությունը ուրացում նշանակություն է ստացել: Ժողովուրդը իրեկ երդում զործածում է՝ թուրք գառնամ... եթե այսինչ բանը անեմ կամ շանեմ, իրեկ ծայրահեղ այլանելի քայլ: Այս երդի մեջ, ուրիմ, սիրող սիրոտ իր սիրածին հասնելու համար պատրաստ է այդ ծայրահեղ քայլն իսկ անելու:

ԵՐԻԿՈՅՑԻՆ ԹԱՌՈՒԻՆ ԸԼԼՈՅՑԻ

ՄԱՍԻՆ ԹԱՐԱՎԻՆԱԿԱՆ

48 *f = 60*

Երկնային բըռն չունց լւ լա յի բըռ չի ի բօ պըս գա յի  
ես ծերսի բուն չեմ դի մա նար ա սոր չա բըն գըստ նա չ յի

*b* բրկնային թըռչուն ըլլայի,  
թըռչեի քովըդ գայի.  
*b* ս ձերս սիրուն չեմ զիմանար,  
Ասոր շարեն գըտնայի:  
Փոփոխակ

5 Քեղմեն վարդ մը փըրցուցի,  
Ասոր շարեն գըտնայի:  
Ասօր շատ աղվորներ տեսա,  
Գլոխնին մայ մաղերով.  
Բոլոր աշխար պըտըտեցա,  
10 Զիկար իմ գառներուս նման նաղերով:

էլար կացիր դարիբութան,  
Զգեցիր իս մինավոր.  
Մի՛ ըներ ընծի ադ շար բանը,  
Հախեղ կուգա երկնավոր:

(ՄԷԺ Նոր գյուղ, Մամա ՔԷմիրյան)

6 Ասօր—ախօր:

- 8 Մայ մաղերով—աղավաղված է թվում, դժվար մեկնելի, այսպես ենք գրի առել:  
Թերեւ կարելի է զրել իբրև մեկ բառ՝ մայմազերով, նույնպես դժվար մեկնելի:  
10 Արձանագրել ենք նաև՝ Զիկար քեզ պես նաղերով:  
14 Հախեղ կուգա—բարբառային տնարանություն, հախեն զալ, հախը տալ և այլն,  
արժանին տնօրինել, մեկի արժանի պատիժը տալ: Հախ է՝ ճիշտ է, իրավացի է,  
արդարացի է՝ իմաստով: Հախ ունի՝ իրավունք ունի: Հախ, որ արակերեն նազգ  
բառն է, հաճախակի և բազմազան ձևերով է գործածվում բարբառների մեջ:

ԵՐԱԲԵՐԻ ԹԻՇԻՉԻ ՊԼՈՅԱՅԻ

Մ ԿԱՐՎԱՑՈՅԱՆ

49 ♩ = 72

Եր-կից-քի բը-լուն-գ լւ - լո - յի ը լո-ն հ դ ո -  
- զը ա զա զա-մեց ալ հա- - լո - հա - յի  
չի - կար ամ-մեց ալ հա- - լո - հա - յի

ԵՐԱԲԵՐԻ ԹԻՇԻՉԻ ՊԼՈՅԱՅԻ

Մ ԿԱՐՎԱՑՈՅԱՆ

50 ♩ = 50

Եր-կից-քի բը-լուն-գ լւ - լո - յի ը լո-ն դ ի -  
- զո զը պա - յի սը-մեր ժի - զը  
ինչ կար չի - կար ամ-մեց ալ հա- - կը - հա - ն

*Երկինքի թռուուն ըլլայի.*

*Խըստի, քովը գայի.*

*Սըստիդ մեջը ինչ կար, չիկար,*

*Ամենն ալ ճասկընայի:*

5 էկու նայիմ իմ աղավնիս,  
Սիրուդ ինչե՞ր կը բաշիմ.

Գիշերը մինչև առավոտ  
Ըստնց ըսնի կանցքնիմ:

Պարտեղիս մեջ ծաղիկ մը կար,  
10 Ընոր նըմանը շիկար.  
Ան ի՞նչ ազլոր, ի՞նչ գեղեցիկուն,  
Տեսնողը կը զարմանար:

Արեգակը մորմեն էլավ,  
Յաթեց աշխարհիս վըրա.  
15 Քուկին անուշիկ խոսքբըդք  
Յարա է սըրտիս վըրա:

Գերեզմանիս Հողբին վըրա

\* \* \* \* \*

(Օվագըք, զոկտ. Մ. Կարագյողան)

7 Մինչև առավոտ—տե՛ս ծանոթագրությունը:

8 Ըստնց քընի—տե՛ս ծանոթագրությունը:

17 Հողբ—Հատկանշական գործածություն զրաբար հոգնակիի, եթե հող նշանակությունը  
նկատի ունենալը: Այլապիս հողը ինչպես նաև հողվըրտիքը բարբառային ձևը էն,  
իբրև հոմանիշ գերեզմանոց բառի: Շարունակությունը պակասում է:

SHILOH SHILOH SHILOH

ՕՐԻՆԱԿ ՏԱՐԱԾՈՂԱԿ.

**Saml-əmən**

51

*Amber Nersisyan*

**Ամեր Ներսիսյան**

**Սալ-ղան տալ - ղա - յից վը - ռան ուր - ոս**  
**- վը խու - մին վը - բա ին թեզ զոր - շառակ օդ - ոհ -**  
**- զի իրեց ծռ - յին ոսա - ուր իւ ուր**

*Տալղան տալղալին վըրա, Ն  
կրտավը խումին վըրա.  
Ես քեզ գողտուկ սիրեցի  
Խընճոյին տալին վըրա:*

- 5 Ծովուն խոսմը խում չի մընաց, չ?  
Տաշաը էլիուր չի մընաց. ՞  
էկո, պառկինք բքեանանք,  
Եամտանք մոմ չի մընաց:

0 Էկոր, աղջի, մեր տունը,  
Տու պայդախով զինի մը.  
Միլտքեղ չար բան մ'անցընեց,  
Կը սիյեմ հոգուր տունը:

6 Ես աղջիկ եմ, մալ կուզեմ,  
Մեծիխս բարակ շալ կուզեմ.

5 էք օր լարիս տունն էթամ.  
Օսկիստանըս հետ կուզեմ:

*1 Smalqas* ( $\beta_{pp.}$ )—*alhri*

## 2 *benz* ( $\beta$ *pp.*)—*anilin*:

#### 4 *SwI* ( $\beta_{pp}$ )—*διπλης*

6 Ելիուր—բարբառային՝ ալյուր:

8 Ծամտան (թթվ.) — մոմակալ:

16 Օսկիստան—Հին և բարբառային հոգնակիի ձև՝ ոսկիներ:

19 կընծոր մ' ունի՞ն՝ ծըլած է,  
Չորս բոլորն արծըթած է,  
Ազրոյս ուզեց չը տըվի,  
20 Աս իմ յարիս դըլկածն է:

Բախճան սամութ բուսեր է,  
Մաղկե վըրան, մըսեր է.  
Ես քեզ զողտուկ սիրեցի,  
Մայրդ վերեն տեսել է:

(Մոլոր, Մամա Ֆանտազիան)

21 Սամութ—սամիթ. բուրավետ կանաչի:

22 Մաղկե—բարբառային՝ ծածկեն:

24 Մայրդ—մայրդ:

Տեսել է—տեսել է:

ՊԱՐԵՐՊԵՐ

ԱՐՁԵ, ԱՐՁԵ

ԹՐԱՎԻՇ ՄԻՐԱՎԻՇ

Արձ - շի արձ - շի արձու - թիկ արձ - շի է լի ֆիստանի  
Բար - զի գոր - բա մը խառ - ցի Զիմ չիմ չիմ չիմ  
Հեմ կըրնար խա - դար արձ վոր - բա յե՞ վոր - բա մը սուր հո էլ - լիմ խա - դար.

Աղջի', աղջի',  
Աղջորիկ աղջի'.  
Էլի ֆիստանըդ հագի,  
Փոլքա մը խաղցի:

5 Չեմ, չեմ, չեմ, չեմ,  
Չեմ կըրնար խաղար.  
Ադ վոլքանեդ վոլքա մը տուր,  
Ես էլեմ խաղամ:

(Պարտիզակ, Մարիամ Մինասյան)

3 Ֆիստան - կանանց նորամուս փեշ:

4 Փոլքա - նորամուս ելքոպական պար:

6 Չեմ կըրնար խաղար - բարբառային ձեմ չեմ կարող պարել:

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊՐԻՎԱՏԻ

**Ճ**

**53** 

Չիմ մը, չիմ, չիմ մը, չիմ,  
 Չիմ կըրնա խաղար,  
 Ադ փոլքայեղ փոլքա մը տուր,  
 Ես էլեմ խաղամ:

5 Աղըշի', աղըշի',  
 Աղվորի'կ աղշի.  
 Էլի ֆիստանըդ հագիր,  
 Փոլքա մը խաղցիր:

(Մեծ նոր գլուխ, Հովհան, Թորիկլան)

ՀԱՐԻԿ, ՄԱՐԻԿ, ԻՆ ԿՈՎԻԴ:

ՄԱՐԻԿ ՊՐԵԺԵՎԱՆ

$\text{♩} = 80$

54 Հա - րիկ մա - րիկ իս կար - գե նա - րիկ մա - րիկ իս կար - գե,  
ըյո - ստա - ցի - ի մի տար իս ըյո - ստա - ցի - ի մի տար իս  
վը - րան մը - րու սուն կու - գա վը - րան մը - րու սուն կու - գա

ՀԱՐԻԿ, ՄԱՐԻԿ, ԻՆ ԿՈՎԻԴ:

ԱԽԵԼ ՊՈՏՈՎՈՅԱՆ

$\text{♩} = 80$

55 Հա - րիկ, մա - րիկ իս կար - գե նա - րիկ, մա - րիկ իս կար - գե  
ը հ - մուր - ցի - ի մի տար զիս ը հ - մուր - ցի - ի մի տար զիս


ՀԱՐԻԿ, ՄԱՐԻԿ, ԻՆ ԿՈՎԻԴ:

ԻՇՎԻ ՓՈՒՋՈՎՈՅ

$\text{♩} = 44$

56 Հա - րիկ, մա - րիկ սու իս կար - գե մա - րիկ մա - րիկ իս կար - գե  
ըյո - ստա - ցի - ի մի տար զիս ըյո - ստա - ցի - ի մի տար զիս  
վը - րան մը - րու սուն կու - գա վը - րան մը - րու սուն կու - գա

ՀՈՅԹԻՐ, ԵՐՈՎԱԿՈՒՅ, ԶԵՇ ԵՇԵՐԳԻ:



Հարի'կ, մարի'կ, իս կարգե,  
Հարի'կ, մարի'կ, իս կարգե:  
Քյոմուրշիի մի' տար իս,  
Քյոմուրշիի մի' տար իս,  
5      Վըրան մրոտ տուն կու դա,  
Վըլալն ընծի զռո կու դա,  
Օխա մը սապոն կերթա:  
Հարի'կ, մարի'կ, իս կարգե,  
Հարի'կ, մարի'կ, իս կարգե:  
10     Միս մորթողի մի' տար իս,  
Միս մորթողի մի' տար իս,  
Վըրան ճենճի հոտ կու դա,  
Վըլալն ընծի զռո կու դա,  
Օխա մը սապոն կերթա:

(Պարտիզակ, Մարիամ Մինասյան)

Փոփոխակ Ա.

15     Հարի'կը, մարի'կը, իս կարգե,  
Հարի'կը, մարի'կը, իս կարգե:  
Քյոմուրշիին մի' տար զիս,  
Քյոմուրշիին մի' տար զիս:

(Պարտիզակ, Ազնիկ Պոտոսյան,  
Մամա Փանոսյան)

3 Քյոմուրշի (Բրբ.)—ածխագործ:

6 Վըլալ—բարբառային հնչյուն՝ լվանալ, մաքրել:

7 Զռո կուզա—թրթ. զռո բախց, բարբառային ոճ, դժվար է՝ իմաստով:

7 Օխա—թուրբական կշռի շափ:

Փռվոյնսակ Բ


Հարիկ'կը, մարիկ'կը, զիս կարգե,  
Հարիկ'կը, մարիկ'կը, զիս կարգե,  
Բոլաջիկն մի՛ տար զիս,  
Բոլաջիկն մի՛ տար զիս:

(Օվաչը, դոկտ, Մ. Կարագյողյան)

---

21 Բոլաջիկ (ԲԲ. )—Աերկարար

ՄԱՄՈՒՆԻ, ՄԱՄՈՒՆԻ



Մամունի, մամունի, հավլա մ'եփե,  
էս ալ ուտեմ,  
դուն ալ ուտեմ:  
Մամունի, մամունի, հավլա մ'ըրե,  
5 էս մեկն ուտեմ,  
նորեն ըրե:  
Աս ի՞նչ փիսրողազ էք էյղեր,  
Աս ի՞նչ փիսրողազ էք էյղեր:  
Ազի՛, մեր տուն մանել էկուր,  
10 Ազի՛, մեր տուն մանել էկուր:  
Ճալ՛րդ սազած վար եմ զըրեր,  
Մինդերը առաջըդ փըսեր:  
Մեր տուն, ձեր տուն, մոտիկ-մոտիկ,  
Կերթանք կուզանք բոպիկ-բոպիկ:  
15 Մեր տան վերկ արտ մը զարի,  
Քանի քաղեմ, քունըս տանի,  
Դեստե ընեմ, զովը տանի,  
Գըրողը գա, յարըս տանի:  
Գընա՛, զըրող, զընա՛, զընա՛,  
20 Գընա՛, յաբըս զես կենճուկ է:

- 
- 1 Մամունի—մամիկ, բարբառը ալիկի հաճախ ունի մամույ ձեզ:  
7 Փիսրողազ (թրբ.)—շատակեր, որկրամոլ:  
11 Ճալ՛րդ—ճախարակ:  
12 Մինդեր—նստելու բարձ, գոշակ:  
17 Գեստե—փոմչ, իուրձ:  
20 Կենճուկ—երիտասարդ, մատղաշուկ:

Մեր տան վերեւ շատ կար մանշեր,  
Աղբարս գոն էլղեր չեմ ճաշցեր:

Ճերժակ աբա հազնողն էլղեր,

Չարժա սարըին փաթթողն էլղեր:

25 Զուխտայ դանայ բաշողն էլղեր:

(Գընչըլար, Վահրամ Տեղիրժենչյան)

22 Ճաշցեր—ճանշցեր, ճանշնալ, ճանաշել


23 Աբա—բրդից հոռաված վերարկու, վրանոց:

24 Չարժա սարըի (թրք.). շալժա սարըր—զլիի փաթթոց:

25 Զուխտայ դանայ—զուխտակ դանակ, բարբառային հնչուն:

ԱՐԴԻԿԱՆ. ՔԵԶԻ ՇԱԽՎՈՂԱ ՄՒ

ՄԱՐԴԱՄ ՄԻՋԱՎԱՅՐ

59 

**Աղջիկըս, քեղի՝ շափդա մը,**  
**Մայրիկիդ ա՝ յազմա մը.**  
**Հայրիկիդ ա՝ յազլը ֆես մը,**  
**Փուսկանու չունենա:**

5 **Աղջիկըս, քեղի՝ իփիք ֆիստան,**  
**Մայրիկիդ ա՝ պասմա մը,**  
**Պապայրիդ ա՝ չուխա փոթուռ,**  
**Ուշկուռ չունենա:**

(Պարտիդակ, Մարիամ Մինասյան)

- 
- 1 Շափդա—եվրոպական աղճատված բառ, կանացի գլխարկ:
  - 2 Յազմա (*թրթ.*)—կանացի զլիսի ծածկոց, դունավոր տպածու:
  - 3 Յազլը (*թրթ.*)—յուղոս:
  - 4 Փուսկանու—ֆեսի հարակից մետաքսյա ծոս:
  - 5 Իփիք—մետարս, մետաքսյա:  
Ֆիստան—եվրոպ. նմանությամբ կանացի փեշ, հագուստ:
  - 6 Պասմա—բամբականյուռ ծաղկազարդ տպածու:
  - 7 Չուխա—բրդյա տեղական գործվածք, նաև՝ հազուստ:  
Փոթուռ—շաբլարի նեղ տեսակը:
  - 8 Ուշկուռ (*թրթ.*)—շալվարի կապ:

ԱՐԵՎԱՏՅԱՆ ԿՐԵՇՆԱ ՅԱՄԱՆԻ

ՏԱԳԻՐԱՆՈՒՆ ՓԱԹԻՆՅԱՆ

**J. = 60**

Աղ - չի - կըս. քե - զի  
ֆո - րին կա - լոշ. մայ - րի - կիր ա'  
ըս - կար - - բին. պա - պա - յիր ա' ըուիս մը չա - բուիս.  
սըն - ըմ չու - նա. սըն - ըմ չու - նա.

5    Աղջիկըս, քեղի՝ ֆոթին կալոշ,  
Մայրիկիդ ա՝ ըսկարբին,  
Պապայիդ ա՝ չուիս մը շարուիս,  
Սըռըմ չունենա:  
  
5    Աղջիկըս, քեղի՝ լանդոն մը,  
Մայրիկիդ ա՝ յայլը մը.  
Հայրիկիդ ա՝ քելոտ էշ մը,  
Սեմեր չունենա:

(Աղպաբազար, Տիգրանուճի Փաթինյան)

1 Յոթին կալոշ կամ՝ փոթին կալոշ—եվրոպական կոշիկ, կրկնակոշիկով:

2 Ըսկարբին—եվրոպական նմանությամբ կիսակոշիկ:

3 Չուիս—չուխտ, զույգ:

Չարուիս—տեղական կաշվից կարված սովորական մուճակ:

4 Սըռըմ—կաշվե կապ:

5 Լանդոն—եվրոպական փակ կառքի մի տեսակ:

6 Յայլը—ձիու կառը, որ զապահակալու է:

7 Քելոտ—քել, զոնչ, քոսոտ, խոցոտ՝ իմաստով:

8 Սեմեր—բնոնատար կենդանիների համար սովորական կարծր թամբ:

ԱՐՁԵԱԱՐԵ՝ ՓԱԹԻՆԻ, ԿՈԼՈՆ

ՄՈՂՈՒՏ ՓԱԹԻՆԱԱՐԵ,

61

♩ = 66

Առ - չի-կան' փո-րին կա-լոշ. առ - չի-կան' փո-րին կա-լոշ.  
մայ - բի - կան' ըս - կար - բին. մայ - բի - կան' ըս - կար - բին.  
հայ - բի - կան' ա' չա-րուխ մը. սը - ռըմ չու - նե - ա հա.

Աղջիկան՝ փոթին կալոշ,  
Մայրիկան՝ ըսկարբին,  
Հայրիկան ա՝ չարուխ մշ,  
Սըռմ չունենա:

- 5 Աղջիկան՝ դումաշ ֆիստան,  
Մայրիկան՝ պասմա,  
Հայրիկան ա՝ ժառղոտ ֆես մը,  
Փաւսկուլ չունենա:

(Աղաբազար, Սողոմե Փաթինյան)

5 Դումաշ—ելքոպական հյուսված հաղուստացու  
7 Ժառղոտ—ժանգոտած, լուզոտած

Pure water!

L.0.9. ՀՈՎՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԻՄ ՄԻՋԱԼՅԵԱՆ

*d. = 50*

Լազ հավասը կը կը կը կը կը կը կը կը  
Սուշեն թե - բած օս-կիմ ու հիմ Սուշեն թե - բած օս - կիմ ու հիմ  
Սուլ - բած հար-սիս նի - տը կա - խիմ Սուլ-բած հար - սիս նի - տը կա - խիմ

L.0.9. ՀՈՎՈՒԹԻՒՆ

ԱԶԳԻՆ ՊՈՏՈՎԵԱՆ

*d. = 50-60*

Լազ հավասը կը կը կը կը կը կը կը կը  
Սուշեն թե-բած օս - կի մու-նիմ Սուշեն թե-բած օս - կի մու-նիմ  
Սուլ - բած հար-սիս նի - տը կա - խիմ. Սուլ-բած հար - սիս նի - տը կա - խիմ

Լազ հավասը,

Կը կը, կը կը,

Լազ հավասը,

Սա ավանդական շան-դյուլումների կամ մանիների ստվար շարքից և ամենուր տարածված բառականերից մեկի մի ասքերեակն է, որ օրոր երգողը երգի բառերը հիշելու պահին բնազգաբար հաղորդել է: Այսպիսի պարագաներում, ինչպես ուրիշ տեղեր էլ, չենք ցանկացել գուրս հանել դրանք, որովհետև պարունակությամբ, այնուամենայնիվ, կապված են ամբողջականությանը:

Գալով Աձառյանի այն ակնաբակին, թե «այսպես իմանալու է նաև երգիս երգված եղանակը», անհամեշտ ենք համարում նշել, թե ինչքան է այս երգներ եղանակը: Եթե ունեն, կորատից փրկելով: Երեւ ունեն ասացինք, որովհետև մեր ավանդական

<sup>1</sup> Մեղ թղում է թե տնասկել բառը տաղագրական վրիպակ պիտի լինի: Տնասել ասել կուպիկ, այսինքն՝ տուն-տուն անել, չափի ու կշռի բերել, տաղաչափական միավորները բաժանել այլն:

անցյալից մնացած բեկորները միայն երգեր չեն եղել, որ երգվում էին եղանակով, այլև ընտիր ու իմաստուն քառակիներ, որ ըստ պատշաճի հանդիսավոր ուրախությունների կամ սպա արարողությունների ժամանակ մատուցվում էին համար անգրագետ, սակայն շատ շնորհալի շամպոնների կողմէց:

Այս երեք խսրային բնագրերի վրա ունենք միայն երկու եղանակ, որովհետև № 1 և 2-ը նույնամաս տարազ ունեն և № 3 եղանակը միայն բորովիքին տարբեր է: Ուշադրության ենք հանձնում № 1 և 2 եղանակները, որ նույն հենքն ունեն, բայց բորովիքի ցուց են տախու յուրաքանչյուր երգողի ինքնահատող երգելու ոճն ու շնորհը:

Խոսքերում թեև կրինություններ կան, բայց բնագրերը առանձին-առանձին ներ կտեղի, ցուց տալու համար, թե ինչպես ամեն երգող խոսքերի իր շարքին ունի իր հիշողության կծիկի թեկները բանեկու ժամանակի: Մանավանդ, որ երբեմն փոքրիկ մի հավելման նորդիվ ամբողջությունը անսպասելի զարգացում և իմաստավորում է ստանում, ինչպես № 3-ի 18 և 19 տողերը, որ № 2-ում 13, 14 և 15 եղանակը են վերածվել «տարիդ մեծանաշամպում», որ պատկերը անհունապես ընդարձակում է ճոխացնում է:

Արժեք ուշագրության հանձնել նաև № 2-ի բնագրի 22-27 տողերը, ուր բառաշրջությամբ, երկու տարբեր, բայց նույնարձ հումքու պատկերներ են գծվում: Ահավասիկ.

Քանի չի լամ ըսի,	Քանի չի լամ՝ կըսիմ,
Սըրտիկըս կու լա.	Աշքերըս կու լա.
Սըրտիկս օր չի լա՝	Աշքերս օր չի լա՝
Աշքերըս կու լա:	Սըրտիկըս կու լա:

Այս տողերը, ինչպես նաև զրանց № 28 փոփոխակը ողբի կամ գովքի մի մասը կարելի է համարել, փոքրիկ մանկան հոգվատիքի վրա արտասանված՝ խորունկ հուզումով: Բայց «օրոր»-ի մեջ դրանք ևս, № 28 երգից անկախ, պահպանեցինք, մեր որդեգրած սկզբունքին հակառակ չգնաւու և № 2 երգի բնագրից իր ամբողջությամբ տալու համար: № 1 «օրիմ», օրիմ»-ը երգող Աղոթք Պատոսանց այդ երգը լսել է «գաշեկ Եղսա Հալայից» («ալա» թրք, մորաբուլը, գործածում) ի բրեք Հարանքի արտահայտություն):

«Սալբնջախ եմ ձերը երգոց երգող Հաջի Մարիամ Միհնասյանը Պարտիզակում է ծագել և Զենկինի երգում հարս եղել: Լսել է Հենկինիցից մի մամայից: Բացի բնագրի խոսքերից, տվել է նաև Ցուրբերին բառերով մի քառակի, որի առթիվ մեր ծանոթագրության մեջ այն ժամանակ եղել ենք. «Երգում է վերի եղանակով»: Այժմ շենք հիշում այս քառակի երգել է, թե ոչ: Սակայն, արժեք պահել այդ քառակի, հակառակ իր խորդուրդող թյան, որի երկրորդ տողը վերի եղանակին հարմարում է, մշուները՝ ոչ Ահավասիկ քառակը, ինչպես որ կա մեր սկզբանական արձանագրության մեջ.

Նեննի գելիմ՝ ուլուսըն,	
Ուլուսընը բեշիկերդ բելուսըն,	
Դրզմար չարչափ իշլեսըն,	
Սեն ունթօննե յաթ, յավուում:	

Ազատ բարգմանուրյանը.

Օրոր ասեմ՝ քընանաս ու քընանաս,	
Օրոցիկ հետ մեծանաս,	
Ազշիննը քո ասվանը թող հյուսն,	
Վըրան պառկիս՝ քընանաս:	

մանքների պատճառով է, որ Հայ ժողովուրդը իր տառապանքների տառապանքով տառապել է:

Ահա թե ինչու նա երկար զարերի ընթացքում ավելի շատ իր կողին է կու տվել հուսալով և միշտ հուսալով, թե լավ օրեր են գալու եվ երբ պղպջակի պիս լավ օրերը իր դուս շնմնան մոտեցել են, այս նույն ժողովուրդն է, որ ուսերին իշած ծանրությանց թիթացած, թեածել է մինչև յոթ երկինքները և ամբողջովին խնդություն դարձած պարել ու կարավել է: Ի՞նչ հոգ, թե լավ օրերը կարճ են լինում և խարուսիկ: Զե՞ս որ օշակը կշնանա, երբ երեխան «ընդա» կանչի փեսա և աղջիկը՝ հարս կլինի:

Արդ, տառապանքի այդ լարը նույնքան նշմարելի է նաև հարսանեկան երգերում: Պատահական չէ, որ հարսանեկան այս երգերի բանաստեղծության մեջ գտնում ենք պատկերներ, որոնք նույնությամբ օգտագործված են նաև ողբերում և պանդիստության երգերում: Վերջապես, հարսանեկան երգերի որոշ եղանակներում ևս զշալի են վշտի տրամադրությունները:

Ինչպես երեսում է, ալագոյզուների շափին ու կըսին Հայոմարող տողեր կան, որ պարզ խամարված պետք է համարի: Ընդհանրապես, եթե նկատի առնվի, որ այս ալագոյզուների թե՛ տաղաշափական և թե՛ եղանակային կառուցվածքին հատուկ է մի որոշ կազապար, որ երկար զարերի ընթացքում առանց մեծ աղարտումի հասել է մինչև մեր օրերը, կարելի է աայս զեթ ենթարքել, որ ալագոյզուն անունով մեզ հայտնի այդ երգերը ևս անցալի հայ ժողովական երգերի (բանաստեղծության և եղանակի) մի որոշակի տեսակ էն ներկայացրել (և թերևս հայերն մի ընդհանուր անուն չեւ ունեցել են), ինչպես անտունիներն են, մանիները կամ շանգուլուները և այլն:

#### 4. Մենք, ա'յ աղվոր աղջիկ.

Ահավասիկ ինդության մի երգ, որ երգում է պարելով ու մեծ խրախնաճով, երբ հարսները հարսնակ են գալիս: Եղանակը, հակառակ իր պարավին կշռությն, մոտիկ է հարսնեկան ծանր երգված եղանակների ելեկցային կառուցվածքին, ոչազբան երեսով, որ տեսնում ենք նաև Ակնի ու այլ վայրերի նույնանման երգերում:

Այս պատառքի ընթարձակ և երկար տարբերակները՝ թե՛ խոսրով և թե՛ եղանակներով, գտնվում են Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր կողմերում:

Նշմարելի է, թե ապանինի պիտի մասնիկն այսուղե շրջածած է պի-ի, ինչպես Ակնա շրջանում նույն մասնիկը փոխված է ալի մասնիկի:

«Յար լանի, յար լանի...» տողը, պիտի տեսնենք՝ «Յար քանիշ-ների ընդարձակ շարքից է, ցույց է տալիս, թե պարզ ժողովուրդը ինչպես ընթարությամբ է օգտագում իր ունեցած պաշարից: Անգալաբար կամ բնագով համար իրար մոտ են բերում տողեր կամ բառեր, որ լավագեն հարմարվում են միմյանց, նույնիսկ նոր իմաստ են ստանում: Չքոռանանք, սակայն, չիշել, որ երբեմն էլ անհամ ու անիմաստ են լինում, մասնավորապես պարերքերի մեջ, երբ խոսր հանպատրաստի շշնդումը է ծիծաղ և զլարձություն առաջացնելու համար:

#### 5, 6. Մի՛ լար, մարիկ, մի՛ լար.

Հարսանյաց այս երգը, զրեթե նույնանման եղանակներով, ոչ միայն Բո-Մանիայի շրջանի բոլոր կողմերում է երշգում, ալի տարածված է Հայաստանի զանազան զավառների մեջ: Այդ երգի խոսքերը և եղանակները, որքան էլ տարբերվեն իրարից, մի ընդհանուր արմատ ունեն, որը կարծում ենք, թե դարերի խորքից է գալիս:

Ալստեղ նշանակել ենք երեք տուն միայն, որ հարսի կողմից է երգվում մայրական տնից մեկնելու ժամանակ: Հրաժեշտի կամ բաժանման, պանդստության կամ մահվան գդացումներն արտահայտող տողիների շարքից են փրչված:

7. Ես չեմ էրքար, մարիկ.

8. Մշկդիլիկ զոտի.

Այս երգերը հարսին մայրական տնից դուրս հանելու ժամանակ, նրան լուցացնելու ժամար են երգվում: Այստեղից էլ՝ «լաց զրեք, լացեք արտահայտությունը: Շատ բնական է, որ երգողները պիտի օգտվեն լացի, որի ու զավթի ամենահարուստ շնմարանից: Եղ այդպես էլ եղել է:

Վաղածամ կամ նորոգ մեռածի ման եկած տեղերում կանգ առնելով լաց դնելու կաղըմաթիքի վրա լալու սովորությունը, որ մինչև ամսօր գոյություն ունի, նույն է գալիս, ոչ միայն բրիտանական շրջանից, այլև հիմանոսական ժամանակներից: Մեզ թվում է, թե մեռածի դագաղը ուսամբարձ տանելու և զերեզմանոցի համրի վրա հանգստյան բար կոչված մասնավոր տեղերում վայր դնելու հին սովորության արձագանքներն են այս պատառկիները:

Տակավին կարելի է այլ ճամբռով էլ՝ թերականորեն այս հին սովորության արարողականությունը մենքնել: Ինչպես հայտնի է, նշանտուքի արարողությունը շատ տեղեր նշանդիմ է կոչվում, որը ավանդական որոշ ծիսակատարությունների հետ է կապված: Ըստ այնմ, եթե լաց դրեմը ընդունենք իրու մեկ բառ, ինչպես նշանդիմ, այն ժամանակ լացրեմ լացեմ-ով, որը թերթողական արմեստի մեջ նմանաձայնության մի նմուշ պետք է համարվեր, երկուողի կառուցվածքը ավելի կուռ կլինի, պարունակությունն էլ ընդլայնված և իմաստավորված:

Խոյեմ և խոհանին բառերը դասական գրաբարի և թե նոր աշխարհաբարի մեջ մշտապես գործածված բառեր են: Բայց ի՞նչ ճանապարհով են մուտք գործել կամ մնացել այս բարբառի մեջ, քանի որ բարբառը իր ամենօրյա մերերի մեջ այս բառերը չունի կամ չի օգտագործել, մեզ համար հարցական է: Եթե ընդունենք, թե այս տարեց ու անբազմ մամիկները իրենց հնամենին զանձատան մեջ արգեն ունեն այս խոսքերն ու ասուցիները, այդ պարագային զարգան աշխարհաբարի ազգեցնությամբ ներմուծված լինելու հավանականությունը որոշակեն կնքալու:

Ա 7 և 8 երգերը, որ ինչպես ասացինք, հարսին լացացնելու երգեր են, երգվում են թե հարսնելուրենի և թե հարսի կողմից ողբանին, ինչպես ցուց է տալիս եղանակների գողողացող ու մարմուռն ընթացքը նույնպես:

Երածառական տևակետից Ա 7 եղանակը լազարին ավելի ընդարձակ և բարդ կառուցվածք ունի, ուր, մասնավորապես, ընական բնշությամբ ուշադրավ է ու դիմող ձայնին հարակից, մի թեմոլ և մի թեկար հնչյունների գործածությամբ գոյացող լադային փոփոխություններ: Նկատելի է նաև երկրորդ մարդի բառի համելումով կատարվող տոնալ-նական անցումը:

Իսկ Ա 8 եղանակում, որ լագային տեսակետից ավելի պարզ է և միատեսակ՝ Աս, սի թիմոլ, որ զիեզ, ոն՝ զի զիեզ-ը նախ գործածվել է իրեք դիմոլ ձայնին հնեակ, ապա, առաջին նախագաստիթյան վերջում («օգերով») ռե-ն իրեն է բաշել ու դարձել տոնիիկայի նոյակի վրա հանջառ ձայն:

Թուրքերն տեսակետը կարեոր ենք համարել հայերենին զուգահեռ դնել, նախ՝ որ պարունակությամբ շատ սերտորմն կապված է հայկական հարսանիքի արարությանը,

Երկրորդ՝ հայերենն ու թուրքերենը միմյանց փոխադարձարար լրացնում են: № 7 երգի 19—20 երկուող վերաբերում է հարսին հինայելու արարողությանը: № 8 երգի 9—12 տողերը երգում են հարսին՝ մոր տանից բաժանելու առիթով: 13—16 տողերը ասված են հարս զնացող շքավոր աղջկա համար, վերցին երկտողը՝ գուղից դուրս հարս զնացողի համար:

### 9. Ասմային տակեր.

Հարսնասի այս երգը նույնպես երգլել է հայերեն ու թուրքերեն: Եղանակի կառուցվածքը հիմնապես նույն է: Թուրքերեն երգվածը ամփոփ է, իսկ հայերենում խնամի և մարից բառիրի համար եռեղող ունեցող եղանակային մշակումը բացառիկ առիթ են տակիս դիտելու ժողովրդական երգի զարգացման ընական օրինաշափությունները:

Ստորև այս երգի հայերեն և թուրքերեն բնագրերի մի ընդհանուր համագրություն ենք տալիս: Այս համագրությունը, որ գոտնվում է ֆրանսարմակ սյունդցիների կողմից հրատարակված մի գրքութիւնից, մեր ուշադրությանը հանձնեց Զատիկի Ֆանտազյանը: Զատիկի մամայի հիշողությանը հետևելով ճշտել ենք բարեառային ինքնահատուկությունները միայն, պահենով հարսնասի արարողության նկարագրական շարքը:

### ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

Հարսի տերը. Չալա, չալա, դափունուզա գիլդիեր,

Գիլդիեր դե՝ ալլունուզա զիրգիեր:

Փեսայի տերը. Երկուշարիթ առտու, մեծ տայզուն (տայզարի) խաշը,

Սյունդցունց աղջիյ, խընամի, կուռեցունց հայու:

5 Հարսի տերը. Էլամ հավան նայիմ, աղջիյ, այտազ (ցուրտ) կը լմանի,  
Հուրմայով (արմավով), շեքրով, խընամի, պահած կլմանի:

Փեսայի տերը. Ասմային տալերը, աղջիյ, գետինը կավին,

Աս աղջոյ աղջիյը, խընամի, մեռող կը վայլի:

Հարսի տերը. Բոււմային բարը, խընամի, մեռող կերցուցի:

Այս աղջոյ աղջիյը, խընամի, ափս (կամ՝ ձեռքին) թրոցուցի:

Փեսայի տերը. Դուումչին (ոսկերին) է շըներ, աղջիյ, մաններուու մաննի:

Քեզ առնող իշգիդ (իգիթը), աղջիյ, ալ թող ըը շնոնի:

Հարսը. Անա բանա վերմեն, մարիյ, շու քել օդանա,

Ալլահ բելասը վերսին, մարիյ, սերիք օլանա:

15 Փեսայի տերը. Մերիք օլանըն, աղջիյ, էլի շն օլունն:

Շն օլուննազա, խընամի, իշգիդ սազ օլունն:

Հարսը. Աս քուզ գործողին, մարիյ, մանները մաշի (կամ՝ թափի),

Քու մեկ համարի աղջիքը, մարիյ, մի՛ տար օտարի:

Փողովուզը. Մանըըըը բնյուկ զըր աղջիյ, շիշեղին շոր դուր:

20 Էլ էլինն զիզերսին, աղջիյ, իթտիբարըն շոք դուր:

Հարսի տերը. Էլկանդ տունն օր էլիտա, աղջիյ, ինելոք պը կենաս,

Մորուդ, պատուզմբնե, աղջիյ, կարոտ պը մընաս:

Հարսը. Ազգարա անցավ դարձավ, մարիյ, զիլցիք (դեպի կեր) նայենավ,

Մայման (թաշկինակը) աշըռն զըրավ, մարիյ, լաց զըրավ, լացավ:

25 Ժողովուզը. Ինչոք քյուրբին (կամուրչը) էլիտա, աղջիյ, էտերդ նայի,

Քյորին օր ասնիս նե, աղջիյ, ումուուզք կըյի:

- Հարսը. Ինչու քյորբին էլիամ, մարիյ, էտեսս նայն,  
 Քյորբին օր ասնիմ, մարիյ, ումուտըդ կըցյն:  
 Փռպալսդ կոյլեցավ, մարիյ, բախնան նետեցիր,  
 Աև ազգու ազշիլը, մարիյ, ափեղ թրոցուցիր:  
 30 Հորդալս կոյլեցեր, մարիյ, բախնան նետեցեր,  
 Ամմեն մոհապելի (Հանգեսի), մարիյ, ոնծի հիշեցեր,  
 Ալթըք բեն բու էլի զելիմեմ,  
 Գուռղու թինելի, վաղամամ,  
 Ելիքի զիրի օշամամ:  
 Փեսայի տերը. Աղջիյ, բեզի կըսեմ, խելոր պը կենաս,  
 Հորըն-Հորընմենեն կարոտ պը մընաս  
 Փողովուրը  
 (Փեսայի կողմից). Աղջիյ, հըմա բու մայրկան վըրա ձուն կուզա,  
 Աղջիյը հայս կըլլա կըսէ կելլա տուն կուզա:  
 40 (Բարսի կողմից). Կշտահըլը (ախորժակով) էս էկեր, խընամի, խընամուզ մեյլեն (թաղը).  
 Երկուշաբինեն էտե, խընամի, առ զինուոր թիլեն (փորձանը):

### Թաւրիենն առղերի բարգմանուրյունը

- 1—2. Նվագելով ա՞մա հասանք ձեր զուռը,  
 Նվագով էլ եկանք մտանք ձեր տունը:  
 13—14. Մայրիկ, ինձ մի՛ տա այս բաշալ տղին,  
 Աստված արժանին տա պատճառ եղողին:  
 15—16. Պատճառ եղողի տունը, աղջիկ, թող շեն մնա,  
 Շեն թող մնա, խնամի, կտրիմը ուզ մնա:  
 19—20. Սնդուկը խոշոր է, աղջիկ, օժիտը բիշ է,  
 Օտար տուն զնաս՝ հարգանք շատ է:  
 33—35. Այս տուն այլիս զալ չեմ կարող,  
 Ուղիղ զեպի (Հացի) տաշոր զնալ չեմ կարող,  
 Առաջլա (աղջինության ժամանակվա) պես լինել չեմ կարող:

### 10. Ո՞ւր է ասոր հարն ու մարը.

Ա արարերակը փեսա հազցնելու երդ է: Փեսա հազցնելը ավանդական այն արարություններից է, որ մինչև այսօր իսկ զոյտիլուն ունի: Բնագիրը բավականին խառն է և պարունակում է այս հանգիսավոր արարողությանը հատուկ խոսքերի մի պատառկիը միայն: «Ո՞ւր է ասոր հարն ու մարը» խոսքերը, որոնցով սկսվում է մեզ երշված երգը ավելի շուտ արարողության վերջին մասին են հատուկ, ուր երգի ընթացքը աշխաւճուռ-թյուն ստանում, խոսքերի կշխն էլ սեղմվում է: Համեմատիր, օրինակ:

Հանեցեր հինը, հազուցեր նորը...

Ո՞ւր է ասոր հարն ու մարը...

Ստորև Ֆարհատի զրիքը բերված արարերակներից երկրորդի մեջ տեսնում ենք շափական կշաբ այտիսի փոփոխություն, ինչ որ մեզ ենթազրել է տալիս, թե երգի սկզբնական, մազթանըթի մասը բրոր հանգարտ ու հանդիսավոր է երգվում: Բայտ ալլզ մեր ձեռք բերած եղանակը պետք է մերի համարել: Վստահ ենք, թե այս երգն իր ամբողջությունը կազմում է մարտիրոս անձնությունը:

թշամբ կարելի է դանել զեռ, ով զիտե, ո՞ր անկյունում աստանդական ընկած բութանացի՝ մի մաժիկի շրթունքների վրա:

Ա. Փեսան հազվեցուցած ատեն  
(Յաղագայի գուղբերից)

Գեղին վերև ծառ սալորի,  
Սալորն ինկավ ըը դորի,  
Քեզ զրկողը ըը հալուորի:  
Արտերը բուսեր բուսը,  
Վերիսազում կ'ելլե լուսը:  
Արիստակես ժարեց ծովը,  
Տասերկու աշակեր բովը:  
Օրչնես սալզը, օրչնե փեսան,  
Օրչնե ամենը ալ միաբան:  
Էս լուկայ. Սավուու տեսն  
Օրչնե այս նոր թագավորը:  
Ո՞ւր է ասոր հարն ու մարը,  
Թող զան տեսնեն բոյն ու բուսը:  
Ո՞ւր է ասոր բուրն, աղբարը,  
Թող զան տեսնեն եղրոր շնորհը:

և այլն:

Բ. Խոյնի մեկ ուրիշ տարբերակը

Առեր շնորհոր, տեսեր շնորհոր,  
Այս թագավորին, այս նոր մանուկին:  
Հանեցին հիներ, հագուցին նորեր,  
Այս թագավորին, այս նոր մանուկին:  
Հագուցին մինթան, հագուցին մինթան  
Այս թագավորին, այս նոր մանուկին:  
Հագուցին պսակ, հագուցին պսակ  
Այս թագավորին, այս նոր մանուկին:  
Ո՞ւր է նա սոր հայրն ու մայրը,  
Թող զան տեսնեն որդուն շնորհը:  
Ասե՞ր, որ զան բուրն, եղբարը,  
Որ զան, տեսնեն եղրոր շնորհը:  
Լուսալորիչ Հայոց Հայրը  
Օրչնե՞ այս մեր թագավորը:  
Զարշարվեցար, իշար հորը,  
Օրչնե այս նոր թագավորը:  
Ի մեջ հորուն աղոթեցար,  
Հըրեշտակաց հետ խոսեցար.  
Օրչնե՞ փեսան, օրչնե՞ կնքահայրն,  
Օրչնե՞ ամենըս ալ միաբան:

Դատելով այս երկու տարբերակների պարունակությունից և սրանց հետ մեր զրի առանձ Ա տարբերակի համանառությունից, զրանք երեքն էլ հալավի օրջության ծեսից հետո երգած հին տաղի մնացորդ են, որ երգնկացի կողմերից (տե՛ս վերը թերված Ա տարբերակը) Բութանիա զազլողների հիշողության մեջ են մնացել: Ի դեպ, այս տերստից նկատելի է, թե ինչպես ժողովրդի բերնում ավանդական մնացորդները ետ ու առաջ են՝ դրվագ, ձեռփոխված, ամելափոխված, ամելափոխված կամ պակասնեցված, շատ տողեր էլ պարզաբեր մոռացված, զուրում, զուրում են ընկուում: Այնուամենալինիվ, այս փոքրիկ հատուկտորներով հնարավոր է զանուում զրիթն ստուգորն մոտենալ նոր զաղութի բարեին ու պատմականին: Այսպիս, Երզնկայի Սավուու տեսն, Լուսալորիշ Հայոց Հայրը, Եթոսակն և այլ այսպիսի ակնարկությունները ժողովրդի հավատալիքների ու նախապաշարումների զիտակից կամ անդիտակից պահպանումն են ցույց տալիս, իսկ տեղական կենցաղի մասին նորանոր հավելուները, երդիծանքը, պատշաճ կամ նույնիսկ անպատշաճ զվարձախոսությունները, երբեմն զերպանցորներ հաշող, երբեմն էլ անհաջող, զաղափար են տալիս ժողովրդական բանակության շարունակական կազմակորման ընթացքի մաւին:

Այս նկատողությունը պարզելու համար ցանկանում ենք ուշագրության հանձնել մեր զրի առած տեքստի Բ տարբերակը Այս տարբերակը մեջ հազորդել է Պարտիկակից Աղարազար հարս զնացած մի մարդիկ, որ 1915-ի արտորից աղատելի և Ամերիկան էր նետվել ու նոր տոռն-տեղ զարձել: Ամերիկայի բարբերին բակական ընտելացել էր, բայց իր աղջկնության օրերի բարբերն էլ չէր մոռացիլ: Ծատ բան էր իշխամ, միայն թի շատ բան

Էլ իրար էր խառնում, շփոթում: Երդելու մեծ շնորհը չուներ, բայց խոսքերի հին թե նոր առատ պաշար ուներ:

Այս տարրերակը ոչ թե փեսայի, այլ հարսի հաւաք հազցնելու գովերն է Այս առջիվ պետք է հիշենենք, որ հարսը հազցնում են կանանց ներկապությամբ, իսկ փեսան՝ արանց: Ուրեմն, դժվար չէ անդրագանալ, թե հարսի հազցնելու ժամանական ավելի խոր հըրդագորություն է ունենում, քան փեսան հազցնելու խրախճացին հանենք: Ավելորդ շի համարվի այս առթիվ վերստին կրկնել, թե մեր ավանդական սովորություններն ու բարբեց պահված են առավելապես մեր մայրիկների շնորհիվ:

Ուշադրության ենք հանձնում մասնավորապես «Տարին դրին վարի դուռը» բառակի ձևավորումը («Համեմատած հաջորդ թվ 11 և 12 երեքի նույնանման առօքերի հետ», որը ժողովրդական երդին բառու թվուառաջությամբ կամ փոքրիկ փոփոխմամբ ու լրացմամբ, շարադրական հյուսվածքի և իմաստի նրանությունն է նշմարվում: Հաշորող բառակը՝ «Բրոսային լյուր շրանա», հարսնեկան իրավաների ժամանակ հարսին ու փեսային ուղղվող երգիծական զիմախոսություններն են արդեն: Դիմախոսական ձեր շարունակական է և այս անկամ այլևս տեսարանը հեռանում է դեպի վիճակի խաղերի դաշտը, որը աղջիկները ինդայով ու կատակելով, հարց ու պատասխանի ձեռվ իրենց բախտ են բացում: Խեկ վերցին տողը «Աս կրտը, կրտը, որ ժամանակին առեղջամածային հանկերք է թվացել, այս պահուս մեզ հիշեցնում է վիճակի խաղերի վառվագունության զվարճակի պատկերը, երբ աղջիկներն իրենց մտքից անցածը մանկական թոթովանքի են փոխում, կարծեն ասել ուղելով. .

Հա՛, զըտի՛, զըտի՛... կըտ-կըտ,  
Սա սուտը զըտի՛... փըթ-փըթ...

Տարրերակների մասին մեր տված բացարձությունները առաջին ակնարկով երկահական կամ թերեւն անհարի խեկ կարելի է նկատել, սակայն մեզ թվում է, թե այդ բացարձությունները աղջապական նյութեր հայսքովների համար օտարակար կարող են լինել երկու տեսակեացի: Առաջին, անցյալի հիշողություններով ապրող յուրաքանչյուր երգով կամ արտասանով, հոգեկան ապրումների իր ինքնահատուկ հաջորդականությունը ունի: Այսպիսի ինքնահատօնությունների վերլուծման փորձերը օժանդակում են եղած աղջապական հավաքածուների մեջ նմանորինակ երեսովների համակարգմանը: Երկրորդ, բոլոր երաժշտական տեսակետից, որ ամենակարեռն է, ատրեք վայրերի մեջ մնացած և նդանակները դեռ չեղործած այսպիսի պատառիկները միմյանց մոտեցնելով և ըստ լուրացնուր աղջանական ծեսի (ինչպատճեն փեսայի զովք, հարսի զովք, վիճակի երդ և այլն), ըստ խորերի և եղանակների գասակարգելով, կարելի է ծառայեցնել միշնագարյան տաշըրի և այլ, ավելի հին զրավոր ավանդությունների համեմատական ուսումնասիրության:

11. Առավոտանց կանուխ-կանուխ.
12. Առավոտանց առ ի՞նչ շաղ էր.
13. Ասօր մեր յախուն հարս կրլա.
14. Արդար մազեր քակեցն.

Այս շարքի երդերը եղանակային կազմությամբ և խոսքերի պարունակությամբ նույնանման են և իրար լրացնող: № 11 և 12-ը հարսը բողքելոց (բողքելը հարսի գլխին բողքելու հանդիպավոր արարողությունն է) հետո երգված երգեր են, իսկ № 13 և 14-ը՝ հարսին լացացնելու երգեր են, որ աղլամա էլ են կոչվում:

Հարսանեկան արարողության այս երկու պատկերները (Հարսը քողքելը և լացացնելը) այստեղ իրար են հաշորդում խոսքերի և եղանակների նոր տարազի տակ:

Տաղաջափական կառուցվածքը առաջին հայացքից թվում է, թե դասական հին ու նոր գրականության մեջ ընդունված և համտնի ութուանին է, որ 4+4 հատվածների է բաժանվում ընդհանրապես: Այդպիս էլ է № 11 և 12 երգերի մեջ, որոնց լավ պատշաճում է եղանակների կշռն է: Խոսքերի և եղանակի հավասարաշռվածությունը պարագին ընթացք է տալիս երգներին:

Հաջորդ № 13 և 14 երգերը, սակայն, որ գարձալ ութուանի շափով են երեսում, թե՝ խոսքով և թե՛ եղանակով տարբեր կշռն ունեն: Հակառակ մի քանի հատվածների անորոշության կամ աղավաղման հետքերին, որոշ կերպով տեսնվում են 3+5 կամ 5+3 չափերը և կամ սրանց ստորարածանումները 2+3+3 և 3+2+3: Նույնիսկ գծվար չէ նշարել անառնի երգերի չափ՝ 2+5, 3+5 հիշեցնող տողեր: Հիշենք այս առիթի, թե ինչպիս ամսութիւնների, նաև ալազուղլաների տաղաջափությունը հիմնված է այս հնգունյա վերագրության վրա: Շարակնոց երգերի մեջ մասի վերագրության մեջ էլ որոշակի նկատմած է հնգունյա չափաբերությունը: Մասնավորապես № 14 երգի եղանակային ենթէց ամենա մոտիկ է հոգերո երգերի ոճին, որ մի պահ հազվում սև մտածելու, թե, ինչպիս ասած է ասում «Համար հազվիթից է լինում, թե՝ Հավկիթից՝ հավից»:

Այս կողմնակի ակնարկությունը անհնու պատճառու ուրիշ բան չէ, բայց եթե այս հարսանեկան երգի աղլամա կուսումը Հարսը լացացնելու ծեսը շատ ընդհանուր է մեր բնագավառի այլ վայրերում ևս, բայց երգողներից և ոչ մեկը մենց չի հիշել, թե այդ ծեսը աղլամա է կոչվում: Սակայն, աղլամա բառն ինքնին շատ հատկանշական է: Ցորքերին կամ ափին հին օտար մի բառ, որ լաց, լալ, լացացնել իմաստի հնտ է կապված, ինչը որ գաղափարի գուգորդությամբ հիշեցնում է հին ալվանդական բարբին հատուկ ծեսերը, «Լաւունք»-ները, ըլալկանք» և այլն:

Այս շարքն էլ, որեմն, պատկանում է ալվանդական երգերի կարգին, իր չափաբերական, ինչպիս և երաժշտական, մասնավորապես՝ լազային հատկանիշներով: Բանաստեղծական վսեմ ուզ, նմանաձաւյնություններն ու նմանաբանությունները և պարզ ու քննուց զարգալածքները ևս բնորոշում են սրանց հնությունը:

Մամա Քեմիրյանի հավելվածաբար տված երկուողը (№ 12, տող 7—8) հարսանեկան երգերի այլ շարքի մի մաս է կազմում: Մաման չանում էր այս տարբեր ստեղծ շարված-կտորն էլ նոյն եղանակով երգել, բայց զեկուում և երգի ընթացքը կորցնում էր: Այն ժամանակ մննե նշել ենք այլ չափելու եղանակի փոքր փոփոխությունը: Հիմա շենք կարող հիշել, թե ի՞նչ էր այդ «փոքր փոփոխությունը» և կամ ինչո՞ւ նոտայի շենք տանել թերեն իսթրիված կամ անհալասարակի երգվածք էր, որ այն ժամանակ կարեր շենք նկանել վերեկ քնքուշ պատասիկը լազարուլու համար: Երանի՞ թե զրի առած լինեինինը, որովհետ այս ալվանդական երգերի խնամիւթյունը պապցուցող շաշափելի մի փաստ ևս պիտի ունենայինք, ինչ որ շանացել ենք ուշագրության հանձնել վերնի մնար ընդհանուր բացա-

տրություններով:

Այս երգը ամենի շուտ պարերգ է, որ սակայն, հարմար ենք տեսնում հարսանեկան շարքին կապել, քանի որ խոսքերի պարունակությունը վերաբերում է հարսի ձեռք համբարելու ժամանակին:

Նշմարելի է, անշուշտ, թե այս պատասիկը հարսնարների կողմից երգված մի պարա-

խաղ է: Խոսքերի երգիծական բնույթը, ինչպես նաև շարադրական ռձը նկատի ունենալու, կարելի է նաև այն ավելի բարբաժն համարել, քան թե ավանդական: ՄԵՆՔ, այնուամենայնիվ, թե՛ խոսքի առաջին տողը՝ «Էլլամ կայնիմ, կապան հազեիմ», և թե՛ մանավանդ եղանակի եկէջային ռճը նկատի ունենալով, շուրջցինք զատել այդ երգը հարսանեկան շարից, գրեթե ապահով լինելով, թե երգն ունեցել է ավանդական խոսքեր, որոնք մինչեւ հիմա էլ պետք է որ պահպանված լինեն: Յավալի է, որ միայն այս փոքրիկ պատառիկն ենք ձեռքի տակ ունեցեն:

Թալով երգիծական կ ծաղրական հանդամանքին, պետք է ենթադրել, թե այս մասն էլ կունենար իր շարունակական պատկերը, պարագայական անմիջական զվարիթու ու հեգական ակնարկություններով:

### 16. Մեր տան էտին ծառ սալորի.

Ծորոր պար է, երգվում է հարսանյաց տանը, երբ կահայք առանձին հավաքված են և հարսին պարի են հանում:

Այս երգի խոսքերը թեև հատակոտոր են, բայց կարելի է տեսնել, թե հարսի զովք է, մեկ կողմից՝ նրան ուրախացնող, մյուս կողմից էլ՝ հարսնության խորհրդավորությունը արտահայտող:

Հարց ու պատասխանի ձևով կառուցված այս փոքրիկ կտորը, սակայն, հիշեցնում է անտունիների շարադրական ռճը: Աւշադիր հետաքննությամբ կարելի է ամբողջությունը անտունիի մի պատառիկ համարել, հակառակ առերկությ շափական զանազանության: Իրենց հերթին, հարս լինելու խորհրդին զուգորդված պատկերները՝ ծառ, ծաղիկ, շոր, սափոր, ոսկի, արծաթ, տոն և այլն, հիշեցնում են բնագանակորության, փթթումի, պաղաքերթյան շուրջ հյուսված հնավանդ հավատալիքների և ծիսական սովորությունների:

### ԱԼԵՏԻՍԻՄՆԵՐ, ԲԱԲԵԿԻՆԴԱՅՆԻ ԵՎ ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

#### 17. Ասօր տոն է սուրբ ծննդյան.

#### 19. Սառ մի կանչեր.

Ավետիսների շարբը առավելապես կապված է հին ավանդական սովորությներին: Կյանքի սկզբնավորության խորհրդի հետ կապված տօներ կատարվել են թե հեթանոսական և թե քրիստոնեական զանազան ծեսերով: Մասնավորապես Կատանդի, նոր տարվա ավանդության զարարապի համարեր կրող այս ավետիսները շաղկապված են նաև «Կենաց ծառի» խորհրդին, որ ձեմանոսական և քրիստոնեական ծեսերի մեջ ի հայտ է զալիս Վահագնի կամ Քրիստու ծննդյան միստիկ պատկերացումով: Ժողովրդական հոգեբանությունը կենաց ծառի ամենապարզ հասկացողությամբ պատկերացրել է հարսի ու փեսայի ծաղկելը:

Այս հասկացողության բերումով ժողովրդական ավետիսները հին թե նոր ծեսերի եկեղեցուց դուրս կամ ներս արարողությունների շարք հյուսված կես-համբիսական, կեսուրախական, կենսախինդ ու զվարձալիք արտահայտություններ են: Այսպես, Սննդյան տոնի Ավետիս երգի նմանությամբ, հին զարերից սկսած, ավանդական տաղերը, հարսանեկան զովքերը, նաև մեծերի կամ երեխաների ծննդյան տոնակատարությունները՝ բոլորն էլ ավանդական վարքը ու բարքի ու կենցաղի ապրող հետքերն են:

Ավետիսների գրավոր թե բերանացի բանահյուսությունը բարերախտաբար աղքատ չ այս ուղղությամբ: Բուունիայի շրջան էլ, ինչպես ուրիշ հայաշատ վայրեր, կաղանդի

Ա նման սովորությունները պահել են միշտ: Ցավում ենք, որ մեր հավաքածուի մեջ աւս երգերի խոսքերից հաղիվ մի քանի պատառիկներ ենք նշանակել, նույնիսկ երբեմն կիսատու շերքի տակ չունենք հմտմա, բայց կարծում ենք, թե Պոլսու «Բյուրակին» ազգագրական թիրթի մեջ այս շրջանի սովորությունների, ինչպես Կաղանգի և այլն, շորոշ ուսումնասիրություններ կայիի: Ցավում ենք, որ եղանակները հավաքելու մեր հերի ընթացքում խոսքերը հավաքելու մեջ դանագաղի ենք:

Թեև մեր հավաքած եղանակներն էլ թվով շատ չեն, սակայն, կարծում ենք, որ ընդհանուր գաղափար կտան այս երգերի մասին:

Երեք եղանակներն էլ որոշ կաղապարի շորքուն են պատվում: Առաջին երկուս՝ Ա 17 և 18-ը, ժամանացության ժամանակ երգված ավետիսների եղանակի նույնիսկ նմանությունը կարելի է համարել, մինույն ժամանակ նշելի է նրանց վերջագրությունների զանազանությունը՝ մեկը սոլ և մյուսը լա: Նկատելի է եղանակի հանդարտ, բայց զնայուն ընթացքը, եկեղեցական երգի ծանրությունը այստեղ թօթնացված է ժողովրդական երգի շարժունակությամբ:

Իսկ Ա 19 ավետիսը, հակառակ խոսքերի ժամանական՝ «Սառ մի կանչեր, ծառ մի կանչեր», իր եղանակի ոճով մեզ կապում է ուղղակի մեր ժողովրդական երգերի ոիթմին, որ ոչ միայն զնայուն է, այլև շորորուն ու պարագին:

20, 21, 22. Աս տարի, և Մշո ու Վանի տարբերակները.

Աշավասիկ մի երգ, որ հետաքրքրական է զանազան տեսանկյուններից:

Անաշին, շարագրական ոճը, որ հազվագեց է ժողովրդական երգերի մեջ:

Մուշի «Գացակ» տեսեր ո՞վ է կերեր զէծա և վանա «Եներ տեսեր վի՞րն է կիրն զէծա երգերի ամենամոտիկ մի շարագրություն, որ իր կառուցվածքով հիշեցնում է նաև ձեռագրերի մեջ զոտնող «Տաղ ուրախուրյան ի վերա ծովու և նավից խորագրված երգերը:

Մի քանի ուշագրավ համեմատություններ.

Զենագրերում.—

Աշա տեսեր, լ՛ ի՞նչ կա ծովին,

Որ նազն ուռամբ զա:

Մշո տարբերակում.—

Գացեր տեսեր ո՞վ է կերեր զէծա:

Վանա տարբերակում.—

Եներ տեսեր վի՞րն է կիրի մեր թյուփ:

Մեր տարբերակում.—

Էրթանը նեյինը զուշը ի՞նչը կերեր է:

Գործողության հարաբերագությունը.

Զենագրերում...

Վեմն ի նավին,

Նավն ի ծովին,

Սովն Հարեւուն մանր ավաղին,

Խազա՞-, ծիա՞-,

Ի ալին զալին տա՞...:

Մշո տարբերակում...

Գեղն ի զէծուն,

Զէծն ըզ տըկուն,  
 Տիկ դարենուն:  
 Հալալ է, Գրմո, հալալ է:  
 Հալալ է, Ջամո, հալալ է:  
 Վանա տարբերակում...  
 Ուն էր թըփուն,  
 Բուփն էր իդուն,  
 Էդ Վարագա  
 Տակն ակույշաւ:  
 Ինչ որ ասես,  
 Վըբն կույզաւ:  
 Հալալ էր, Ջամո, էր...  
 Մեր տարբերակում...

Կրկնակները գործածելու նմանությունն ու այլաղանությունը.  
 Ջեազգերում.

ԱՇա ցնծա ծովն ու ծփա՞,  
 Ալին զալին տա՞,  
 Ծովն հարեռն մանր ավաղին,  
 Խաղա՞,  
 'Ի ալին զալին տա՞:

Մշտ տարբերակում.  
 Հալալ է, Գրմո, հալալ է,  
 Հալալ է, Ջամո, հալալ է:  
 Վանա տարբերակում.

Հալալ էր, ջալալ էր,  
 Ի՞նչ բարի տարի մ'էր հասանք,  
 Կ՞ո՞ վելո՞ մե՞,  
 Կ՞ո՞ վելո՞ մե՞:

Մեր տարբերակում.—  
 —Աս տարի, տարի,  
 Գալ տարի, տարի.  
 —Աս տարի, տարի,  
 Գալ տարի՝ բարի:  
 Երկրորդ. երաժշտությունը:

1640 թ. ձեռագրում երգին կցված է օրինակողի տված հետևյալ ծանոթությունը.  
 «Անշունչ պիտի որ ասեն զայտան մեծ տներս. և պարի ձայն է»: Ուրեմն, այս երգին երգվում է արտասանվում էին պարելով: Բարեբախտաբար, եղանակի շատ տարբերակներ գրի են առնված Հայտառանի զանազան վայրերում: Հնագողական լինելու համար վերը զետեղել ենք երկու՝ Մշտ և վանա տարբերակների եղանակները, որ մենք ենք ձայնա-

<sup>1</sup> Տե՛ս Ս. Մնացականյան, Հայկական միջնադարյան երգեր, Երևան, 1952, էջ 535:

գրել (Ն 22 ա և բ): «Տերը երակների շարադրական ոճի նույնանմանությունը աշքառու է նաև երաժշտության լազի և մասնավորապես ոփթիքի մեջ: Եղանակալին հավելումները կամ փոփոխությունները հարմարեցված են խոսքերի կառուցվածքին բայց բարախանչչուր տարրերակի:

Երբեմն պարի կամ խազի պարագան.

Թե ձեռագրերի «Տաղ որսախոյթյան խաղու»-ն ինչպես էին խաղում կամ «պարի ձայնոյ» ինչպես էին պարում՝ զժվար է ասել: Այնուամենաւիվ, թվում է, սխալված շնորհ լինի, եթե պատկերացներ, թե այս «որսախոյթյան» հանդիսությունները, որ քիստունեական զգեստովորումներով են ներկայանում, ավելի շուտ հախաբրիստոնեական հին-հին հավատալիքների և ավանդական զիցարախական էպոսների շառավիզներ են, որ ծողովդի բարերի մեջ գոյատենել են մինչև մեր օրերը»:

Մեզ հասած տեստերի և եղանակների շարադրական ձեռվորումը առիթ է տալիս ենթադրելու, թե զես միշտն զարերում ուրախության հանդիսությունների ժամանակ կատարված լոկ երգ կամ պար չէր, այլ թերևն մի տեսակ ներկայացում, մնչկատակային խարակություն, երգի, պարի, խազի ու արագախոսության մեջ տեսակ մրցում թերևն, ինչպես ապօնմ է, «Անշունչ զիտիք, որ ասեն զայրաբն մեծ տներու»: Այս պատկերացումն աննեալու մզգած ենք հասած եղանակների մեջ նշամրզող հետեւալ կետերը նկատի առնելով.

1. Բացում. հանդիսավոր, ծանր ու հանդարտ, ծողովդրական պարի ինքնահատուկ սիմոնի ու շեշտով՝ երկուակ լայն չափով, որի կշիռը 6/8-ի աղատ շեշտավորությունը ունի:

2. Աստիճանական ընդլացնամ. Հարց ու պատասխան ձեռվ՝ հարազրական ալիքավոր շղթայավորում, ալիքների կուտակում, պոսթիում ու ծավալում, բարձրացում և անկում, շիշասում: Հեր և աստիճանական անդամակիցն և ... հանդարտություն:

3. Լուծում հարցմունքային համարյացի և կերպարձ պարի ու խազի հաստատուն կշռավորության՝ իրեն վերցագրություն: Օրինակ, ձեռագրերի վերցագրությունն այլպես է:

Կամ՝	հաղա՛, ծփա՛, ՚ի ալին զալին տա՛:
Կամ՝	Ա՛յ ծփա՛յը ծովին, Ցնծա՞յլ ծովին, ՚ի ալին զալին տա՞յը:
Կամ՝	Զալալ է, Կրմո, Հալալ է, Հալալ է, Համո, Հալալ է: Հալալ էր, շալալ էր, Ի՞նչ բարի տարի մ'էր հասանք, Կ՞ո զիյը մէ, Կ՞ո զիյը մէ:
	— Աս տարի՝ տարի, Գալ տարի՝ տարի. Աս տարի՝ տարի, Գալ տարի՝ բարի:

Իսկ այս շրշանի մեջ պահած զուշ, ցորենի հավելվածական պատկերը բերքի ու բարիքի դավերգություն կարելի է նկատել:

— Աս տարի՝ տարի,

Գալ տարի՝ տարի.

Աս տարի՝ տարի,

Գալ տարի՝ բարի:

Մեր զրի առած տերութի կառուցվածքի մեջ շփոթություններ և նստանալություններ, նմանակնես եղանակինքի ձայնագրության մեջ շափական թերություններ կան, ինչ որ զյուրավի կարելի էր կարգավորել: Ասկայն, մենք հարցար պահեր պահել ամեն ինչ այնպէս, ինչպես երգի է մեզ, որպեսզի հավաքածուն ստունասիբացներ էլ առիթը ունենան այս պատասխների վրա նստած փոշինները իրենց ձեռքերով շոշափեն:

#### ՊԱՆԳԻՆԻ ԵՐԳԵՐ ԵՎ ՌԴՐԵՐ

23. Ալլարա ի բախնան.
24. Յակիմ, յակիմ.
25. Ալլարա Բատամբոլ բաղար.
26. Յակեմ, յակեմ:

Այս երգերն անտունիի փշրանքներ են:

Անտունիների վերաբերմամբ, բարերախտաբար, թե՛ ազգագրական և թե՛ բանասիրական ստվար գրականություն կա: Միսած միջնապարբան ձեռագրերի մեջ պահված տաղերից մինչև XIX դարի վերջերին հավաքված բանավոր նյութերը, բարերախտակի առիթ են եղել, որ գրականագիտները բացառիկ ուշագրությամբ զրագվեն սրանցով և ըստ պարանակության, ի բայ քերպութական ինքնաշատառ ոճի: Այժմ ընդունված է այս զրափոր ու անդիբ նշանաները կոչել նաև հաւենենեւ, հայրենի կարգով երգեր և այլն: Մենք ավելացր ենք նկատում, որքեն, այս մասին խոսել, բանի որ ուշագրի մնալըցան արգեն ձանութ է հրատարակիված գրականությանց Միայն թե ներելի թուզ համարի անցողակիրեն ավելացնելու, թե այս տաղերը գրովն էլ հակամեա է համաձայնելու նրանց, ովքեր նշունած են այս անտունի կազմած տաղերի խոր նույթանը և իրավամբ մերում են բարակնոնիցից համարակալիքների համարակալիքներուն: Խահապեակի թուշակի հնարակալիքներուն: Թուշակից ննիցան ննականից առաջ խօս զբանություն անեցնու և մինչև մեր օրերը, յուղորդիքի բերանում պահված, մասնավորապես Ալենա քշշանի հայ-հոռոմ զուղորդիք մեջ պահված բազմապան հատրնտիր օրինակները բազմատեղով զարեր ու զարեր առաջ արձանագրված ձեռագիր օրինակների հետ, կարենի է եղարակացնել, թե այս անտունիները հնագույն շրջանների հագներգության ամբողջականությունից մնացան հատվածներ են:

Թե այսպիսի հագներգության հեղինակը ո՞վ է, գդվար է առել, ինչպես զդվար է առել նույնիսկ, թե Հոմերոս է եղել հեղինակը համական ձանութ հագներգության: Բայց, եթե նույնիսկ ընդունենք, թե այս անտունիները ժողովրդական պատմվածքներ կամ երգեր են եղել ի սկզբանե, զդվար է շասել, թե գարեր ու զարեր առաջ շեն եղել պրանք զամապորդ, կարգավորող նույնիսկ և մշակող մեկ կամ մի քանի համեմարդ զամաներ, ինչպիսիք համարվում են Հոմերոսը կամ Ֆիրուզին հուն և պարսիկ բանահյուսության մեջ:

Արդ, ընդունելով համահավաք սաստինասիբության ստիպոզական պահանջ, թվում է մեզ, թե այս կնճռու ու զժվարին հարցի լուծման մեջ կարենոր բանակի կարող է լինել անտունիների երգվածքը Այս ուղղությամբ, զժրախտաբար, մինչև այժմ եղած նյութերը շատ թիւ ու ցրիւ են, ինչպես Կոմիտաս վարդապետի ձախնարգած Ակնա շրջանի մի քանի կտորները: Եթե համեմատական ստումնասիբության համար նկատի ունենանք նաև Սաստինից Փափիթ կպասի որդամիները, ինչպես Մոկաց Միքայիլ նման զուցազնավիճակիք ափսուները և Կարսո խաչի, Նարեկացու կամ ամունքային ոճով որ, Կարապետի վրա հյուսված տաղերի ձախնարգված մի քանի նմուշները, զարձաւ կտեսնենք, թե անտունիների երաժշտական աղբյուրները նրանց բանահյուսական հարուստ ժառանգության բազմատմամբ անհամեմատորեն թիւ են:

Այս իսկ պատճառով, տարիներ առաջ մեր թափառումների ընթացքում բութանիացի ժայրիկների յախմ-յախմերը լսած ժամանակ մեր զգացած ակդուսա ուրախությունը ռացառության կարիք չուներ: Նախան ի՞նչ գիտենային, թէ իրենց աղացած աձարը, պուրագը, հին-հին օրերի շազով թրչված հատիկներ են: Եվ զարմանալին այն է, որ այս համբկները պահված պիտի լինեն այս 300—400 տարիա զաղաթի առօրյա սովորական աշխատանքին հատուկ պուրագը ազգաւոր երգի մեջ:

Առաջին երկու երգի լազային հիմքը զրեթի նույնն է: Հիմնական սանդաշարն է Աս, ոև, մի՛ հետեւալ տարբերությամբ: Առաջին տարբերակը ող ձայնը գործածել է իրեն միշտակալ հանգստի ձայն, երկրորդ տարբերակը ող շունի, բարձրացված դո՞ն մելիզմի հետոն է՛ Երրորդ տարբերակը դո, ուն, մի՛ ելեէջ է միայն օստաղործում՝ ող վերջավոր բությամբ կարծես մակախ պահնելով մեղեգին: Զարորոք տարբերակը մի, Աս, սի, ոև, սանդաշարի մի՞ն զործածելով իրեն հիմնադայն, քառունակյին անսպասելի շրջադարձության է կատարում, ցույց տարով միայն քառունակի առաջին և շորորդ ձայնների հետափորությունը, մի-ից Աս և մեղեգին հյուսելով երկրորդ քառունակի շուրջ որտես ունեցած պահի մեջ ի հայտ եկող բագրին ձայնները իրեն զարդ Այս նույնենքը ցույց են տարիս ժողովրդի մեջ ի հայտ եկող բագրին ձայնները իրեն զարդ Այս նույնենքը ցույց են տարիս ժողովրդի մեջ ի հայտ եկող բագրին ձայնները:

Իրեն ենիստ մենք այսուեղ երեկ ենք միայն մեզ երգաված հատվածները, նկատի շառանկով նրանց մեջ նշմարվող շափական մի քանի վրապումները: Այս պատապիկները, նույնությամբ կամ փորբ փոփոխություններով, գտնվում են ինչպես միջնադարյան ձեռագրերում, այլ մանավանդ հայրենի բնագավառի զանազան վայրերից հավաքված անտունիների հրատարակված հավաքածուների մեջ: Այս մասին պիտի անդրազանանք մեր համբածուի հաշորդ հստարությունը, մասնավորապես Ակնա շրջանից մեր զրի առած երգերը հրատարակելու:

## 27. Օդաներ և շիներ.

28. Քանի չի լամ.

29. Փշ', նովիկ, փշ'.

Նկատի ունենալով տեսարի ընդհանուր պարունակությունը, մեզ թվամ է թի սրանք հնագույն նույնենքը են: Այսպիսի երգերը հայրենիքց աստանդական եղած և աշխարհի շուր անկյունները պատասխան ժողովրդի հոգեկան հառաջանքը լինելով հանգերձ, տարիս են նաև հին օրերի բարբի որ կանքի պատերը:

Առաջին երկու երգերը նույն վայրից՝ Մեծ նոր գյուղից են: № 27-ի երգովը՝ Հոգհաննես Թորիկանը համեմատաբար նոր սերնդի մի ուսումնական է, № 28-ի երգովը՝ Սամա Քեմիրյանը արգեն ծովաների տեր մամեկի, որի երգավածքը առանձնապես աշքի էր զնինում նորությամբ ու զեղանյութավամբ (տե՛ս նաև № 37 երգի ծանմթագրությունը), մանավանդ, որ իր երգած քայլակի խոսքերն էլ առանձնապես մզում էին հոգեկան հուզումի դաշտը բանալու: № 29 երգի եղանակն ու խոսքերը տվողը տեղացի մի կողոք բիրանից է լսել այդ բոլորը:

Երեքն էլ համարում ենք թանկագին նույնենքը, ուր տեսնվում է եղանակի և խոսքի ամենակատարյալ ներդաշնակությունն: № 27-ը ամենահին և ամենաշատ տարածված լազերից մեկով է զրված: Ուշագրության արժանի է վերջավորության մեջ Աս հիմնածայնի փոխարհն սի ձայնի վրա եղանակի առկաի միաւուր, որ ալնքան ուժին կերպով ի հայտ է բերում տառապող սրտի մորմորը: № 28-ի եղանակն էլ մեր թի՛ աշխարհիկի, թի՛

Հոգեսոր երածշտության մեջ երեացած հին լազարին ելեկչներից մեկն ունի: Այստեղ նկատելի է լազի ձայնածավալիք գեղի լոթնակ ընդարձակումը, որ զշալիորեն հուզական թարմություն է տալիս հղանակին:

Առաջին երկու երգի մեջ մեղ մեղ արված խոսքերը ցալվալիորեն թիշ են, մեկական քառյակ միայն: Այդպիսի երգերի պարունակության մասին ավելի ջնդարձակ պատկերացում տալու նպատակով ստորև համերգածարար զետեղում ենք նույնըքան հնություն բարդ բառ-լազիների «Ողբ և զովք» շարքը: Այս բառյակներին ևս պետք է զիտել որպես մասնաւուած ու զեռ շմուացված մի հավաքածո, ուր մարգարային կյանքի օրիրի հետ կապված հոգեսարսուա երեսնիթերը՝ աղջակե հարս զառնալը, պատանյակի փեսայնալը, մանկան ձնուազը, հոր պանդուսի զնալը, հարսի սիրատաչոր կարուն ու կոկիծը, մոր տառապանքը, սիրելիների անգանալի կորստի ողըն ու կոծը պատկերանում են իրենց բյուրազանթիթուածուներով:

Հոգեկան ապրումների այս մեղնդմեջ շաղկապումը կատարված ու կատարվում է համեստ և անզրագետ, բայց սաեղազործական շունչ ունեցող անանուն անձանց կողմից, ամենարնական ճամփող, զրիթ ընազգործն:

Գիտեի է, թե այս շարագրությունները ընդհանրապես արտասանվում են ուիթմական նրբությամբ, թիվ ասելու կամ թիվ կարգալու ոճով, և երբեմն, մեղնդմեջ, երգվում եղանակների որոշակի ձեռքով կամ մոտավոր հարմարեցումներով:

(Պարտիզակ-Աղարազար,  
ՈՂԲ ԵՎ, ԳՐՎ.Ք Հաջի Մարիամի հիշածներից)

Ես օր մեռնիմ, մարիյ, փոսը խորոնկ փորեցեք,  
Իմ քաշած չարշարանքը (կամ զերգերը) վըրաս զրեցեք:

Խարիբության բանը, մարիյ, յաման զըժար է,  
Աշխարհը լուս արե, մեղի սուման է:

5 Մի՛ լար, մարիկ, մի՛ լար, աշկոմքը կավրի,  
Աշքըդ օր ավրի՛ աբնակըդ (օշաբնդ) կը մարի:

Մ՛ե՛րթար, օզուկ, մ՛ե՛րթար, միննակ կը մընանք,  
Կերթառա ալ շես ի գար, կարուս կը մընանք:

Մի՛ լար, մարիկ, մի՛ լար, ես կենք կու զամ,  
Ասկե տառնընինք օրին էրազը կու զամ:

— Օզուկ, էրազով կարուս շառնըվիր,  
Էրկիրմով ալ մուրաս շառնըվիր:

Մի՛ լար, մարիկ, մի՛ լար զուն ընծի համար,  
Ինչո՞ւ աշխար բերիր, մեռնելո՞ւ համար:

15 Վերտիվնենի վար իշնամ նե՞ էտենս նելք,  
Քըռնեն ա զուրս էլլամ նե՞ ըմուտըդ կըցը:

Սրտերով եմ ցաներ վարդ ու ըռահան,  
Ղըշմաթլուս իմ զըրկեր մորկանն արմբզան:

էկո՞ր, օզուկ, էկո՞ր, քովկես նըստե,  
20 Կուշտիդ տեսինմելովը (մարյացովը) քըրտինքըդ սըրբե:

- Իմ յավրուիս հողը չի վայեր,  
 կաթերը պողը չի վայեր:  
 Մարի'կ, էմենը կերեք խըմեցեք,  
 իմ տեղիկը ա խոռ թողոցեք (պոշ պահցեք),  
 25 Գերեզմանին ճամբան քարոտ է, քարոտ,  
 Մենք ա մեր յավրուն կարոտ ենք, կարոտ:  
 Ասօր կիրամուտ է, էլի տո'ւն էկու,  
 Խաս լաթերըդ հազի, ժամեն տո'ւն էկու:  
 Իմ յավրուիս փեշերը հովը կը տանի,  
 30 Մարիկը կարսոցեք է, քովը կը տանի  
 Օրը (էթիմը) ուր էրթա նե՛ դուռը կը դոցին,  
 Տիկիմ մը հա կուտահ սիրար կը խոցին  
 էմմեն օր, էմմեն օր մենը ինք մընավոր,  
 Սև աշխարքին մեշը՝ մենք ինք մնավոր:  
 35 Գերեզմանը խաս է, տեշի, զոմեցին,  
 էմմենը տուն էկան, բեկ հոն (հոս) թողոցին  
 Պաղչայիս հողերը յայրըմիշ էկալ,  
 Իմ յավրուիս յովան տակըմիշ էկավ,  
 Արեք մարը մտավ,  
 40 Մըրտիկը գոյ մը մտավ.  
 Էլի վեր, օղո՞ւ, էլի վեր,  
 էկանը էրթանք տուն ի վեր,  
 5 Աշկոնք-աշքունք Բարբար ունի նաև աշլեր, աշլի ձեռքը  
 7 Օգուլ—բարբարի մեջ օղուլը զործածվում է առավելապես իրեն բացականչություն և  
 ձայխական ու շշտական ամենափոքրիկ նրբությունների միջոցով արտահայտ-  
 չական պիստակն առյունը է սասանում՝ փաղաքանք, զարմանք, վախ ու սար-  
 սուն, որպահովյան, ցավ ու կսկիծ և ալին թրը, օղուլ կամ օղլաճ-տղա,  
 հազիվ պատահար է զործածվում: Բարբարի հմինական բառերից մենք է,  
 որ ինք երեք թրը. օղուլ բանից է սկիզբ տոել, այլև այդ իմաստը կորցրած և  
 բոլորովին նոր, հայեցի հշանակություն է սասացի:  
 15 Վերտիվն. նաև՝ մերտիվն և ներտիվն—հայացած բառ՝ սանդուզ և սանդղամատ:  
 18 Հըյմաթլու (արար. և թրթ.)—թանկազին, անդին:  
 20 Տեսթեն. նաև՝ մարմա, ալլ տեկ՝ մայմանի—պարսկերենից և արարերենից մնացած  
 հին բաներ, որ մենախիլ էլ են ասվում—թաշկինակի տեսակներ:  
 22 Պող—հազուսանեղնը ծրաբելու հատուկ կտոր (լաթ.), պողչա էլ է ասվում: Հաճախ  
 միասին են զործածվում՝ պող ու պողչա ձեռվ:  
 24 Խոս, պոշ—բաց և պարագ իմաստով:  
 31 Օրը—որը, որը արտասանվում է օրը:  
 էթիմ. եթիմ (թրթ.)—որը:  
 Երթա նե—որ երթա, գնա: Որ երթ, թե որ նշանակությամբ: Այս ոճը շատ հասարա-

- կաց է գրեթե բոլոր գալառների մեջ էլ, նե-ն միշնագարյան նա մասնիկն է, որ գործածվում է նույնիսկ արդի արևմտյան հայ խոսակցական լեզվի մեջ:
- 32 Տելիմ-շատ ընդհանրացած բառ՝ պատառ, կտոր, մաս-մաս կտրված և զանազան այլ իմաստներով, ըստ պատշաճի:
- 35 Խաս—անարատ, մաքուր, ճշմարիտ: Հակառակն է՝ խամ, արատավոր, չհասած:
- Տելի-թերևս թուրքերներց առնված և մի կերպ լուրացված ուժաբանություն, որ տակալին զանազան բարբառների մեջ իրեն բացարձական միջոց է գործածվում, ասելով, լինելու համար:
- 37 Յալլըմիշ է զալ-բարձածվեց, ծովեց և այլն:
- 38 Տաղըմիշ եղավ-ցրվեց, սփոռվեց, ցիրոցան եղավ Օտար բառերը գործածելով, բարբառնին հարմարեցնելու և լուրացնելու հնարքքի մի պարագան է սա, որ Երվարանների կողմից պետք է բացարձած լինի անշուշտ:
- 39—42 Այս բառյակը պահում ենք շարքի մեջ, հակառակ շափական անհամեմատության և անկանոնության, շարպարության և իմաստի համանմանության պատճառով:

### 30, 31. Կոռոնկ.

«Կոռոնկ» երգը իր եղանակալին բոլոր ատրբերակներով, որքան մենք կարողացել ենք հավաքել, պիտի զետեղվի մեր «Ազգային երգարան»-ների մեջ տպագրված ենք տեսնում «Կոռոնկ»-ի խոսքերը միայն, առավել կամ նվազ կրնատուներով: Խոկ նոտագրված եղանակները, բացի կոմիտասինից, հազիվ երեք-չորս երգարանների մեջ կարելի է հանդիպել, այն էլ հաճախ աղճատված կամ անիմաստ փոփոխության ենթարկված:

Կոմիտաս վարպետի ձայնագրած և Շահմարտարանի կատարմամբ ձայնապանակի վրա երգված «Կոռոնկ»-ը, որ կարծում իր հուսկ կնիքն է ստացել և հանրածանոթ է աշխարհի ամեն անկյուններում, այդ երգի մի զմայլելի ատրբերակն է, անշուշտ, որ Կոմիտասի շնչով շաղված է և որին ամենափոքր մի հպատ կամ մի նոր զարգարում խորի ու անհանելի է թվում հայ անկնդիրներին:

Մենք համաձայն ենք բոլոր նրանց, ովքեր մերժում են Կոմիտասի դաշնակորած երգի որիէ խաթարում կամ անհոգ խեղաթյուրում: Նույնիսկ, ավելի առաջ զնալով, պիտի շնանգրութենք այս երգը բեմերից լսել իրեն երգիչների կամ երգչունիների կողմից գործածված ինչ-որ մի համար, իրեն ընթացիկ, ամենօրյա երգացանկի նյութ: Այս երգը իր խորունկ բովանդակությամբ պիտի հուղի նախ երգողին, որի համար էական է երաժշտական հիմնական պատրաստություն և աշալրշություն, ապա և ունկնդիրին, որ պետք է այս երգի հայ հաղորդակից գտնան, որպեսզի կարողանա ներշնչվել նրա թովշությունից, որ ուրիշ բան չէ, բայց եթե լուրաբանըուր հայի հոգուց պսսթկացող հուզում է թրթուու:

Այս իդեալական պայմանները, դժբախտաբար, մեր առօրյա կենցաղի պարագրած անմիջական մատանությունների պատճառով, բացասիկ են այցելում մեր հոգիներին: Մեզ թվում է, թե չափական բաժանմունքի լինելու պարտադրություն ունենք այս և այսպիսի երգերի հանգեղ, որովհետեւ սրանք հայ մողովով պարած տառապակու կյանքի ու հավատքի ամենահատկանշական սիմվոլներն են, որ զիմացել են դարերի մաշեցնող հոլովացիթներին:

Թերքն մեր ալս, զուցի ծալրահեղ տևակենաց բաժանողներ լինեն, որոնց հետ վեճելու կամ իրենց համապելու փորձն իսկ ավելորդ ենք նկատում: Մեզ համար զգմար է ու անկարելի: Նորանոր ակնոցներով նայելու այս ժին երգերին, որ թե հին օրերից են զալիս մեզ, բայց միշտ նոր են ու ոգեշնչող, որովհետև սերանողների սրտի զարկերին կապված են սերառորեն:

Գալով, սակայն, այս երգի զանազան արթերակներին, ինչ որ այս № 30 և 31-ի եղանակներն են, պետք է ասենք, որ սրանք երածշտականների համար զարերի մեջ խորանարու և հայ ժողովորդի երածշտական արտահայտությանը, նրբությանը և բազմազանությանը տեղեկանայու անսպաս ազբյուրներ են:

Այս նկատառումով հարմար ենք տեսնում երածշտական մի քանի ամփոփ բացարություններ տալ:

№ 30-ի եղանակում նկատվում է զարդարանքի մի փոքր առատություն, սակայն, զրանք եղանակի լազի պարունակության հետ հաշար զնացոյ զարգեր են, ականջին օտար կամ խորի շնորհ հնացում կարծում ենք, թե այս երգված եղանակը իր լազային կազմությամբ և եղեցային ժողովակալությամբ կարելի է լուսունել իրեն ամենանվազ եղանակ կամ խեղած մի նմաց, որ հայ երածշտությամբ մեջ ծանոթ ԲՇ կոչված ձախային լադին է ժոտանում, ինչ որ թե՛ մեր ժին երկիղեցական և թե՛ աշխարհիկ երգերի մեջ երկան է բնիված, երբ խոր կոկիծ կամ աննկարապերելի ողբերգություն պատկերացնելու հարկ է եղել:

Իսկ № 31-ի եղանակը, որ մեր ամենազգայուն երգադիներից մեկի՝ Հաջի Մարիամի ձախական ամենափափուկ հպումներով է հյուսվել, «Կոռոնկ»-ի ամենապարզ և տփաքր օրինակն ենք նկատել և այս պարագան ուշագրության ենք հանձնում երածշտական վերլուծությաններով զրագովներին:

Խնամում մի բազգաստություն այս սկզբնական պարզ ազգբարի և Կոմիտասի մշակած եղանակի միջն երեան պիտի բրիդ, թե ինչպես նույն և նման լազի շուրջ զարձող եղանակը սկզբ, փոքր եղեցային ծավալի մեջ նույնբան հուզող ու հազեցված կարող է լինել, որքան հագեցված է այդ լազում զեպի վեր և զեղի վար շղթայալորումներով պառթկացող առում, որի ամենազգալի օրինակն է Կոմիտաս վարդապետի «Կոռոնկ»-ը:

### 32. Վուեր ժամանակ միտքը կ'իմներ.

Խոսքերը բազված է երեք անձերից, երեքն էլ իմ լավագույն երգադիներից: Բայց միայն մեկ եղանակ ունենք: Հիմա շնորհ հիշում, բայց արակուսում ենք, թե Բ և Գ ընկարձակ փոփոխակների հաղորդադրությունները որեւէ ձեռվ այլ եղանակի է ծանո՞թ չին, թե՛ ոչ: Այս ժամանին որեւէ ծանոթագրություն էլ չունենք ձեռի տակ: Թե՛ եղանակը և թե՛ խոսքերը նորագույն շրջանի ազգեցալություններ ևն կրում, սակայն, դրանց մեջ որոշակիորեն օգտագործված են ժին ժամանակներից հիշումներմբ պահված տողեր, պատկերներ:

Փոփոխակները, որոնք ընդհանուր կերպով նման շարահարություններ են, տների հետաքրքրական զասավորում ունեն: Անգիր և զրափոր զգորության միջն մի աշքառու զանազանությանն էլ այն է, որ զրափորը իր կանոնավորությած շարահարությունն է ունենում բնդհանրապես, ինչ որ անգիրին հաճախ պահանում է, այսինքն՝ հիշումներմբ վերարտագրված պատմողից պատմող տարրերում է: Այս նկատումով է, որ իրեն նմուշ այդ փոփոխակները զուել ենք առ ի բաղդատություն:

33, 34. Էլլեմ բարսը լեռան քեփեն.

Գրի առնելիս զերնազրել ենք՝ «Հուսահատի մը երդա», զոյց այս պատասխիկի մեջ խտացած անհատական հուզումի սասակությունը բացատրելու համար:

Այս երգը բացառապես տարբերվում է հավաքական երգերի ընդհանուր ֆոնից: Մեզ թվում է, թե այսպիսի բորբոքուն երգերը թերևս անզրագեա, բայց բանասեղծական ներշնչում և հուզում անեցող միամիտ ու թրմունք հոգիների ինքնարտի ստեղծագործություններ, և դրանով իսկ շափականց ոչազբար են նման երգերը, ընդհանրապես, հավաքարար չեն երգլում: Հուսահատական այս խորունի հուզումները պողովում են, երբ մեզը մենակ է կամ մարդիկ ու հազրպահից շրջանակի մեջ է գտնում: Համախի բաց օրամ, մի լուսու զաղաթի կամ ձորերի խորության մեջ են արձագանք զտնում հոգեխոռով, լայնաշոնչ ու հուզումնաշատ այս ձայները:

Զուսանամբ, որ անհատականացած ու լայն մասշարագ երգերն արդեն իւկ զյուրին էլ չէ մտար պահնել և ընդհանրացնենավ հասարակության սեփականությունը զարձնել: Ժողովրդի առօրյա լիշտիք հերթ նրան (ժաղովդին) թույլ չի տախի, ինչպես այսօր, նաև անցյալում, իր պաքաղայիշն կամ պայմանազրական ձևակերպություններից զուր ենեւ: Այս խի պատճաներով նման երգերը շատով կորչելու վտանգի են ենթակա:

Ցավում ենք, որ այս երգի միայն մեկ բառյակն ունենք:

Այս և նախորդ երգի երեք փոփոխակների խոսքերի համեմատությունը ցույց է տախի, թե նույնիսկ նույն վայրի ու նույն մամանակի մեջ ինչպես է փոփոխվում բառյակների շարքը, նաև բառերի ի՞նչ զանազանություն ու հուսաչություն է զրյանամ՝ բառ երգոց անձեռն անհատական հշուղության ու շարարդական շնորհը:

Այս բառյակներից մի բանիք փոքր փոփոխություններով, վերջին նորագույն շրջանի (նախքան աղեար) աղջային երգերի մեջ էլ են զտնում, նահատակների և ներսուների վրա իրեն զովը երգված:

Ինչպես տեսնում ենք, եղանակը երկու անգամ է ձայնազրվել: Երգողը նույն անձն է: Եղանակի ելեցային կառուցքածքն էլ զրեթե նույնանման է, սիմեզ և տմմազ տարբեր են: Սրանք տարբեր ժամանակներում են զրի առնված: Այս օրինակով լավագեն կարող է բացատրել, թե երգը ինչըն սերտ ու անմիշական կատ ունի երգովի տրամադրության հետ: Երգողներից սաման էլ երգը կրկնելիս առավել կամ նվազ զգալի փոփոխություններ են անում խոսքերի մեջ, բայց այնմ փոխվում է նաև եղանակը, ինչ որ անշուշտ հետաբերքը է ինքնին:

35. Ազգասարու նամբան.

36. Մենեմշելի նամբան.

Այս զովերի խոսքերը և, մանականդ եղանակների կառուցվածքը, երբեմն մեծ արվեստով, երբեմն էլ կադալով, զին օրերի բարերով է շննիքած և տեղական զեպրի վրա հարմարեցված: Այսպիս, զեպրերի վայրը լինում է Աղասարու ձամբան, Մենեմշելի ձամբան, Մյուղի ձամբան և ազն: Կարպը առավելապես ողբերգական է, ինչպես եղանակներից էլ պարզ երեսում է: Խոսքերի ընդհանուր շենքը, տաղաչափական կազմությունը, ընթացքը և այլն, մեծ մասամբ բռվանդակությունն իսկ, մեզ ծանոթ հայրենների պատառիկներ են՝ պատշաճեցված զեպրի նկարազությանը:

### 37. Էլի՛, հաջի հայրիկ.

ԱՀավասիկի բացառիկ նշանակություն ունեցող մի ուրբագն այն անվանել է մազրանց, այս բարը զրծածելով մտնելոցի ու լաց իմաստով Յոթանասունամյա Մամա Քեմիրյանը, որ Ամերիկացի Բոստոն քաղաքի հանդիպակաց Հարվարդի համալսարանի մոտերը, մի համեստ տան մեջ իր բնակվում, շրջապատված իր թոռով ու ծառներով, երդեւ է ամերիկ բան տան կրող, բույրի կը այնքա՞ն քնքությալը ու զգախոսաթյամբ: Բայց իմ մոտացել է չեմ կարող մոռանալ այն օրը, երբ իր փորբիկ ծոռնիկին թեհիք տակ առած ա՛յ երգը երգեց: Նախարան արվելիք բացատրությունները, հարմար ենք տեսնում սրանից 35 տարի առաջ այս երգի հետ մեր զրի առած զիտողությունը նայնությամբ օրինակել:

«Մամա Քեմիրյան, արսունին զարձին, 1918-ին, երբ զուզ կը հանդիպի, կը տեսնե շրբ կորմը ամերիկ ու անսեմբլը: Ո՞չ իրենց տունը, ո՞չ շորենական տունը, ո՞չ է ենթադրյին որ տեսնի: Ճանապար համեմ և ձերովի այլուրին տեղեն կը ջանա տուներուն կեր վայրէր զանել: Հույսունին կիրթա գերեզմանատուն ու իր հոր գերեզմանին վրա կողար...»:

Այս հինգ բայուակները, որ անտուում Մամա Քեմիրյանի շարագրածներն են, ժուժկալ և սեղմ կերպով տալիս են նախաճարի անավորության սահմանեցնող պատիկը: Սրանք շարագրված են շատ ավելի հին ողբերի նմանությամբ, երբեն տառացի հնաեղողությամբ, ինչու որ սրջապատ ատարիքուն են տեղական կենցաղին հատուկ ամենօրք խաղորի, ապարքնին, ափհամու հորինածքներից: Այսուղ կան լիապես հուզող տողեր:

Ինչպատճեն շարագրված խոսքերի մեջ նշմարվում են հնաւորոր անցյալի հատուկնետ չեմպիր, նմանապես, այլ մանավանդ, այս խոսքերի վրա երդված եղանակավորումը անմշացած և բուրութին զանապանում է վերշին տարիների պատահարների շորէք որինված տեղական խաղերի խայտարկես ոճերից:

Ռուտեղից որեակ Մամա Քեմիրյանը պիտի ուրար իր կորուսաները, ինչպես որբացել են իր նախաները անհամար ատարիքը առաջ: Ենչշաբան նմանություն կա Հայաշնարհի զանազան վայրերի, մտնավանդ Ակնա շըշանի մեջ երդված ու զես պահմած օրոների և ոզբերի կոկտակ հղանակների հնաւության մեջ:

Միարված շնոր ինի, եթե առներ, թե այս բուրը շարտանակարար զուգորդված են իրար, և այդ զգին ինչ առաջն առնել ենք, մեզ կարող է տանել մինչև պատմության մեջ հիշքած «Լացոյ կաեայբ»-ի ավանդություն: Այս երգերի առանձնակի ոճը հարատեղ է և ավանդական ծեսների խորհրդավորության հնաենակոր լոկ նվազագույն աղավազումների է հնիտարկել:

Ահավասիկ բացառական ուսումնասիրության հրապուրի մի նյութ, որ բազմապիսի սրունամների է կարու, որի մեջ այսպես կամ այնպես խորսնալով, զուցե կարելի լինի զանել փորբիկ մի արածետ, որ մեզ կարող է տանել հարյուրավոր, թերես հազարավոր տարիների տեղաշարժերի ընթացքում զիգզակ հողածածկ բլուրների մոտ: Բլուրները լիզու չունեն, բայց կխոսնեն: Միայն թե պնտը է փորձել Բլուրները վառվում են փորելու խնմիությամբ տառապոների բանի ու բրիչ ձայնի լսելու կարուտով:

### 38. Օխոտը չորին առիր.

